



# *ԱՂՍՏ ՕՐ*

*Բ Ա Յ Ա Ռ Ի Կ*

*2012*

# Թրքական ժխարողականությունը պարծելու Ֆրանսայի օրինակելի խաղապահանջությունը

**Տ**արեփակի եւ տարեմուտի առիթով մեր ապրած ժամանակին ազգային-քաղաքական հաշուեյարդարը կատարելու աւանդութեամբ՝ կարելի է ամենայն վստահութեամբ հաստատել, որ 2011ի տարեվերջն ու 2012ի սկզբնաւորումը յատկանշուեցան Ֆրանսայի Ազգային Ժողովին կողմէ Հայոց Տեղասպանութեան ժխտումը քրեականացնող օրինագիծի որդեգրումով, նոր հանգրուան մը թեւակոխելու պատմական հնարաւորութիւնը, իրաւատիրական գիտակցութիւնը եւ պահանջատերի գոհունակութիւնը ընձեռելով համայն հայութեան:

Հայ Դատի պահանջատիրութեան ճանապարհին՝ 2012ը փայլուն ու նշանակալից յաղթանակով մը հունաւորեց իր բացած նոր տարեշրջանը: Թուրքիան խուճապի մատնած օրինագիծին վաւերացումն էր այդ Ֆրանսայի խորհրդարանին կողմէ, որ Եւրոպայի մէջ հայկական պահանջատիրութեան շատ բարձր ցուցանիշ մը արձանագրեց:

Նուազ կարելոր պիտի չսեպենք, անցեալ տարուան ընթացքին, Ամերիկեան Ծերակոյտին կողմէ որդեգրուած եւ Թուրքիոյ պետութեան բռնի սեփականացուցած համայնքապատկան կալուածները իրենց օրինական տէրերուն վերադարձնելու մասին բանաձեւը, որ Հայաստանութեան քաղաքական մեծ հատուցման ուղղութեամբ նետուած նախաքայլ մը նկատելու զօրաւոր մղումը կը ստեղծէ մեր մէջ: Հաշուեյարդարի երրորդ կարելոր դրական ձեռքբերումը պիտի նկատենք՝ նոյնի՛նքն թրքական ընկերութեան մէջ այլեւս բարձրաձայն լսուող ձայները, որոնք սեփական պատմութիւնը ընդունելու բռն կոչերով հանդէս կուզան եւ, Հրանդ Տինքի ոճրասպանութեան 5-րդ տարելիցին առիթով, կը շարունակեն զանգուածագային ցոյցեր կատարել, հանդուրժողականութեան եւ մարդկային իրաւանց ու արդարութեան վրայ հիմնուած թրքական նոր հասարակութեան մը կազմաւորումը պահանջելով:

Հայութեան պահանջատիրական պայքարին թարմ շունչ տուող այս ձեռքբերումները



Կ'արձանագրուին այնպիսի պահու մը, երբ Թուրքիա՝ կոյր ու խուլ ձեւանալով՝ կը փորձէ անգամ մը եւս պղտորել ջուրերը, Հայաստանը եւ Սփիւռքը իրարու դէմ հանելու փորձեր կը կատարէ եւ, այլեւայլ քայլերու դիմելով, կը փորձէ ազդու դերակատարութիւն ստանձնել միջազգային ընտանիքէն ներս, իր կողքին ունենալով Ատրպէյճանը եւ այս վերջինին կողմէ հնչող ռազմապաշտ սպառնալիքներն ու առօրեայ զինեալ բախումները Արցախի սահմանամերձ շրջաններուն մէջ: Թուրքիա եւ Ատրպէյճան չեն ուզեր ուսանելի դասերը քաղել: Հակասական կեցուածքներով, խուճապային ու ջղագրգիռ քայլերով, խաղը կորսնցուցած ըլլալու իրարանցումով՝ անվերջ... կը հակադարձեն: Ինչպէս շատ դիպուկ ձեւով կը նշէր յունական թերթ մը՝ «Էրտողան համարձակութիւնը չունի «փրկուելու» Հայոց Տեղասպանութեան արատէն: Զօրավարներ կը ձերբակալէ եւ դատախազներու դէմ պայքար կը բանայ, նոյն պահուն սակայն ինքն է, որ կը սնուցանէ Օսմանեան կայսրութեան երազը»: Երբ թրքական ընկերութիւնը հասկնայ, թէ Օսմանեան պետութեան «ժառանգ»իս վերաբերող հարց է Հայոց Տեղասպանութեան ճանաչումը, եւ ոչ թէ թուրք ազգին դէմ բացուած պայքար, կարելոր քայլ մը իրագործուած պիտի ըլլայ՝ Եւրոպական սկզբունքներով ընթանալ ուզող Թուրքիոյ վերափոխման համար: Կը մնայ, նաեւ ու մանաւա՛նդ, որ Թուրքիա հասկնայ, թէ Եւրոպական սկզբունքները - Ֆրանսայի օրինակով եւ հետզհետէ թափ առնող Իրաւունքի եւ Արդարութեան ծառայող նոր նախաձեռնութիւններով - երբեք պիտի չհանդուրժեն, պիտի չհամակերպին եւ օրէնքով պատժելի պիտի դարձնեն ժխտողականութիւնն ու մարդկային եւ ազգային իրաւունքներու ոտնահարումը:



Հայաստանը  
դուրեւ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱԽԱՑՄԱՆ 20-ԱՄԵԱԿԻ ԱՐԺԵՒՐՈՒՄ

Առաջնորդուելով փորձաքարերու յաղթահարման 20-ամեայ դժուարին ուղիէն, 2011ի մէջ առիթը ունեցանք նշելու յոբելեանը Հայաստանի վերանկախացման քսանամեակին: Երկու տասնամեակ առաջ, բռնատիրութեան կապանքները թօթափած հայութիւնը վերահաստատեց ազատ, անկախ ու ազգային պետականութեամբ ապրելու իր իրաւունքը: Հայոց պետականութեան վերահաստատման ճամբով, ազգովին արձանագրեցինք յաղթանակի հպարտառիթ իրագործումներ՝ որպէս գլխաւոր նուաճում ունենալով՝ Արցախեան ճակատին վրայ արձանագրուած փառահեղ յաղթանակը եւ բռնագրաւեալ մեր հողերու ազատագրումը: Միաժամանակ՝ հայոց բանակի վերակերտումն ու վերընձիւղումը, բանակ՝ որ իր մարտունակութեամբ եւ ռազմական պատրաստուածութեամբ, այսօր կարողութիւնը ունի սանձազերծելու յարձակողապաշտ որեւէ կողմի ոտնձգութիւնները:

20-ամեայ իրագործումներու արժեւորումը կատարելու գործին մէջ պէտք է նշել փայլուն եւ նուազ փայլուն գլխաւոր կէտերը: Դեռ գործ կայ տարուելիք նոյն այդ ազատագրուած հողատարածքներու վերաբնակեցման ուղղութեամբ: Ինչ կը վերաբերի թերացումներուն եւ կամ այն ազգային պարտաւորութիւններուն, որոնց կենսագործման մէջ ընկրկեցանք, ապա առաջին հերթին եւ անպայմանօրէն պէտք է յիշատակել արցախեան յաղթանակին հետ անմիջական աղերս ունեցող ազատագրուած տարածքներու վերաբնակեցման առաքելութեան մէջ արձանագրուած թերացումը: Հայկական զինեալ ուժերու վերահսկողութեան տակ գտնուող այդ տարածքները, հայոց պետականութեան լինելութեան համար աշխարհառազմավարական տեսանկիւնէ խիստ կարեւոր նշանակութիւն ունին: Այդ հողատարածքները վերաբնակեցնելու գործընթացը իր վճռո-

րոշ ներգործութիւնը պիտի ունենայ արցախեան հակամարտութեան գծով դիւանագիտական առճակատման յառաջիկայ հանգրուանին: Ժամանակը ուշ չէ՝ Հայաստանի ու Արցախի ազգային անվտանգութեան գլխաւոր բաղադրիչներէն մէկը հանդիսացող այս խնդիրը իր բարեյաջող հունին մէջ դնելու:

Այլ գետնի վրայ, նորաստեղծ պետութեան հիմքերը սասանող սպառնալիք է վիթխարի տարողութիւններու հասած հայրենիքէն արտագաղթը, որուն իբր հետեւանք, երկու տասնամեակի ընթացքին երկրէն անդարձ հեռացած է բնակչութեան 30%-ը: Իրողութեան մէջ, արդէն իսկ կը գտնուինք ժողովրդագրական աղէտի մը դէմ յանդիման, եւ հայրենալքման այս յորձանքը եթէ չկասեցուի, հետեւանքը՝ ինքնակամ ազգաջնջումը կրնայ ըլլալ:

Ախտաճանաչումներու շարքին մէջ կարելի չէ աննկատ թողուլ յատկապէս ընկերային անարդարութիւններու բնագաւառը: Դասակարգային հաւասարութիւնները, մենաշնորհային սանձարձակութիւնը, մարդկային իրաւանց ոտնահարումը, անգործութիւնը, փտածութիւնն ու կաշառակերութիւնը, ընկերային առողջ հասարակարգի հիմքերը խախտող բացասական գործօններ են: Թարախակալած ընկերային այդ ամբողջ համակարգը վերափոխելը օրուան հրամայականն է:

Այս բոլոր հրատապ հարցերը յաղթահարելու հրամայականը շէշտելով՝ այսօր ախտավարակները չէզոքացնելու եւ կացութիւնը բարեշրջելու պահն է, նորանոր յաջողութիւններ արձանագրելու եւ զանոնք էապէս ամրագրելու հանգրուանն է: Մեր սերունդին ընձեռուած են առիթն ու հնարաւորութիւնը, որպէսզի իրականութիւն դարձնենք մեր ազգային դաւանանքը՝ հայոց պետականութիւնը ամբողջական, միաւորուած ու ազատ հայրենիքի երկնակամարին տակ վերականգնելու տեսլականը:

# Նայասպրանի հանրապետությունների իրաւայաջորդութեան հարցը միջազգային իրաւունքի տեսանկիւնից

## ԱՐԱ ՊԱՊԵԱՆ

**Վերջին հարիւրամեակում եղել են հայկական երեք տարածքային միաւորներ (territorial entity), որոնց անուանման մէջ գործածուել են «հանրապետութիւն» բառերը: Այս միաւորների իրաւայաջորդութեան հարցը, թէւ առաջին հայեացքից զուտ իրաւագիտական բնոյթի է, սակայն խորքին մէջ ունի էական դեր Յայաստանի Հանրապետութեան արտաքին քաղաքականութեան հնարաւորութիւնների շրջանակն յստակեցնելու գործում:**

**Հարցն ունի երկու ընդգրկում. ներկայիս Յայաստանի Հանրապետութեան իրաւայաջորդութեան հարցը՝ 1. Յայաստանի խորհրդային (սովետական) Սոցիալիստական Հանրապետութեան նկատմամբ, 2. 1918-1920 թթ. Յայաստանի Հանրապետութեան նկատմամբ:**

Նախ ընդհանրապէս պետութիւնների իրաւայաջորդութեան մասին: Պետութիւնների իրաւայաջորդութիւնը խարսխուած է տարածքի իրաւատիրութեան վրայ (State succession is based on legal possession of the territory): Այսինքն, երբ որեւէ նորաստեղծ պետութիւն ժառանգում է կամ այլ ձեւով իր իրաւունքն է հաստատում որոշակի տարածքի վրայ, ապա այդ պետութիւնը ստանձնում է տուեալ տարածքին անրագրուած իրաւունքներն ու պարտաւորութիւնները: Պայմանագրերի մասով պետութիւնների իրաւայաջորդութեան մասին Վիեննայի 1978թ. Կոնվենցիայի՝ Պետական գոյքի, արխիւների եւ պարտքերի մասով պետութիւնների իրաւայաջորդութեան մասին Վիեննայի 1983թ. Կոնվենցիայի համապատասխան յօդուածները (երկուսի մէջ էլ նոյնական՝ պետութիւնների իրաւայաջորդութիւնը (state succession))



սահմանել են որպէս «մի պետութեան փոխարինումը մէկ այլով (այլ պետութեամբ)՝ միջազգային յարաբերութիւններում տարածքի պատասխանատւութեան առումով («the replacement of one State by another in the responsibility for the international relations of territory»): Այսինքն, իրաւայաջորդութեան հիմքը տարածքն է. իրաւայաջորդութեան մասին հռչակագիրը կամ այլ համաձայնեցում փաստաթուղթը բնաւ պարտադիր պայման չէ իրաւայաջորդութեան փաստի առկայութեան համար: Աւելին, անգամ հակառակի պնդումը, այսինքն առ այն՝ որ նորաստեղծ պետութիւնը չի հանդիսանում նախորդ պետութեան իրաւայաջորդը, բնաւ չի ազատում տարածքի յաջորդ իրաւատիր երկրին տարածքի նախորդ իրաւատիրոջ պարտաւորութիւններից: Օրինակ, ՌՍՖՍՀ (հետագայում նաեւ ՍՍՀՄ-ը) կամ Թուրքիան ամէն կերպ ժխտում էին համապատասխանաբար Ռուսաստանի կայսրութեան եւ Օսմանեան կայսրութեան իրաւայաջորդը լինելը, սակայն, քանի որ նրանք երկուսն էլ ժառանգել էին իրենց նախորդող երկրների տարածքների հիմնական մասը, միջազգային

հանրութեան կողմից համարում էին նշեալ երկրների իրաւայաջորդ երկրներ եւ դա բազմիցս անրագրուած է միջպետական փաստաթղթերով, դատական վճիռներով եւ միջազգային պրակտիկայով (գործարկումով): Օրինակ, երկու երկրներն էլ տերկանգնեցին իրենց նախորդների անշարժ գոյքին արտասահմանում կամ ստանձնեցին եւ վճարեցին նախորդների պարտքերը:

**Հիմա անդրադառնանք հարցի առաջին մասին եւ Յայաստանի խորհրդային (սովետական) Սոցիալիստական Հանրապետութեան նկատմամբ ներկայիս Յայաստանի Հանրապետութեան իրաւայաջորդութեանը:**

Յայաստանի ներկայիս Հանրապետութիւնը չի հանդիսանում ՀԽ(Ս)ՍՀ իրաւայաջորդը, ինչն անհիմն կերպով պնդում են ոմանք, այն պարզ պատճառով, որ «(պետութիւնների) իրաւայաջորդութիւն կարող է տեղի ունենալ միայն միջազգային իրաւունքի առնուազն երկու սուբյեկտների (ենթակայների) միջեւ: «(State) succession can only take place between at least two subjects of international law»:

Ակնյայտ է, որ ՀԽ(ս)ՍՀ երբեք չի եղել միջազգային իրաւունքի սուբյեկտ, ոչ միայն եւ ոչ այնքան այն պատճառով, որ այն երբեւէ ճանաչուած չի եղել արդէն օրինական ճանաչում ունեցող որեւէ այլ պետութեան կողմից, այլեւ որովհետեւ, երբեւէ չի բաւարարել պետականութեան չորսը չափորոշիչներից եւ ոչ մէկին, որոնք ամրագրուած են Մոնտեվիտոյի (1933թ.) Համաձայնագրի մէջ: Այն է՝ ՀԽ(ս)ՍՀ չի ունեցել բնակչութիւն, (ՀԽ(ս)ՍՀ-ում բնակչուողները եղել են ՍՍՀՄ քաղաքացիներ) ՀԽ(ս)ՍՀ չի ունեցել տարածք, (եղածը ՍՍՀՄ տարածք էր), ՀԽ(ս)ՍՀ չի ունեցել կառավարութիւն, (եղածը ՍՍՀՄ կառավարութեան ստորաբաժանում էր) եւ ՀԽ(ս)ՍՀ չի ունեցել օտար պետութիւնների հետ յարաբերութիւնների մէջ մտնելու կարողութիւն, քանի որ չի ունեցել այդ երկրներում հաւատարմագրուած արտակարգ եւ լիազօր դեսպաններ: ՍՍՀՄ-ը եղել է դաշնակցային (ֆեդերատիվ) պետութիւն, այսինքն բաղկացած որոշակի ներքին ինքնավարութեամբ օժտուած մի շարք վարչատարածքային միաւորներից (տուեալ պարագային՝ քառաստիճան), իսկ դաշնակցային պետութիւնը միջազգային իրաւունքի տեսանկիւնից ունի ընդամենը մէկ ինքնութիւն:

**Հիմա անդրադառնանք հարցի երկրորդ մասին՝ Հայաստանի առաջին եւ ներկայ հանրապետութիւնների իրաւայարաբերութիւններին:** Ինչպէս նշել էինք վերը՝ իրաւայաջորդութիւնը իրաւական գործողութիւն է միջազգային իրաւունքի սուբյեկտների (ենթակամների) միջեւ, այն է՝ «իրաւատիրութիւնը տեղի է ունենում, երբ միջազգային իրաւունքի մի սուբյեկտ (ենթակայ) ստանձնում է միւսի իրաւունքները» («A case of succession arises only when one subject of international law enters into the rights of another): Հաշուի առնելով, որ իրաւայաջորդութիւնը պայմանաւորուած է տարածքի օրինական իրաւատիրութեամբ, (իսկ ներկայիս Հայաստանի Հանրապետութիւնը կայացել է այն որոշակի տարածքի (կամ դրա մի մասի) վրայ, որի վրայ վերջին պետականութիւնը (միջազգային իրաւունքի վերջին սուբյեկտը) եղել է 1918-1920թթ. Հայաստանի Հանրապետութիւնը), ապա ներկայիս Հայաստանի Հանրապետութիւնն ինքնին իր գոյութեամբ կարող էր ստանձ-

նել, եւ ստանձնել է իր տարածքի վրայ իրեն նախորդած պետականութեան իրաւունքները: Այսինքն, անկախ այն հանգամանքից, թէ Հայաստանի Հանրապետութիւնը ի՞նչ իրաւական դիրքորոշում է որդեգրել կամ ի՞նչ յայտարարութիւն է արել իրաւայաջորդութեան հարցի առնչութեամբ, տարածքը ժառանգելու պատճառով եւ հէնց դրա հիման վրայ, այն հանդիսանում է առաջին հանրապետութեան իրաւայաջորդը: Այս անվիճելի դրոյթն ունի լրացուցիչ փաստարկներ եւս: Խնդրոյ առարկայ իրաւայաջորդութիւնն ամրագրուած է նաեւ Հայաստանի Հանրապետութեան հիմնարար փաս-

միասնական կամքը ... զարգացնելով 1918թուականի Մայիս 28-ին ստեղծուած անկախ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդական աւանդոյթները ... հռչակում է անկախ պետականութեան հաստատման գործընթացի սկիզբը»: Այսինքն, հայոց նորանկախ պետութիւնն իրեն հռչակում է «1918թուականի Մայիսի 28-ին ստեղծուած» պետականութեան շարունակութիւնը, քանի որ «զարգացնել» հայերէն առաջին հերթին նշանակում է՝ շարունակել: Անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ սահմանդրութեան նախաբանի դրոյթները, ինչպէս նաեւ ՀՀ անկախութեան

**Նայոց նորանկախ պետութիւնն իրեն հռչակում է «1918թուականի Մայիսի 28-ին ստեղծուած» պետականութեան շարունակութիւնը, քանի որ «զարգացնել» հայերէն առաջին հերթին նշանակում է՝ շարունակել**

տաթղթերում: Հայոց ներկայ պետականութեան հիմնարար փաստաթղթերը երկուսն են՝ Հայաստանի Հանրապետութեան մասին Հռչակագիրը եւ Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութիւնը: Թէեւ սրանք առանձին փաստաթղթեր են, այսուհանդերձ գտնուում են երկմիասնութեան մէջ: Ըստ այդմ, երբ Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութիւնը, որպէս հիմք է ընդունել «Հայաստանի անկախութեան մասին հռչակագրում հաստատագրուած հայոց պետականութեան հիմնարար սկզբունքները եւ համազգային նպատակները, (տես՝ ՀՀ սահմանադրութեան նախաբանը) ապա դրանով Հռչակագրի մէջ ամրագրուած դրոյթներին տրուել է հիմնական օրէնքի կարգավիճակ: Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակագրի (23 Օգոստոսի, 1990թ.) 5-րդ կէտով, իսկ յղման միջոցով նաեւ ՀՀ սահմանադրութեամբ, ամրագրուած է հետեւեալը. «Հայկական ՍՍՀ Գերագոյն Խորհուրդը՝ արտայայտելով Հայաստանի ժողովրդի

մասին հռչակագրի պահանջներն ունեն իմպերատիվ (պարտադիր, անսակարկելի) բնոյթ: (Տես՝ 2009թ. Հոկտեմբերի 10-ին Ցիւրիխում ստորագրուած հայ-թրքական արձանագրութիւնների մասին ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման (12 Յունուարի, 2010թ. 5-րդ կէտը): Այսպիսով՝

**\*Հայաստանի ներկայիս Հանրապետութիւնը չի հանդիսանում ՀԽ(ս)ՍՀ իրաւայաջորդը:**  
**\*Հայաստանի ներկայիս Հանրապետութիւնը հանդիսանում է 1918-1920թթ. Հայաստանի առաջին հանրապետութեան իրաւայաջորդը:**

Արա Պապեանը Սոտուս Վիվենտի կեդրոնի ղեկավարն է

*Բացատրութիւն՝ ՀԽ(ս)ՍՀ Հայաստանի Խորհրդային (սովետական) Սոցիալիստական Հանրապետութիւն*

## Չինանշանը

«Յայաստանի Յանրապետութեան պետական զինանշանի մասին» օրէնքը ընդունուեցաւ Գերագոյն Խորհուրդի կողմէ 1992ի Ապրիլ 19-ին:

Վերականգնեցաւ 1918-1920 թուականի Յայաստանի Յանրապետութեան զինանշանը, որու հեղինակներն են ճարտարապետ, Ռուսաստանի գեղարուեստի ակադեմիայի ակադեմիկոս Ալեքսանդր Թամանեանը եւ Ակարիչ Յակոբ Կոչոյեանը:

2005ի Նոյեմբեր 27-ին, ՀՀ Սահմանադրութեան բարեփոխումներէն յետոյ, 2006ի Յունիս 15-ին ընդունուեցաւ «ՀՀ զինանշանի մասին» նոր օրէնքը: Յայաստանի Յանրապետութեան զինանշանը Յայաստանի Յանրապետութեան պետական խորհրդանիշերէն է:

Յայաստանի Յանրապետութեան զինանշանը կը յատկանշեն.- կեդրոնը՝ վահանի վրայ պատկերուած են Արարատ լեռը՝ Նոյեան տապանով եւ պատմական Յայաստանի թագաւորութիւններու չորսի զինանշանները (ձախ՝ Բագրատունիներու, աջ՝ Արշակունիներու, վարը ձախ՝ Արտաշէսեաններու, վարը աջ՝ Ռուբինեաններու: Վահանը կը պահեն արծիւը եւ առիւծը, իսկ վահանի հիմքին գետեղուած են սուր, ճիւղ, հասկերու խուրձ, շղթայ եւ ժապաւէն: Յայաստանի Յանրապետութեան զինանշանի հիմնական գոյնն է ոսկեգոյնը. պատմական Յայաստանի թագաւորութիւններու գոյները՝ կարմիր, կապոյտ, եւ կեդրոնը՝ վահանի վրայ պատկերուած Արարատ լեռը՝ նարնջագոյն: Նշուած գոյները կը խորհրդանշեն Յայաստանի Յանրապետութեան դրօշի գոյները:



## Հռչակագրի Նախաբանը



«Յայ ժողովուրդը, հիմք ընդունելով Յայաստանի անկախութեան մասին հռչակագրում հաստատագրուած հայոց պետականութեան հիմնարար սկզբունքները եւ համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետութեան վերականգնման իր ազատասէր նախնիների սուրբ պատգամը, նուիրուած հայրենիքի հզօրացմանը եւ բարգաւաճմանը, ապահովելու համար սերունդների ազատութիւնը, ընդհանուր բարեկեցութիւնը, քաղաքացիական համերաշխութիւնը, հաւաստելով հաւատարմութիւնը համամարդկային արժէքներին, ընդունում է Յայաստանի Յանրապետութեան Սահմանադրութիւնը»:

## Սահմանադրութիւնը

ՀՀ Սահմանադրութիւնը ընդունուեցաւ 1995ի Յուլիս 5-ին, համաժողովրդական հանրաքուէի արդիւնքով:

Սահմանադրական բարեփոխումներ կատարուեցան 2005ի Նոյեմբեր 27-ին, համաժողովրդական հանրաքուէի արդիւնքով:

Սահմանադրութիւնը կազմուած է 9 գլուխներէ եւ 117 յօդուածներէ, հետեւեալ բաժանումով՝

1. Սահմանադրական կարգի հիմունքները
2. Մարդու եւ քաղաքացի հիմնական իրաւունքները եւ ազատութիւնները
3. Յանրապետութեան Նախագահը
4. Ազգային ժողովը
5. Կառավարութիւնը
6. Դատական իշխանութիւնը



7. Տարածքային կառավարումը եւ տեղական ինքնակառավարումը
8. Սահմանադրութեան ընդունումը, փոփոխումը եւ հանրաքուէն
9. Անցումային դրոյթներ

2011ի ընթացքին առիթներ ունեցանք նշելու Նայաստրանի վերանկախացման 20-ամեակին յոբելեանը՝ լուսարձակի փակ առնելով հայ ժողովուրդի կտրած փորձաքարերու դժուարին ուղին: Երկու փաստամեակ առաջ, խորհրդային ամբողջարհիություն լուծը եւ բռնակալության կապանքները թօթափած հայությունը վերահաստատեց ազատ, անկախ ու ինքնիշխան սպրեյու իր իրաունքը: Նայոց պեղականության վերահաստատման ճամբով ազգովին արձանագրեցինք հպարտառիթ իրագործումներ՝ իբրեւ գլխաւոր նուաճում ունենալով Արցախեան ճակատին վրայ արձանագրուած փառահեղ յաղթանակը եւ բռնագրաւեալ հայրենի մեր փարածքներու ազատագրումը: Արցախի իրողական անկախացումին զուգորդուեցաւ հայկական ազգային բանակին վերակերպումն ու հզօրացումը: Այսօր ունինք 20 փարեկան յոյժ փորձառու, մարտունակ բանակ, որ իր ռազմական պայրաստումաւորեանք կարողութիւնը ունի սանձելու եւ յաղթահարելու յարձակող ապաշար ամէն փեսակի ուրնձգութիւն: Նայաստրանի 20-ամեայ անկախութեան հաշուեկշիռն ու արժեւորումը ամբողջականօրէն կարարելու համար, անհրաժեշտ է քննական լուսարձակի փակ բերել ինչպէս արձանագրուած իրագործումներու փայլուն էջերը, նոյնպէս եւ թոյլ փրուած վրէպներու կամ ընկրկումներու նուազ փայլուն, այլեւ սփուրտոր երեսները: Դեռ շար գործ կայ փարուելիք նոյն այդ ազատագրուած հողափարածքներու վերաբնակեցման համար, ինչպէս եւ նորանկախ մեր հայրենիքի բնակչութեան ընկերային կեանքը բարեկարգելու եւ կառավարման խաթարուած համակարգը

# Նայաստրանի վերանկախացման 20ամեակին արժեւորումը



արմափական բարեփոխութեան ենթարկելու ուղղութեամբ: Նորաստեղծ մեր պեղութեան հիմերուն սպառնացող լուրջ վրանգ է ահաւոր թիւերու եւ փարողութեան հասած հայրենիքէն արփագաղթը, նոյնպէս եւ հայրենի հայութեան դիմադրականութիւնը խոցող ընկերային անարդարութիւններու ներքին չարիքը: Այս եւ այլ հրափայտ հարցերը քննելու առաջադրանքով մեր Բացառիկին գլխաւոր թղթածրարը յարկացուցած ենք Նայաստրանի Նանրապեղութեան 20ամեայ անկախութեան արժեւորումին: Այն հաստատ գիտակցութեամբ եւ առաջադրութեամբ՝ թէ հարկ է - շարունակել դրական ձեռքբերումները ընդարձակելու եւ ամրապնդելու հաւաքական մեր

*երթը,  
- ազգովին դիմագրաւել յամեցող յոռի երեւոյթները կատեցնելու եւ դարմանելու մարտահրաւերը,  
- վերանորոգ թափ փալ հայոց ազատ ու անկախ պեղականութեան հզօրացման եւ համընդհանուր բարեշրջման համար գործելու համազգային զօրաշարժին:*

Տուեալ թղթածրարին համար օգտագործուեցան մեր թերթի աշխատակիցներու առանձին գրութիւնները, ինչպէս եւ Նոյեմբեր 2011ին «Ազատ Օր»ի խմբագրութեան կողմէ նախաձեռնուած «Նայ Ժողովուրդի խճանկարը Նայաստրանի վերանկախացումէն 20 փարի ետք» խորագրով կլոր սեղանի նիւթերը:



Անկախութեան անդրադարձը նախկին Խորհրդային երկիրներու հայկական համայնքներու ազգային ու քաղաքական կեանքին վրայ (Նայկական կառոյցները եւ միութիւնները նախապէս եւ այսօր:  
 Նայ Դարի պահանջարկիւթեան, հայեցի կրթութեան եւ հայ մշակոյթի ու կրօնի պահպանման հոլովոյթը)

**ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՄՕՏ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՕՐ ԴԵՍՊՈՒՆ ԳԱԳԻԿ ԴԱԼԱԶԵԱՆ**

Յայտութեան խնդիրների շուրջ քննարկումները վերջին տարիներին ընդհանրապէս աշխուժացել են: Դա հիմնականում պայմանաւորուած է այն մտահոգութեամբ, որ առկայ է թե՛ հայ հասարակագիտութեան եւ թե՛ ազգային հարցերի շուրջ խորհող անհատների շրջանում՝ կապուած հայ ինքնութեան պահպանման, Յայտութեան զարգացման եւ կազմակերպման խնդիրների հետ: Չնայած Յայտութեան մեծ աշխարհագրութեանը, հիմնադրուած բազմաթիւ համայնքային, հասարակական եւ քաղաքական կառոյցներին՝ Յայտութեան կազմակերպչական պաշարներն առաւելապէս շարունակում են մնալ որպէս չօգտագործուող ներուժ: Այս համապատկերը առաւել քան արդիական է դառնում սփիւռքի տարբեր հատուածների իրավիճակի, ներքին բնութագրերի մասին խորքային տեղեկատուութեան տիրապետումը, առանց որի կազմակերպման արդիւնաւետ ուղիների մշակումը դժուար է պատկերացնել:

Խօսելով նախկին Խորհրդային երկրների հայկական համայնքների մասին, նախ հարկ է նշել, որ Խորհրդային տարիներին որեւէ ազգութեան պատկանող ԽՍՀՄ քաղաքացիները գրկուած էին ազգային միաւորումներ եւ համայնքային կառոյցներ ձեւաւորելու հնարաւորութիւնից, ազգային հենքի վրայ որեւէ կազմակերպութեան գործունէութիւն պարզապէս արգելուած էր: Այսինքն, այս տարածաշրջանի հարուստ պատմութիւն ունեցող հայկական գաղթօջախներում համայնքային կառոյցներ շուրջ 70 տարի գոյու-

րակական եւ քաղաքական կառոյցներին՝ Յայտութեան կազմակերպչական պաշարներն առաւելապէս շարունակում են մնալ որպէս չօգտագործուող ներուժ: Այս համապատկերը առաւել քան արդիական է դառնում սփիւռքի տարբեր հատուածների իրավիճակի, ներքին բնութագրերի մասին խորքային տեղեկատուութեան տիրապետումը, առանց որի կազմակերպման արդիւնաւետ ուղիների մշակումը դժուար է պատկերացնել:



թիւն չեն ունեցել, համայնքային կեանքը, որպէս այդպիսին, դադարել է:

Ըստ երեւոյթին, այս հանգամանքով է հիմնականում պայմանաւորուած խորհրդային երկրների հայկական համայնքների հիմնական տարբերութիւնը Հայութեան միւս հատուածներից. փաստօրէն, այս տարածքում 1980-ականների կեսերից Հայութիւնը կանգնել է ինքնակազմակերպման խնդրի առջեւ: Ուստի եւ այդ համայնքների ազգային ու քաղաքական կեանքի վրայ մեծագոյն անդրադարձ ունեցած պատմական իրադարձութիւնը նախեառաջ ԽՍՀՄ «ժողովրդավարացման» գործընթացի մեկնարկն էր, գործաչեւեան «պերեստրոյկան», որն, ինչպէս հետագայում պարզուեց, ծնունդ տուեց ոչ միայն ազգային կառոյցներին այլեւ ազգային նորանկախ պետութիւններին:

Չարգացնելով այս միտքը, կարելի է հաստատել, որ հայկական անկախ պետականութեան եւ ԽՍՀՄ տարածքում հայկական համայնքային կառոյցների սաղմնաւորումը զուգահեռաբար զարգացող գործընթացներ էին, ընդ որում՝ սերտօրէն փոխ կապակցուած գործընթացներ: Ո՞րոնք էին այն հիմնական խնդիրները, որ ի սկզբանէ համախմբող գործօն հանդիսացան ԽՍՀՄ տարբեր հատուածներում բնակուող հայերի համար: Իհարկէ, դա Լեռնային Ղարաբաղի հարցն էր, որ արթնացրել էր համայն աշխարհի հայութեանը, եւ իհարկէ դա Մեծ Եղեռնի ոգեկոչման խնդիրն էր, որի իրագործումը հնարաւոր դարձաւ ԽՍՀՄ-ում ստեղծուած իրապարակայնութեան եւ խօսքի ազատութեան նոր պայմաններում: Զիչ ակելի ուշ դրան միացաւ մէկ այլ տխուր իրադարձութիւն՝ 1988 թ. Դեկտեմբերի 7-ի Սպիտակի ակերիչ երկրաշարժը, որը հանգանակութիւնների, ա-

րիւնատուութեան, կամաւորական փրկարարական ջոկատների ստեղծման նախադէպը չունեցող ակիք բարձրացրեց Հայաստանից դուրս բնակուող հայութեան շրջանում, այդ թւում, իհարկէ նաեւ ԽՍՀՄ-ում:

Ահա այս պայմաններում էին ձեւաւորուում խորհրդային երկրների Հայութեան համայնքային կառոյցները: Ընդ որում, նախկին խորհրդային տարածքում ապրելու հանգամանքը հետագայում դարձաւ այն էական ընդհանրութիւններից մէկը, որը հաւաքական յիշողութեան որոշակի ընդհանուր դաշտ ստեղծեց, եւ այժմ էլ թելադրում է վարքի եւ մտածողութեան ընդհանուր բնորոշեր, հաղորդակցման ընդհանուր տարածք: Բացի այդ, համայնքները բնութագրուում են հէնց հա-

յին իրադրութեան մէջ եւ եւ ունենաւնուազն երկու խնդիր-առաջադրանք.

1. համարկուելլ բնակութեան երկրի ընկերային ու մշակութային իրականութեանը,

2. նոյնականանալ սեփական ազգային հանրոյթին, պահպանել այդ ինքնութիւնը:

Այսպիսով, յետխորհրդային տարածքի հայ համայնքների խընդիրն առնչուում է նաեւ մշակութային ձուլման խնդրին, որն, ինչպէս վկայում են տարբեր ուսումնասիրութիւններ, Արեւմուտքի կամ իսլամական երկրների հայ համայնքների համեմատ, յետխորհրդային երկրներում ակելի արագ է ընթանում: Սա կարող է պայմանաւորուած լինել մի քանի գործօններով: Մասնաւորապէս, օրինակ, ռուսերէնը շատ հայերի

**Ռուսերէնը շարք հայերի կողմից չի դիպում որպէս օտար լեզու, ինչն արագ յանգեցնում է համապարած ռուսախօսութեան եւ հայերէնի արքամղման: Այս հանգամանքին նպաստում է այն, որ ռուսական միջավայրը մի շարք քաղաքակրթական ընդհանրութիւնների եւ ընդհանուր անցելի հաշուին հակադիր մշակոյթ չի ընկալում, դրա հաշուին ձուլուելուն դիմադրելու ձգտում ի յայտ չի գալիս**

մատեղ խորհրդային անցելով, ռուսալեզու մշակոյթի ազդեցութեամբ եւ խորհրդային մշակութային շերտի առկայութեամբ՝ ինչպէս ընկերային-տնտեսական կեանքում, այնպէս էլ հանրութեան ընկերային-հոգեբանական նկարագրում:

Հայաստանից դուրս հաստատուած համայնքներն այլ մշակոյթում ապրելու եւ կենսագործելու, փոքրամասնութիւն լինելու հաշուին արդէն իսկ ունեն մի շարք ընկերային-հոգեբանական առանձնայատկութիւններ. նրանք, ի տարբերութիւն հայրենաբնակ հայերի, երկ-մշակութա-

կողմից չի դիտուում որպէս օտար լեզու, ինչն արագ յանգեցնում է համատարած ռուսախօսութեան եւ հայերէնի արտամղման: Այս հանգամանքին նպաստում է այն, որ ռուսական միջավայրը մի շարք քաղաքակրթական ընդհանրութիւնների եւ ընդհանուր անցելի հաշուին հակադիր մշակոյթ չի ընկալում, դրա հաշուին ձուլուելուն դիմադրելու ձգտում ի յայտ չի գալիս:

Ուշագրաւ է նաեւ, որ նոյն ռուսախօսութիւնը միջին-ասիական ու Կենտրոնական Ասիայի երկրների պարագայում գործում է որպէս ազգատարբերակիչ յատկա-

նիշ, որով տեղի հայերը, ունենալով այլընտրանք բնակութեան երկրի լեզուին, կարողանում են իրենց առանձնացնել տիրական մշակոյթից եւ այդպիսով չճուլուել: Ռուսերէնի կիրառումը համանման նշանակութիւն ունի նաեւ թիֆլիսահայերի (նախկինում նաեւ Պաքուի հայերի) շրջանում: Եւս մէկ ընդհանուր դիտարկում. գրեթէ բոլոր յետխորհրդային երկրներում հայկական համայնքները «բազմաշերտ» են, ձեւաւորուել են հայ գաղթականների ժամանակագրական եւ աշխարհագրական տարբեր հոսքերի արդիւնքում: Շատ գաղթոճախներ իրենց պատմութիւնը սկսում են միջնադարից (11-րդ դարում Բագրատունեաց, ապա 14-րդ դա-

քում, յատկապէս Ռուսական կայսրութեան կողմից Արեւելեան Յայաստանի գրաւումով, ինչպէս նաեւ բազմաթիւ ռուս-պարսկական եւ ռուս-թրքական պատերազմներից առաջացած բնաչութեան տեղաշարժի հետեւանքով: 19-րդ դարի երկրորդ կեսին Արեւմտեան Յայաստանում հայերի վիճակի կտրուկ վատթարացմամբ եւ 1894-96թթ. կոտորածներով պայմանաւորուած՝ բազմաթիւ արեւմտահայ փախստականներ հաստատուել են ՍԵւ ծովի կովկասեան ափի քաղաքներում: Արեւմտահայ փախստականների յաջորդ ալիքը առաջացաւ 1915 թ. Յեղասպանութեան հետեւանքով: Վերջին՝ նորագոյն շրջանի ալիքը սկիզբ առաւ 1988թ. Ատրպէյճա-

տիպ են, յետ-խորհրդային տարբեր երկրների հայ համայնքների տարբերութիւններն էապէս պայմանաւորուած են բնակութեան երկրի ընկերային, կրօնական, տնտեսական եւ այլ առանձնա-յատկութիւններով: Յետխորհրդային տարածքը չափազանց մեծ աշխարհագրութիւն է՝ բոլոր համայնքների համար կիրառելի բանաձեւեր կազմելու խնդրում: Տարբեր է ամէն երկրի կամ տարածաշրջանի մշակութային եւ քաղաքական համապատկերը, ուստի տարբեր են նաեւ այն գործօնները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են տուեալ երկրում համայնքի հայկական ինքնատիպութեան պահպանմանը, ներքին կազմակերպմանը, ինչպէս նաեւ հայկական քաղաքակրթութեանը պատկանելութեան եւ Յայաստանի (ՀՀ, ԼՂՀ եւ այս համապատկերում՝ Ջաւախք) հետ կապուածութեան զգացումին: Տարբեր են, օրինակ, մայրենի լեզուի օգտագործման հնարաւորութիւնները, ինչպէս նաեւ այն պահպանելու ձգտման աստիճանը: Ի յաւելումս, կարող է տարբերուել խնդիրների առաջնահերթութիւնը՝ սկսած ընդունող երկրի զբաղուածութեան ոլորտում համարկուելուց մինչեւ հայկական դպրոց հիմնադրելու իրաւունք ստանալու հարցեր: Լայն ընդգրկում ունի նաեւ յետ-խորհրդային երկրների հայ համայնքների ընկերային-հոգեբանական նկարագիրը. այն ներառում է տնտեսական ազդեցիկ ներուժ եւ Յայաստանի հետ աշխուժ կապեր ունեցող ռուսահայ որոշ համայնքներ, բայց եւ ցածր հասարակական տեղ զբաղեցնող եւ մշակութային անհանդուրժողականութեան ներքոյ իրենց ինքնութիւնը հատուածաբար պահպանող, Յայաստանի հետ թոյլ կապով եւ նուազ շարժունակ համայնքներ, ինչպէս որոշ միջին ասիական երկրներում:

**Վերջին՝ նորագոյն շրջանի ալիքը սկիզբ առաւ 1988թ. Ատրպէյճանից փախստականներով եւ շարունակուեց 1990-ականներին՝ այսպէս կոչուած աշխարհաքային արտագաղթով**

րում՝ Կիւիկեան թագաւորութիւնների անկումով), իսկ վիրահայութիւնը՝ նոյնիսկ աւելի վաղ շրջանից: Յետագայում՝ 16-18-րդ դարերում, յատկապէս Ռուսաստանում, Ուքրանիայում եւ Մոլտովայում ձեւաւորուում են այսպէս կոչուած առեւտրական համայնքներ միջազգային առեւտուրի հիմնական ուղիների վրայ գտնուող տարբեր քաղաքներում (օրինակ, Նոր Ջուղայի (Սպահան) հայ վաճառականներն առաջին օտարերկրացիներն են եղել, որ 1667թ. ստացել են Ռուսաստանով տարանցիկ առեւտուր անելու արտօնութիւն): Յայկական համայնքների կազմաւորումը շարունակուել է նաեւ 19-րդ դարի ընթաց-

կից փախստականներով եւ շարունակուեց 1990-ականներին՝ այսպէս կոչուած աշխատանքային արտագաղթով: Յարկ է նշել նաեւ, որ խորհրդային տարիներին եւս բաւականին աշխուժ արտագաղթ էր տեղի ունենում ԽՍՀՄ հանրապետութիւնների միջեւ, որը կրում էր հիմնականում աշխատանքային բնոյթ (օրինակ՝ մասնակցութիւն մեծ շինարարութիւններին եւայլն), սակայն օրինակ Ղազախստանում եւ Ռուսաստանի Ալթայի երկրամասի տարածքում հայերը հիմնականում հաստատուել են ստալինեան շրջանում աքսորուելու հետեւանքով: Թէպէտ ընդհանուր գծերով շատ խնդիրներ նմանա-

# Վերանկախացման անդրադարձը հայրենի ոստաններու հայութեան վրայ (Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւններ. Ջաւախքի հայութիւն եւ հայաթափ Նախիջւան)


## ՆԱԶԱՐԷԹ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Հայաստանի վերանկախացումէն առիկն քսան տարիներ անցած են եւ այսօր կոչուած ենք միասնաբար քննելու, թէ քսանամեայ անկախութիւնը ի՞նչ բերաւ մեր ժողովուրդին, աւելին՝ ի՞նչ անդրադարձ ունեցաւ հայրենի ոստաններու մէջ ապրող մեր ժողովուրդի խճանկարին վրայ:

Հարցադրումը ինքնանպատակ չէ, որովհետեւ Հայաստանի Հանրապետութեան վերանկախացումով եւ հայ ազգային պետականութեան վերականգնումով հայրենաբնակ հայութիւնը թեակոխեց պայքարի նոր փուլ մը՝ Ազգի ու Հայրենիքի ամբողջական ազատագրութեան շարունակուող եւ երկար ուղիին վրայ:

Այդ առումով, քսանամեայ մեր անկախութեան վիճակագրական ընդհանուր հաշուեկշիռը կազմելու կողքին, պարտաւորութիւնը ունինք արժեւորելու, թէ ի՞նչ ըրինք մեր նուաճած անկախութեան հետ, ի՞նչ նուաճումներ կամ ձեռքբերումներ ունեցանք եւ ի՞նչ կաղացումներ ու ձախողութիւններ արձանագրեցինք:

Անշուշտ ակնբախ է, որ պատմական նշանակութեամբ դրական է քսանամեայ անկախութեան ընդհանուր հաշուեկշիռը: Ահա՛ քսան տարի է ունինք միջազգային ճանաչում վայելող անկախ Հայաստան եւ հայկական պետականութիւն, ինչը իրականացումն է սերունդներու երազին: Ունինք իրողապէս ազատագրուած Արցախը, որ հռչակած է իր անկախութիւնը, պետականօրէն հաստատած է ազգային ինքնորոշման իր իրաւունքը եւ կը շարունակէ պայքարիլ նաեւ միջազգային իրաւական



ճանաչում ապահովելու համար: Վերջապէս իրականացած է Հայաստան-Սփիւռք կամրջումը, որ աշխարհացրիւ մեր ներուժին համագլխային արդիւնաւորման առջեւ լայն հեռանկարներ բացած է:

Բայց ինչպէս որ անգլերէն դարձուածքը կ'ընդգծէ՝ «Սատանան մանրամասնութեանց մէջ է»...

Այս պարագային «սատանան» անբաւարարութեան այն զգացողութիւնն է, որ ազգովին կ'ապրինք հայրենի ոստաններուն մէջ թէ Սփիւռքի տարածքին՝ ի տես քսանամեայ անկախութեան շրջանին հայրենաբնակ մեր ժողովուրդին ընկերատնտեսական ծանր վիճակին, զանգուածային արտագաղթի շարունակուող ալիքին, կառավարման համակարգի անբուժելի խաթարուածութեան եւ հասարակափոխութիւնը յատկանշող ընկերային անարդարութեանց խորացումին:

Անմիջապէս հարկը կը զգամ ընդգծելու, որ զեկոյցիս պատրաստութեան համար կատարած պրպտումներու ժամանակ, համացանցային իր կայքէջը հաստատած «ՆԴ Ֆորում»-ի «Այսօր» կոչուած «պլոկ»-ին վրայ, պատահականօրէն հանդիպեցայ հայրենաբնակ հայու մը հետեւեալ սրտցաւ պոռթկումին, որ օգնեց հունաւորելու նիւթիս զարգացումը: Հայաստանի Հանրային Հեռուստատեսութեան առաջին ալիքին հետեւողները ծանօթ պէտք է ըլլան Կիրակնօրեայ «360 աստիճան» լրատուական-մեկնաբանական հաղորդումին: Հաղորդումին հետեւած Հայաստանի վերոյիշեալ քաղաքացին համացանցին վրայ գրած է, թէ Հայաստանի քաղաքական եւ ընկերատնտեսական իրադարձութիւններուն անդրադարձող ՀԻ հայ հաղորդումը «շնչում էր իշխանական լրատեսութեամբ»: Ես կողմ չեմ ընդդի-

մադիրի՝ ամենայն ինչ սեւացնող հայեացքին, առանց ոգեւորութեան երկիր չես կառուցի: Բայց երազում եմ, որ մի օր մեր կեանքը ներշնչուի ոչ իշխանական, այլ ազգային-պետական լուստեսութեամբ»:

Դժբախտաբար իրաւացի է մեջբերուած ախտաճանաչումին անյայտ հեղինակը: Անկախութեան քսանամեակին նուիրուած էլոյթներուն հետեւողը անպայման կը հաստատէ, որ իրերամերժ ու հակոտնեայ մօտեցումներու բեւեռացումը տիրական եղաւ նաեւ անկախութեան շրջանի ընդհանուր արժեւորման պարագային: Իշխանաւոր ճակատին կողմնակիցները անպայման լուստեսութեամբ եզրափակեցին

րը, այլեւ խորապէս համոզուած է, որ անկախ հայրենիք եւ ազգային պետականութիւն կառուցելու եւ հզօրացնելու համար նախապայման է ոգեւորութիւնը: Մեր ժողովուրդին անբռնաբարելի իրաւունքները նուաճելու համազգային ոգեւորութեան շնորհիւ էր, որ նախ հնարարուող դարձան Արցախեան Պահանջատիրութեան շղթայագերծումը եւ անսանձ քափով յառաջխաղացքը մինչեւ հայրենի հողին իրողական ազատագրումը, ապա՝ մեր ժողովուրդը հռչակեց իր անկախութիւնը եւ լծուեցաւ Հայաստանի Հանրապետութեան կառուցումին ու հզօրացումին: Իսկ անփոխարինելի այդ ոգեւորութեան պահպանումին ու վերարժարծումին համար նոյնքան կարեւոր պայման է

րոնց պիտի վստահինք վաղուան մեր սերունդներուն քայլերը առաջնորդելու պատասխանատու դէկը:

1) Վերանկախացեալ Հայաստանի Հանրապետութեան քսանամեայ հաշունեկշիռը

Հայաստան իր անկախութեան երթը սկսաւ Խորհրդային Միութեան ընդհանուր ճակատագրին բնորոշ սնանկացած տնտեսութեամբ մը, որ ո՛չ մրցունակ էր միջազգային շուկային մէջ, ոչ ալ ազատ զարգացման հորիզոն կը բանար իր ձեռներէց քաղաքացիներուն առջեւ: Մինչեւ անկախութեան ձեռքբերումը, Արցախեան Պահանջատիրութեան ներշնչումով ծաւալած զանգուածային ցոյցերն ու գործադուլները ամբողջապէս անդամալուծած էին արդէն սնանկացած տնտեսութիւնը: Իսկ 1988ի երկրաշարժը, իր խլած մարդկային անփոխարինելի զոհերուն եւ պատճառած նիւթական ծանր կորուստներուն կողքին՝ բացայայտ դարձուց նաեւ մերկութիւնը խորհրդային կոչուած պետութեան անզօրութեան ու անյուսալիութեան:

Խորհրդային Հայաստանը միայն անուանապէս հայկական էր ու հանրապետութիւն, ինչպէս որ սոսկ անուանական էր անոր հռչակած ժողովրդավարութիւնը, կամ՝ ամբողջ հայութեան պետական տունը հանդիսանալու նկրտումը: Ո՛չ ազգային բանակ ունէինք, ոչ ալ արտաքին աշխարհին հետ կապերը պահող ազգային-դիւանագիտական ներկայացուցչութիւն: Երկրին իսկական դեկավարն անգամ՝ Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղարը կը նշանակուէր Քրեմլի կողմէ:

Անկախութեան վերականգնումէն քսան տարի ետք Հայաստանի Հանրապետութիւնը ազատ ու անկախ՝ ազգային պետականութիւն է: Մինչեւ 1991 թուականը Հայաստանը իրաւականօրէն մէկն էր Խորհրդային Միութեան 15 հանրապետութիւններէն՝ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւն անուանումով: Անկախութիւնը ձեռք բերինք Խորհրդային Միութեան

**Դաշնակցութիւնը ոչ միայն չի բաժներ անկախութեան շրջանը միայն սեւ կամ միայն սպիտակ ներկայացնելու բեւեռացուած արժեւորումները, այլեւ խորապէս համոզուած է, որ անկախ հայրենիք եւ ազգային պետականութիւն կառուցելու եւ հզօրացնելու համար նախապայման է ոգեւորութիւնը:**

նոյնիսկ ակնբախ թերութիւններուն եւ սխալներուն անդրադարձող իրենց մեկնաբանութիւնները՝ վստահեցնելով, որ իշխանութիւնները ճիշդ ուղղութեան մէջ են եւ Հայաստանն ու հայութիւնը պայծառապազայ պիտի ունենան իրենց կառավարման օրով: Դիշդ հակառակ մօտեցումը դրսեւորուեցաւ ընդդիմադիր ճակատի խօսնակներուն կողմէ, որոնք անկախութեան շրջանի բոլոր թերութիւններուն եւ սխալներուն ամբողջ պատասխանատուութիւնը բեռուցին այսօրուան իշխանութեանց ուսերուն՝ զանոնք նկատելով ամենայն չարեաց գլխաւոր աղբիւրը:

Դաշնակցութիւնը ոչ միայն չի բաժներ անկախութեան շրջանը միայն սեւ կամ միայն սպիտակ ներկայացնելու բեւեռացուած արժեւորումներ

թեան: Կը նշանակէ, որ հայ ժողովուրդի այսօրուան խճանկարին մէջ իրենց առարկայական արժեւորումը պէտք է ունենան ոչ միայն քսանամեայ անկախութեան նուաճումները, այլեւ ընկրկումները, որպէսզի աւելի լաւ ապագայ մը կերտելու մեր ոգեւորութիւնն ու լուստեսութիւնը խարսխուած ըլլան գործուած սխալներու գիտակցութեան ու սրբագրումին վրայ: Խարսխուած ըլլան, մանաւանդ, անյետաձգելի բարեփոխումներու իրականացման հաւաքական կամքին վրայ՝ համապատասխան արմատական կեցուածքով փոխարինելով կառավարման մեր այսօրուան հիւանդ համակարգին բոլոր պատասխանատուները: Միայն այդ ճամբով կարելի է ձեւաւորել ազգընտիր այն իշխանութիւնները, ո-

քայքայման ընթացքին՝ 1991ի Սեպտեմբեր 21ին կատարուած համաժողովրդային հանրաքուէով, որմէ երկու օր անց՝ Սեպտեմբեր 23ին, Հայաստանի Խ.Ս.Հ. Գերագոյն Խորհուրդը հռչակեց մեր երկրին անկախութիւնը, որ միջազգային ճանաչումի իրաւական ուժ ստացաւ Դեկտեմբեր 1991ին, Խորհրդային Միութեան պաշտօնական լուծարումով: Հայաստանի Հանրապետութիւնը Մ.Ա.Կ.ի անդամ դարձաւ 1992ի Մարտ 22ին: Հայաստանի Հանրապետութեան առաջին իշխանութիւնները, Հոկտեմբեր 1991ին Հ.Հ. նախագահ ընտրուած Լեւոն Տէր-Պետրոսեանի ղեկավարութեամբ, սկզբնական շրջանին դէմ կեցան Ազգային Բանակի կազմութեան եւ Պետական Սահմանադրութեան որդեգրումին:

Ժողովրդային շարժման ճնշումին տակ Ազգային Բանակի կազմութեան առաջին քայլերը առնուեցան Յունուար 1992ին: Այսօր արդէն մեր ազգային բանակը ունի 125.000 ժամկէտային զինժառայողներ եւ 560.000 պահեստայիններ: Պարտադիր Զօրակոչային տարիքը 18 տարեկանն է: Զինժառայութեան տարիք ունեցող բնակչութեան մէջ տղամարդիկ (18-49 տարեկան) կը հաշուեն 722.836, իսկ կանայք (18-49 տարեկան) 795.084 հոգի: Այս քիւլէն զինուորական ծառայութեան պիտանի տղամարդիկը 551.938, իսկ կանայք 656.493 են: Զօրակոչային տարիքին հասնողներու թիւը (տարեկան) տղամարդկանց պարագային 31.774, իսկ կանանց պարագային 31.182 է:

Հայաստանի Ազգային Բանակին ու պաշտպանական ծախսերուն կը յատկացուի տարեկան \$ 600 միլիոն, որ Համախառն Ներքին Արդիւնքի 4.9 տոկոսը կը կազմէ:

Բանակը կը բաղկանայ երեք հիմնական ճիւղեր՝ ցամաքային զօրքեր, հակօդային պաշտպանութեան զօրքեր եւ ռազմաօդային ուժեր:

Հ.Հ. պաշտպանութեան համակարգին միջազգային մատակարարողներն են Ռուսաստանը, Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Յունաս-

տան:

Հ.Հ. Սահմանադրութիւնը ընդունուեցաւ 1995 թուականի Յուլիս 5ին՝ համաժողովրդային հանրաքուէով: Սահմանադրութիւնը մասնակի փոփոխութեան ենթարկուեցաւ տասը տարի ետք՝ 2005ի Նոյեմբեր 27ին, համապետական հանրաքուէով: Ըստ Սահմանադրութեան՝ Հայաստանի Հանրապետութիւնը ինքնիշխան, ժողովրդավարական, ընկերային, իրաւական պետութիւն է: Ունի նախագահական կառավարման համակարգ: Հ.Հ. նախագահը կ'ընտրուի համաժողովրդային քուէարկութեամբ՝ պաշտօնավարութեան 5 տարուան ժամկէտով: Հանրապետութեան Գործադիր մարմինը Հայաստանի կառավարութիւնն է, որ կը զլխատրուի վարչապետին կողմէ: 1995ի Սահմանադրութեամբ կառավարութեան անդամներուն ու նոյնինքն վարչապետին նշանակումը վերապահուած էին Հ.Հ. նախագահին: Իսկ 2005ի Սահմանադրական բարեփոխումներով՝ վարչապետը կը նշանակուի դարձեալ Նախագահին կողմէ, բայց արդէն Ազգային ժողովի մէջ մեծամասնութիւն կազմող կուսակցութիւններու առաջարկութեամբ: Հ.Հ. նախագահը սահմանադրականօրէն ուղղակի ինք կը ղեկավարէ բանակն ու երկրի արտաքին քաղաքականութիւնը:

1988ի Փետրուարին շրթայազերծուած Արցախեան շարժման հետ Հայաստանի մէջ սունկի պէս բուսան տասնեակներով կուսակցութիւններ: Անկախացումէն ետք, կուսակցութիւններու պաշտօնական արձանագրութեան օրինական կարգ հաստատուեցաւ, որուն հետեւանքով որոշ սահմանափակումի ենթարկուեցաւ օրինական գրանցում ունեցող կուսակցութիւններու թիւը: Ներկայիս կը գործեն եւ առաւել յայտնի են հետեւեալ կուսակցութիւնները.-

- Հ.Հ. Ազգային Ժողովի մէջ ներկայացուած կուսակցութիւններ՝

- 1) Հայաստանի Հանրապետական Կուսակցութիւն
  - 2) Բարգաւաճ Հայաստան
  - 3) Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն
  - 4) Օրինաց Երկիր
  - 5) Ժառանգութիւն
- Արտախորհրդարանական կուսակցութիւններ՝
- 6) Միացեալ Ազատական Ազգային Կուսակցութիւն (Մ.Ի.Ա.Կ.)
  - 7) Ռամկավար Ազատական Կուսակցութիւն
  - 8) Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն
  - 9) Նոր Ժամանակներ

**Ժողովրդային շարժման  
ճնշումին տակ  
Ազգային Բանակի կազմութեան  
առաջին քայլերը առնուեցան  
Յունուար 1992ին:  
Այսօր արդէն մեր ազգային  
բանակը ունի 125.000  
ժամկէտային զինժառայողներ  
եւ 560.000  
պահեստայիններ:**

- 10) Հայաստանի Առաջադիմական Կուսակցութիւն
- 11) Ազգային Ժողովրդավարական Միութիւն
- 12) Հանրապետութիւն
- 13) Հայաստանի Դեմոկրատական Կուսակցութիւն
- 14) Հայաստանի Ժողովրդական Կուսակցութիւն
- 15) Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւն
- 16) Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցութիւն
- 17) Հայոց Համազգային Ծարժում
- 18) Հզօր Հայրենիք
- 19) Պահպանողական Կուսակցութիւն
- 20) Միատրուած Աշխատանքային Կուսակցութիւն
- 21) Ազգային Միաբանութիւն

22) Ազգային ժողովրդավարների դաշինք:

Ինչ կը վերաբերի մեր հայրենիքի ժողովրդագրական պատկերին՝ Հայաստանի բնակչությունը այսօր 3.219.400 հոգի է (2006ի Յուլիս 1ի տուեալներով) եւ ունի տարեկան աճի 1.4 տոկոս: Հայերը կը կազմեն ազգաբնակչութեան 96 տոկոսը: Ռուսները կը կազմեն բնակչութեան 1.5 առ հարիւրը: Ազգային փոքրամասնութիւններն են՝ ասորիները, յոյները, հրեաները, քիւրտերը, ուկրաինացիները եւ եզիտիները:

Հայերէնը Հայաստանի Հանրապետութեան պետական լեզուն է եւ բնակչութեան 99%ը կը խօսի հայերէն: Ռուսերէնը երկրորդ լեզուն է, իսկ

տան տուեալներուն՝ 1991-2010թթ. Հայաստանը լքած է մօտ 925 հազ. մարդ, իսկ Հ.Հ. ազգային վիճակագրական ծառայութեան տուեալներով՝ 2010թ. Յուլիս 1ի դրութեամբ երկրի բնակչությունը կազմած է 3.254.600 մարդ: Այսպիսով, արտագաղթը կազմած է 28,42%:

2. Ըստ Հ.Հ. ազգային վիճակագրական ծառայութեան տուեալներուն՝ 2010թ. Հայաստանի ծնելիութեան ցուցանիշը կազմած էր 1.38 (պարզ վերարտադրության համար անհրաժեշտ է 2.11): Այսպիսով, վտանգուած է ազգային անվտանգութեան յենասիւններէն մէկը:

3. 2010թ. Հ.Հ. պիտուճեով նախատեսուած էր գնաճ 4% եւ 1,5% (այսինքն՝ 2.5-5.5%): Սակայն 2010թ. պաշտօնական գնաճը Հ.Հ.ի մէջ կազմեց 9.4%:

4. Ըստ ՀՀ կեդրոնական դրամատան տուեալներուն՝ 2007-2010թթ. դէպի Հայաստան ուղղուած մասնատր մարդի փոխանցումներու ծաւալները (մլրդ ԱՄՆ տոլարով) կազմած են \$1,319 (2007թ.), \$1,635 (2008թ.), \$1,124 (2009թ.) եւ \$1,293 (2010թ.): Այսպիսով,

մասնատր փոխանցումներու 2010թ. ծաւալները չեն հասած 2007թ. ծաւալներուն:

5. Ըստ ՀՀ ֆինանսներու նախարարութեան տուեալներուն՝ 2007-2010թթ. Հայաստանի արտաքին պարտքի ծաւալները (մլրդ ԱՄՆ տոլարով) կազմած են \$1,369 (2007թ.), \$1,577 (2008թ.), \$2,967 (2009թ.) եւ \$3,795 (2010թ.): Այսպիսով, 2010թ. արտաքին պարտքով (44.4% ՀՆԱ-ի նկատմամբ) Հայաստանը մօտեցած է վտանգաւոր սահմանին (50-60%%), ուր հասած պետութիւնը սնանկ կը ճանչցուի:

Հայաստանի դիմագրւած ընկերատնտեսական վտանգին դիպուկ ախտաճանաչումը կատարեց վերջերս Հայաստանի մօտ Գերմանիոյ դեսպանը: Դեսպան Հանս-Եոհեն

Շմիդտը մասնատրապէս ըսած է. «Հայաստանում փոփոխութիւնների համար քաղաքական կամք է հարկատր: Իսկ երկրի ներկայ իրավիճակի համար պատասխանատու են թէ՛ ներկայ, թէ՛ նախկին նախագահները: Առիթ է մ ունեցել առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին հարցնել 1995-96 թթ. եւ 2008թ. ընտրութիւնների մամուլիւնների մասին, ինչը, սակայն, Տէր-Պետրոսեանը չի ընդունել: Նրանց համար դժուար է դա ընդունել եւ համեմատել: Այն ժամանակուայ քաղաքականութեամբ հիմք դրուեց ներկայիս օլիգոպոլ տնտեսութեանը: «Անկախութեան սկզբից Հայաստանը լուրջ մարտահրաւրների է առերեսուել, ինչպէս երկրաշարժը, Արրբեջանի հետ հակամարտութիւնը, արտագաղթը, որոնք բացասաբար են ազդել երկրի զարգացման կշռոյթի վրայ, եւ ինչի պատճառով Հայաստանն այսօր յետ է մնում, օրինակ, բալթեան երկրներից:

«Օրէնքները պէտք է ոչ միայն ընդունել, այլեւ իրագործել՝ դրանց լաւ լինելը գործով ապացուցելով: Եթէ Հայաստանը ցանկանում է մերձեանալ Եւրամիութեան հետ, պէտք է մի շարք մարտահրաւրներ յաղթահարի՝ կոռուպցիա, մաքսային գործընթացներ, տնտեսութեան մրցունակութեան ապահովում եւ այլն:

«Կենտրոնական Բանկը Հայաստանում միակ պետական կառոյցն է, որտեղ բարձր աշխատավարձ են վճարում, անելիքներ կան նաեւ մասնատր ոլորտում: Պէտք է շեշտադրել աշխատողների իրաւունքների պաշտպանութիւնը: Օրինակ՝ կարելի էր պարտադրել «Մարիոթի» պէս միջազգային կազմակերպութեանը աւելի բարձր վարձատրել աշխատողներին:

«Եւրամիութիւն-Հայաստան տնտեսական համագործակցութեան հարցում դեռ եւս յաջողութիւններ չկան, իսկ տարածաշրջանում ուժանիւթի համագործակցութիւնն իրականացում է առանց Հայաստանի, քանի որ վերջինս դուրս է մնացել նախամոլի շինարարութիւնից: Մտավախութիւն ունեն, որ Հայաստանը զարգացման կշռոյթով յետ է մնում միւսներից»:

**Հայաստանի բնակչությունը այսօր 3.219.400 հոգի է (2006ի Յուլիս 1ի տուեալներով) եւ ունի տարեկան աճի 1.4 տոկոս: Հայերը կը կազմեն ազգաբնակչութեան 96 տոկոսը:**

անգլերէնը՝ երրորդ լեզուն է: Հայաստանի բնակչութեան մեծամասնութիւնը 17-59 տարեկան է (64.6%ը), իսկ կրթութեան մակարդակը բարձր է: Կրթութիւնը կը հանդիսանայ հայ հասարակութեան ամենակարեւոր արժէքներէն մէկը: Այսօր ունինք 50 համալսարան եւ աւելի քան 77.000 ուսանող: 18 համալսարան պետական են եւ 8ը՝ միջազգային. Հայաստանի Ամերիկեան համալսարան, Ֆրանսական համալսարան, Եւրոպական համալսարան եւ 5 ռուսական համալսարան:

Հայաստանաբնակ հայութեան վիճակագրական ամենէն մտահոգիչ ցուցանիշները կը վերաբերին ընկերատնտեսական մարզին եւ արտագաղթին: Այսպէս՝

1. Ըստ Համաշխարհային Գրամա-

# ԼՂՏ 20 ԱՄԵԱԿ



Նայ ժողովուրդի անկիւնադարձային պահերէն մէկն է Արցախի ազապագրական պայքարը: 2011ի ընթացքին նշեցինք Լեռնային Ղարաբաղի Տանրապետութեան անկախացման կարեւոր յոբելեանը: Արցախի անկախութեան խորհրդանշական օրը Մեպտեմբեր 2-ն է, քանի որ 1991-ի այդ օրը Ժողովրդական պարգամաւորներու Լեռնային Ղարաբաղի մարզային խորհուրդը եւ Շահումեանի շրջանային խորհուրդներու համապետ նիստը վճռակամութեամբ յայտարարեց Արցախի անկախութիւնը եւ ընդունեց հռչակագիր՝ միջազգային իրաւական փաստաթուղթերու մէջ ամրագրուած ժողովուրդի ինքնորոշման իրաւունքին համապատասխան: 1991ի Դեկտեմբեր 10-ին կայացած հանրաքուէին, -որը ընթացաւ հայկական բնակավայրերու անդադար հրեպակոծութեան ներքեւ,- մասնակցեցաւ արձանագրուած քաղաքացիներու 82.2%-ը: Այդ հանրաքուէին մասնակցեցան նաեւ Գեպաշէնի ենթաշրջանի բնակիչները, այսպէս իրաւական տեսակետ ամրագրելով ենթաշրջանի ներառումը՝ Լեռնային Ղարաբաղի Տանրապետութեան կազմին մէջ: Քուէարկութեան չմասնակցած մարդոց մեծամասնութիւնը արտալեյճանական բնակավայրերու բնակիչներն էին: Քուէարկածներու 99.89%-ը որոշում փուսւ Արտալեյճանէն անկախանալու մասին:

1991-2011



ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
НАГОРНО-КАРАБАХСКАЯ РЕСПУБЛИКА  
NAGORNO-KARABAKH REPUBLIC

## ԽՈՐՀՐԴԱՆԻՇԵՐ

1992ի Յունիս 2ին, ԼՂՏ Գերագոյն խորհուրդի որոշումով հաստատուեցաւ ԼՂՏ պետական դրօշը: Այն կազմուած է կարմիր-կապոյտ-նարնջագոյն շերտերէ եւ կտորի աջ կողմի երկու ծայրերէն կը սկսի սպիտակ հնգափամ գորգանաշխ, որ կը միանայ դրօշի մէկ երրորդ հատուածին վրայ:

Պետական զինանշանը ընդունուեցաւ 1992ի Նոյեմբեր 17ին: Զինանշանի հեղինակն է Լարենտ Ղալայեանը: ԼՂՏ պետական ինքնիշխանութեան, ազապ տարածքին վրայ ապրող ժողովուրդներու պետական միասնութեան, կառուցող ազապ, իրաւական պետութեան խորհրդանիշն է, որ կը ներկայացնէ թեապարած արծիւ մը, որու գլխուն վրայ կը տարածուին արեւու ճառագայթները եւ Արտաշէսեաններու հարստութեան թագը: Կեդրոնը պատկերուած է ԼՂՏ պետական դրօշը եւ Մեծ Քիրս լեռան վրայ «Տափիկ-Պապիկ»ի քանդակի պատկերը: Արծուի ճանկերուն մէջ կան խաղողի վազեր, թթենիի պտուղներ եւ ցորենի հասկեր: Կիսաշրջանակի մէջ արձանագրուած է հայերէն մակագրութիւն՝ «Լեռնային Ղարաբաղի Տանրապետութիւն-Արցախ»:

2006ի Դեկտեմբեր 10ին կազմակերպուած համաժողովրդական հանրաքուէի ընթացքին ընդունուեցաւ Լեռնային Ղարաբաղի Տանրապետութեան Սահմանադրութիւնը, որ կազմուած է ներածականէ եւ 12 գլուխներէ:

Արդէն իսկ քսան տարի է, որ Արցախի պետական համակարգը կարողացած է ապահովել իր կենսունակութիւնը: Պետական զարգացման հանգրուանը թեակրիսած երկիրը, յաջողութիւններով եւ ճախողումներով ապահոված է 20-ամեայ գործնական փորձութիւններու պաշար: Իսկ ապագայի հետեւանքներու դիտանկիւնէն քննելով հարցը կարելի է ըսել, թէ պետականաշինութիւնն ու զարգացումը ուղղակիօրէն առնչուած են բնակչութեան բարեկեցութեան մակարդակի բարձրացման, մարդկային արժէքներու կիրառման եւ իրաւունքներու պաշտպանման հարցերուն հետ:

Արցախի անկախութեան յայտարարութիւնը, քաղաքական քայլ էր՝ Արցախը ամբողջական Նայաստանին վերամիատրելու ուղղութեամբ: Այսինքն՝ Ազապ, Անկախ Նայաստանի գաղափարական հիմքը հիմնական դրոպապարձառն է Անկախ Արցախի գոյութեան Եթէ Մեպտեմբեր 2-ի խորհուրդը անցեալին միայն քաղաքական քայլ էր, ներկայիս կը պարունակէ տնտեսական զարգացման տարրեր, իսկ ապագային պէտք է պարունակէ գաղափարական, առաւելապէս՝ քաղաքակրթական տարրեր:



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

## 20-ԱՄԵՆԿԻ ՏԱՍԸ ԿԱՐԵՒՈՐ ԴԷՊՔԵՐԸ

### Ա. ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ *Պերական համակարգի փոփոխություն*

21 Սեպտեմբեր 1991-ին Հայաստանի բնակչությունը բացարձակ մեծամասնությամբ «Այո» ըսաւ հանրապետութեան անկախութեան: Ազատութենէ զրկուած ժողովուրդի մը զարթօնքն էր ասիկա: 71 տարիներու համայնավարական վարչակարգէն ետք, հանրաքուէն էր կու օր յետոյ խորհրդարանը հռչակեց ծննդոցը Հայաստանի Բ. հանրապետութեան: 1918-էն ի վեր առաջին անգամ ըլլալով հայեր տէր կը կանգին իրենց ճակատագրին եւ կը վերամիանան միջազգային ընկերութեան, ազգերու շարքը մտնելով: Սա կը նշանակէ իրաւունքներու տիրանալ եւ պատասխանատուութիւններ վերցնել: Անկախութիւնը կը հռչակուէր, երբ

Հայաստանի մէջ կը տիրէին պատերազմ, քառս, երկրաշարժին յաջորդող ծանր օրեր եւ շրջանային թշնամութիւններ: Հակառակ այս բոլորին՝ Երեւանը կը պահէ իր պաղարիւնութիւնը, զօրավիգ կը կանգնի դարաբաղցիներուն, որպէսզի հռչակեն իրենց անկախութիւնը: Անկախութիւնը նպատակակէտ մը չէ, այլ՝ անոր ընդմէջէն ժողովուրդին տալ բարգաւաճում, զարգացում եւ յառաջդիմութիւն:



### Բ. ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ *Անկիւնադարձ*

8-9 Մայիս 1992-ի գիշերը հայկական զօրքերը երեք ուղղութեամբ Շուշիի վրայ յարձակման կ'անցնին, ազգերիներու վերջին միջնաբերդը՝ Ղարաբաղի մէջ: Մայիս 9-ին, Շուշիի շուրջ գտնուող գիւղերու մէջ տաք կռիւներէ ետք, քաղաքը կ'իյնայ հայերուն ձեռքը՝ շնորհիւ 2500 հայ ազատամարտիկներուն, որոնք կու գային Հայաստանէն ու Ղարաբաղէն: Ստեփանակերտի ժողովուրդը 9 Մայիսի առաւօտը արթնցաւ առանց

ազգերիներու ռումբերու ծայնին: Երեք տարի շարունակ գիշեր ու ցերեկ ազգերիներու կողմէ Շուշիէն Ստեփանակերտի վրայ արձակուած ռումբերու տարափը չէր ընկճած ստեփանակերտցիներու լինելիութեան կամքը, այլ ընդհակառակը, աւելի զօրացուց անոնց պատերազմելու կարողութիւնը: Շուշին, որ հայութեան պատմական օրրանը եղած էր, անոր գրաւումը անկիւնադարձ մը եղաւ Ղարաբաղի պատերազմին համար: Էլչիպէի կա-

ռավարութիւնը խուճապի մէջ էր, հայկական զօրքերը կ'ազատագրէին մէկ առ մէկ: Ղարաբաղի շուրջ գտնուող քաղաքները՝ Լաչինը, Քելբաջարը, Աղտամը, Ֆիզուլին, Ջանգելանը, Ղուպաքլին եւ Ճիպրայելը: Սինչ հայ զինուորները իրենց գործը աւարտին կը հասցնէին, Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ հայ ժողովուրդը պատահներ կը բարձրացնէր՝ «Միացում» յայտարարութեամբ: Ղարաբաղի խորհրդարա-

նի առաջին նախագահ Արթուր Մկրտչեանը, որ կը մահանայ Շուշիի ազատագրութենէն քանի մը շաբաթներ առաջ, կ'ըսէ. «Եթէ մենք պիտի չկարենանք օգտագործել հայոց յաղթանակները ամէն մարզէ մերս, կռիւները ոչինչի կը ծառայեն»:



### Գ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՅՐԱԳՈՒԹԻՒՆ *27 Հոկտեմբեր 1999 - 1 Մարտ 2008*

Քաղաքական բռնութեան երկու ցնցիչ դէպքեր տեղի կ'ունենան 20-ամեայ ժամանակաշրջանին:

Առաջինը 27 Հոկտեմբեր 1999-ի ոճիրն էր: Քանի մը զինեալներ՝ մուտք գործելով խորհրդարան,



ամենայն սառնասրտութեամբ կը սպաննեն խորհրդարանի նախագահը, վարչապետը, հինգ նախարարներ եւ երեսփոխաններ, չտեսնուած վայրագութեամբ մը, որ մինչեւ այդ օրը ամբողջ աշխարհի մէջ չէր պատահած:

Ինը տարի ետք կրկին սուգը կը պատէր Հայաստան աշխարհը:

1 Մարտ 2008-ին պետութեան կողմէ քաղաքական ցոյցերը ճնշելու փորձի ընթացքին կը մահանայ 10 հոգի, երկուքը՝ ոստիկաններ եւ ութ ցուցարարներ:

Այս երկու արիւնալի պատահարներն ալ տեղի ունե-

ցան նախագահ Ռուպերթ Քոչարեանի իշխանութեան առաջին եւ վերջին օրերուն: Անոնց վրայ կարելի է արել ցնցել մամուլի աշխատակից Տիգրան Նաղդալեանի սպանութիւնը՝ Դեկտեմբեր 2001-ին:



## Դ. ՄԱՍՈՒԼԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Անկախութեան 20 տարիներու ընթացքին մամուլը կաշկանդուած կը մնայ: Լսատեսողական ասպարեզին մէջ ներգրաւուած են բազմաթիւ առեւտրական թերմուով ընկերութիւններ, որոնց տուած տեղեկութիւնները ընդհանրապէս իշխանութեան ի նպաստ են, բացի «Երկիր Մեդիա» կայանէն (ՀՅԴ-ին), որ չի կողմնորոշուիր ի նպաստ պետութեան: Մամուլը միւս կողմէ, քիչ մը արեւելի ազատութիւն կը վայելէ, քան հեռատեսիլը, բայց անոր ալ կարելիութիւնները սահմանափակ են: Տպագրանակը օրական միայն 4000 է, որ չի կրնար մրցիլ հեռատեսիլին հետ: Գալով թերթի լրագրողներուն անոնք ալ միշտ ճնշումի տակ են իշխանութիւն-

ներուն կողմէ: Անոնցմէ շատերը 2008-ին եւ 2009-ին ծեծի ենթարկուած են, եղիկ Պօղոսեան՝ «Հետք» համացանցի պատասխանատուն, Արգիշտի Քիվիրեան «Armenian Today»-ի պատասխանատուն, Լուսինէ Բարսեղեան «Ժամանակ» թերթի թղթակից, Գագիկ Չամչեան «Առաւօտ» թերթի թղթակից: Ամենայնդէպս կարելի է նշել, որ 2010-էն ի վեր մամուլը քիչ մը արեւելի ազատութիւն կը վայելէ:



## Ե. ԵԿԵՂԵՑԻՒՆ ՎԵՐԱԴԱՐՁՐ

### Յարութիւն

Ամբողջ խորհրդային շրջանին եկեղեցին հալածուած ու սանձուած էր: Անկախութենէն ետք Հայաստանեայց եկեղեցին կեանքի վերադարձաւ իր ամբողջ ուժով, որ միայն կարելի եղաւ էջմիածինի եւ Կիլիկիոյ կաթողիկոսութիւններու մերձեցումով: Էջմիածինի Վազգէն Ա.-ին յաջորդեց Գարեգին Ա.-ը, որ գահակալեց միայն չորս տարի՝ 1995-1999: Գարեգին Ա.-ին յա-

ջորդեց Գարեգին Բ.-ը, որ կազմակերպեց քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակի տօնախմբութիւնը: Հայաստանեայց եկեղեցւոյ վերագարթումն էր, որ կը տօնուէր: Այս շրջանին Հայաստան կ'այցելէ Յովհաննէս Պօղոս Բ. պապը, որ իր յարգանքի տուրքը կը մատուցանէ 1.5 միլիոն նահատակներու յիշատակին Ճիծեռնակաբերդ այցելելով: Կը նորոգուին ու

կը վերաբացուին շուրջ 200 եկեղեցիներ՝ Հայաստանի շատ մը շրջաններու մէջ: Երեւանի մէջ կը կառուցուի մեծածաւալ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Տեղի կ'ունենան եկեղեցական բարենորոգումներ՝ սկսած Վազգէն Ա.-ի օրով եւ շարունակուած Գարեգին Ա.-ի եւ Գարեգին Բ.-ի օրերուն:

Այս բարեփոխումները ոմանց կողմէ շատ հաշտ կերպով չդիտուեցան՝ այն վախով, որ եկեղեցին իր ազատախոհութիւնը եւ թափանցիկութիւնը կրնայ կորսնցնել կեղորոնաձիգ դառնալով:



## Զ. ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

### Երկու արագութեամբ ընթացող ընկերութիւն մը

Հանրապետութեան եւ Ազատութեան հրապարակներուն վրայ է, որ կը տրուի Երեւանի սիրտը: Իսկ Հիւսիսային պողոտան, որուն բացումը կատարուեցաւ 16 Նոյեմբեր 2007-ին մեծ ծանուցումներով, ան ալ կը ներկայացնէ Երեւանի նոր դիմագիծը, իր բարձրաբերձ շէն-

քերով, առեւտրական շքեղ գրասենեակներով, վերջին նորոյթները պարունակող գեղեցիկ խանութներով: Նորարարութիւնը եւ քաղաքաշինութիւնը քառասմբակ կը յառաջանան Երեւանի մէջ, բոլորովին անյարիր խորհրդային շրջանի օրէքներուն, որուն ծանր հետքերը տա-

կալին կը մնան: Դրամատիրութեան կարգն ու սարքը սկսած են իշխել կեանքի ամէն մարզի հողվոյթներուն վրայ: Մութ ապակիներով երկնաքեր շէնքեր սունկի պէս կը բարձրանան ամէն կողմ, առանց նկատի ունենալու երեւանի ճարտարապետական գեղագիտական նախկին կառոյցները: Շէնքերուն դէպի երկինք սլացքին հետ անոնց գիւններն ալ կը սլանան դէպի վեր՝ անհասանելի ըլլալու չափ: Մէկ կողմէ մէջտեղ կու գայ նոր հարուստներու դասակարգ մը, որ ոչ մէկ միջոց կը խնայէ աւելի հարստանալու եւ ժողովուրդը աւելի կեղեքելու: Միւս կողմէ՝ ժողովուրդին մեծամասնութիւնը կ'ապրի ծայրագոյն չքաւորութեան մէջ: Գիւղացիին, արհեստաւորին եւ արհեստավարժին վիճակը դարձած է անտանելի: Գաւառներէն մարդիկ կը խուժեն քաղաք ու քաղաքէն դէպի

հեռաւոր երկիրներ, Ռուսիա, Եւրոպա եւ Ամերիկաներ: 20 տարուան անկախութեան շրջանին բնակչութեան թիւին վրայ ոչ մէկ յաւելում արձանագրուած է: 2008-ի համաշխարհային տնտեսական տագնապը աւելիով պատճառ եղաւ արտագաղթի: Ամէն կողմէ սկսան ծայրեր բարձրանալ՝ պէտք է կասեցնել արտագաղթը, երկիրը կը գլորի դէպի անդունդ:



## Է. ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

### Տարեւը կը թռչի իր լայն թևերով

Գարեգին Բ. կաթողիկոսին օրինութեամբ եւ մկրտութեամբ 16 Յոկտեմբեր 2010-ին, քաղաքական եւ եկեղեցական անձնաւորութիւններու ներկայութեան, մեծ շուքով բացուող կատարուեցաւ ճոպանուղիին, որ կը կապէ մայրուղին եւ Տաթևի վանքը, որ մեր հոգեմտաւոր կեդրոններէն մին եղած է, կանգնած՝ ժայռերու խռռչին մէջ, Որոտան գետի եզերքը: Ան կը գտնուի Հալիժորի մէջ, Հայաստանի հարաւը, Երեւան-Գորիս ճամբուն վրայ: Վանքը մայ-

րուղիէն 320 մեթր ցած եւ 5700 մեթր հեռաւորութեան վրայ կը գտնուի: Ճոպանուղին այս միջոցը կը կտրէ միայն քանի մը վայրկեանէն, մինչդեռ ճամբորդ մը, գործածելով դարձդարձիկ ու վտանգաւոր արահետը, հոն պիտի հասներ 90 վայրկեանէն: Ճարտարագիտական մեծ իրագործում մը, ոչ միայն հայկական չափանիշով, այլ նոյն ատեն՝ միջազգային, հաստատելով ճոպանուղիի երկայնքի միջազգային նոր մրցանիշ մը, որ երկրին արժեք 13 միլիոն եւրօ, որուն պտուղ-

ները կը յուսայ ան քաղել տարեկան բազմաձև արգօսաշրջիկներու շրջան այցելութեամբ: Ճոպանուղիին կառքը կը փոխադրէ 25 հոգի եւ ասիկա տարուան չորս եղանակներուն: Վանքը, որ քանդուած էր 1936-ին երկրաշարժի պատճառով վերանորոգուած է: Բոլոր այս աշխատանքները պետական ծրագրուած իրագործումներ են՝ զարգացնելու հա-



մար հարաւի դաշտային շրջանները, որուն ծայրամասը կը գտնուի Ղարաբաղի նորանկախ իշխանութիւնը: Պէտք է շեշտել, որ 2001-ի քրիստոնէութեան դարձի 1700-ամեակի տօնակատարութիւններէն ետք զբօսաշրջութիւնը տեսական վերելքի մէջ է:

## Ը. ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌ ԿԱՄՐՋՈՒՄ

### Երազողներու չայնը

Անկախութեան առաջին տարիներուն, երբ դժուարութիւնները անհամար էին՝ ցուրտը, անօթութիւնը, երկրաշարժը, պատերազմը, տարիքոտ երեւանցի մը այցելու ֆրանսահայի մը կ'ըսէ. «Դուք՝ սփիւռքահայերդ հայրենիք կ'երազէք, իսկ մենք զայն կ'ապրինք»: Բայց մենք՝ սփիւռքահայերս բարի երազողներ եղանք: Այս երազին պատճառով բազմաթիւ սփիւռքահայ երիտասարդներ Մարսելէն, Պէյրութէն, Լոս Անճելըսէն ճակատ գացին հայաստանցի եւ դարաբաղի մարտիկներուն հետ կողք-կողքի կռուելու: Նոյն երազով է, որ սփիւռքահայը կը ջանայ օգտակար ըլլալ հայրենիքին կառուցելով ճամբաներ, դպրոցներ, հիւանդանոցներ, գիւղերուն՝ ջրամատակարարուն: Ասիկա՝ շարունակաբար ամէն տարի, թեթեւցնելով պետութեան

պիւտճէին բեռը: Բայց այդ երազը սկսաւ մթազնիլ, երբ տեսաւ, որ Հայաստանը այն չէ, ինչ որ ինք կ'երազէր, այլ հոն կան՝ կողոպուտ, ապականութիւն, ցուցարարներու բանտարկութիւն, ընդդիմութեան հալածանք: Մէկ գիշերուան մէջ հայրենիքի գեղեցիկ երազը համազաւ, երբ սփիւռքահայը լսեց 1999-ի խորհրդարանի մեծաւորներուն ջարդը, եւ կամ 2008-ի ցուցարարներուն դէմ եղած պետական վայրագ վարմունքն ու սպա-



նութիւնները: Հետագային ցուցարարներէն ոմանք ազատ արձակուեցան, ընդդիմութիւնը սկսաւ խօսիլ պետութեան հետ, վիճակը սկսաւ կամաց-կամաց բարելաւուիլ, հակառակ անոր որ դժգոհողներ կան: Սփիւռքի համար նախարար մը նշանակուեցաւ, թէեւ անոր

ծրագիրները շատ ալ յստակ չեն սփիւռքի երազողներուն համար: Մինչեւ որ հայրենիքը իր կեցուածքը փոխէ՝ «Քալէ կամ սովամահ եղիր», սփիւռքը պիտի շարունակէ իր ճամբով՝ «Քալէ եւ երազէ»:

## Թ. ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### Հայկական խաղաղութիւնը կամ երազը անիրականանալի

**80** տարիներու PAX Sovietica-ն մոռցնել տուած էր, որ Հայաստանը կառուցուած էր 1915-ի Հայոց Ցեղասպանութեան մոխիրներուն վրայ: 1988-ի Սումկայիթի ջարդերը յիշել տուին, որ մոխիրները տակաւին տաք են եւ երբեմնի ջարդարարները պատրաստ են կրկին վերսկսելու 1915-ի բարբարոսութիւնները: Բայց այս բոլորը հայերու մէջ չմարտնչեցին թշնամիին հետ խաղաղութիւն հաստատելու յոյսերը: Հայոց յոյսերը ի դերեւ ելան, երբ Ստեփանակերտի վրայ սկսան տեղալ թուրքիոյ կողմէ հայթայթուած ազե-

րիներուն հրթիռները: Այս անգամ թուրքին հաշիւները ճիշդ չեկան: Հայը յաղթանակող կողմն էր: Յոյսերը վերարժարժուեցան 2008-ին կլոր գնդակի շուրջ, ֆութպոլի մրցումին Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ: Մոռցուած էր, որ յաղթական կը հռչակուէր հակառակորդին բերդէն ներս կոլ նշանակողը: Մինչեւ այն ատեն, որ թուրքերը Հայաստանի շրջափակումը կը շարունակէին, Ապտիլլա Կիլը 1-0 յաղթանակ կ'աճանագրէր միջազգային դիտորդներու համար: Ժընեւի մէջ Արձանագրութեանց ստորագրութիւններուն մի-

ջ ա զ գ ա յ ի ն դիտորդները մրցումը յայտարարեցին՝ 1-1 հաւասար: Բայց համաձայնութիւնը սփիւռքի կողմէ մերժուեցաւ. թուրքերն ալ չգործադրեցին իրենց ստորագրած համաձայնագիրը, այնպէս որ, մրցումը վերջացաւ կրկին 1-1 հաւասար: Շրջափակումը կը շարունակուի, ազերի արձակազէնները կը շարունակեն իրենց փամփուշտները դրկել Մարտունիի վրայ: Մինչեւ այն ատեն, որ երի-



տասարդները կը ճեննէն Երեւանի Արովեան պողոտային վրայ եւ Շուշիի հանրային պարտէզներուն մէջ, խաղաղութիւնը հոն է՝ առանց պատրանքի, յիշելով միշտ լատինական առածը. «Եթէ խաղաղութիւն կ'ուզես, պատերազմի պատրաստ եղիր»:

## Ժ. ԴԷՊԻ ԱՊԱԳԱՅ

### Հայաստան փաղանդներու երկիր

**Ճ**ատրակի խաղերուն Լեւոն Արոնեան աշխարհի երրորդ մեծագոյն ճատրակ խաղացողն է, կը քալէ Տիգրան Պետրոսեանի եւ Գասպարովի հետքերով: Երաժշտութեան մէջ երիտասարդ ճագ-երաժիշտ Տիգրան Համասեան շուտով կը հաւասարի աշխարհահռչակ ճագ-երաժիշտ Թելիոնիուս Մոնքի, իսկ Սերգէյ Խաչատրեան կը մրցի Սթեռնի եւ Մենուիմի հետ: Արագածի փէշերուն երիտասարդ աստղազէտներ Բիրականի աստղադիտարանին մէջ կը հետեւին իրենց նախորդին՝ միջազգային ճանաչում ունեցող մեծ գիտնական, աստղազէտ Վիքթոր Համբարձումեանի քայլերուն: Նոյնը կարելի է ըսել համակարգիչի աշխարհի համար, հոս ալ մեծ իրագործումներ կը կատարուին, համակարգիչի երիտասարդ ճարտարագէտներու «Թումո» կեդրոնին մէջ: Հեռու քաղաքականութենէ՝ մտքի ու գիտութեան ծառայող հայ տղաքը կ'աշխատին իրենց ապագային համար: Հայաստանի մէջ, ուր ոչ մէկ բնական հարստութիւն կայ, հայ երիտասարդը

կը վստահի իր ուժերուն եւ ուղեղին: Այս ձեւով է, որ հայեր կը ցած են շինել Մեծամորի հիւլէական կայանը, որ շատ անելի լաւ պաշտպանուած է անակնկալ ցնցումներէ, քան Ֆուրչիմայի հիւլէական կայանները: Հայաստանի մէջ է, որ ոչինչէն հիմը դրուեցաւ 1996-ի երկրագործական դրամատան, որ ութ տարի յետոյ «Ֆայնէնըլ Թայմզ»-ի կողմէ պիտի հռչակուէր լաւագոյն կազմակերպուած դրամատուներէն մէկը, որուն հազարաւոր աշխատաւորներու միջին տարիքը չ'անցնիր 30-ը: Վերջապէս, շնորհիւ հեռատես եւ ճարտար մարդոց, ունինք լաւ մարզուած 40,000-նոց բանակ մը, որ անտարբեր չի ձգեր դրացի երկիրները, որոնք կրկին թուաբանակով բանակներ ունին: Հայաստանը պիտի գոյատեւէ բոլոր անոնց համար, որոնք հաւատք ունին հայրենիքի հանդէպ:



«Նովել տ'Արմենի», Ռընէ Ծակոյեան, Ֆրանց Կայետ, Կարօ Իլիպէեան եւ Արա Թորանեան Բ. Ծ. Ֆրանսերէնէ թարգմանց՝ ԶԱԿԵ Գ. ՂԱՐԻՊԵԱՆ

# Թափառումներ

## Սփիւռքեան Խնդիրներու վրայ

ՄԻՋՐԱՆ ՔԻՒՐՏՈՂԵԱՆ

1.- Սփիւռքահայու հոգին ծովու ալիքներու նման երբեմն մակընթացութիւն կ'ունենայ դէպի հայրենիք, բայց անտեսանելի մագնիս մը կարծէք ետ կը մղէ զայն դէպի սփիւռք: Յունաստանի, Գանատայի թէ Լիբանանի մէջ պարզապէս «հայ» է ան, իսկ երբ Հայաստան կը գտնուի՝ «յունահայ» է, գանատահայ ու «լիբանանահայ»: Սփիւռքահայու հոգեբանական այս ալեկոծումը, ինքզինքին հետ կռիւը հետզհետէ կը մեղմանայ, կը տկարանայ, նոյնիսկ կրնայ մարիլայն չափով որ.

ա. Սերունդներու հերթափոխութիւն կը կատարուի (մերկայինը՝ յետ Եղեռնի չորրորդ սերունդն է),

բ. վերանկախ Հայաստանի դեկավարութիւնը քաղաքական ու ընկերային իր վարքագծով կը գործէ սփիւռքահայու ըմբռնումներուն ու ձգտումներուն հակառակ ուղղութեամբ եւ ատոր դիմաց՝ գանազան պատճառաբանութիւններով սփիւռքին կը պարտադրուի կրակորականութիւն, համակերպութիւն եւ ոչ թէ բողոքի շարժում: Շարժում, որով պիտի միանար ան հայրենի բնակչութեան բողոքին, պիտի սրտակցէր անոր ցաւին, միմակ պիտի չձգէր զայն իր տառապանքին մէջ...

Հոգեբանական այդ երկփեղկուածութիւնը կը կազմէ սփիւռքահայուն հասարակաց գիծը: Ատկէ անդին, տարբեր-տարբեր ինքնութիւններէ բաղկացած հաւաքականութիւն է սփիւռքահայութիւնը, որու մասին կարելի չէ ընդհանրացումով խօսիլ:

2.- Աշխարհը ճանչցած է հրեական սփիւռքը (Diaspora), որ մօտաւորապէս 2500 տարուան



կեանք ունի: Իբրեւ սփիւռք գործելու առաջնային մեծ փորձառութիւնը եթէ կը պատկանի հրեայ ժողովուրդին, - եւ այդպէս է, - ապա ուրեմն նոյն փորձառութեան մէջ կարելոր տեղ կը գրաւենք մենք, հայերս: Դարերու վրայ տարածուած այս երկու ժո-

ղովուրդներուն իբրեւ ազգ վերապրելու գոյապայքարին մէջ ընդգծելի համեմատականը, իմ կարծիքով, հետեւեալն է.- Հրեաները, իբրեւ հաւաքականութիւն, խորապէս ու անօրինակ մոլեռանդութեամբ կառչած մնացին հինէն ժառանգած իրենց ազգային-

կրօնական խորհուրդներում: Այս համատույն անոնք եղան չափազանցօրէն պահպանողական, որ ապահովեց իրենց գոյատեւումը: Բայց անոնք ունին նաեւ հանդուստը, թէ իրենք աստուածընտիր ազգ են, ինչ որ իրենց կու տար գերադասի հոգեբանութիւն: Այդ հոգեբանութիւնը մէկ կողմէ կեթոյական կենսածեւով ապրեցուց գիրենք (իրենք տարբեր են մնացեալ ազգերէն) եւ միւս կողմէ՝ մղում տուաւ, որ իրենց բնատուր տաղանդով յարձակումներ գործեն ու ղեկավար դիրքեր գրաւեն միջազգային բեմի վրայ, տնտեսական, գիտական, քարոզչական-տեղեկատուական (mass media) քաղաքական, արուեստի, ընկերային գիտութեանց, նոյնիսկ ռազմական մարզերու մէջ, եւայլն: Մինչդեռ մենք, գերազանցապէս աւանդապահ-պահպանողական հոգեբանութիւն ունեցող ազգ, ապրեցանք մեր գոյութիւնը պահելու մղմանը մէջ, հանդուստեւով անօրինակ դժուարութիւններ, նոյնիսկ նուաստացում: Պահպանողականութիւնը մուտք գործեց նաեւ մեր բառապաշարին մէջ, առաւել եւս ամրացնելով այդ հոգեբանութիւնը: հայապահպանում ազգապահպանում, գոյապահպանում, եւայլն, բառեր, որոնք յաճախ ուղղութիւն տուին սփիւռքի ռազմավարական գծի ճշդումին:

3.- Սովորութիւն դարձած է յետեղեմնեան սփիւռքը կոչել դասական, այսինքն հին սփիւռք: Մինչդեռ հինը խրիմն է, Պարսկաստանն է, Մատրասը, Թիֆլիսը, Պաքուն, Պոլիսը, Իզմիրը, Մոսկուան, նոյնիսկ Կիլիկիան, ուր 300 տարուան պետական իշխանութիւն ունեցած ենք... եւայլն:

Երկար տարիներու սփիւռքացման կենսակերպը այնքան արմատացած է մեր հոգեբանութեան մէջ, որ օրինակ Պոլսոյ պատրիարքութիւնը հսկայ արխիւ պէտք է ունենայ տեղեկագիրներու, որոնք եկած են գաւառներէ: Եւ գաւառ ըստածը

Հայաստանն է: Հայաստանը գաւառ՝ Պոլսահայ սփիւռքին համար... Առարկելի չէ սփիւռքացման արմատացումը մեր հոգեբանութեան մէջ: Թերեւս արմատացման այս հանգամանքը նկատի ունենալով էր, որ քսանամեակ մը առաջ Վահէ Օշական Գանատայի մէջ խորհրդանշականօրէն կը յայտարարէր, թէ սփիւռքը արտ-երկիր չէ, այլ երկիր է... Աւելցնեն՝ գէթ հայութեան 2\3-ին համար: Այսինքն, սփիւռքը պիտի մնայ ապրելու վայր՝ հայութեան 2\3-ին համար: «Հայահաւաքը»ը հմայիչ հնչիւն ունի բեմին վրայ, բայց բեմէն վար՝ իրական գետինն է մեր ոտքերուն տակ:

4.- Բաւական ժամանակէ ի վեր եւ

**Երկար տարիներու սփիւռքացման կենսակերպը այնքան արմատացած է մեր հոգեբանութեան մէջ, որ օրինակ Պոլսոյ պատրիարքութիւնը հսկայ արխիւ պէտք է ունենայ տեղեկագիրներու, որոնք եկած են գաւառներէ: Եւ գաւառ ըստածը Հայաստանն է: Հայաստանը գաւառ՝ Պոլսահայ սփիւռքին համար...**

մինչեւ երէկ, սփիւռքի քաղաքական մտածողութեան պատկառելի մէկ շերտը վճիռի շեշտով հրապարակ նետած էր «սփիւռքը ինքնապատակ չէ» կարգախօսը, որ կը թուի թէ լոզունգային-ամբոխավարական իր բնոյթով այնքան ալ քաղաքական խորք չունի եւ հարազատօրէն չի ցոլացներ սփիւռքի ներկայ իրականութիւնը, սփիւռքահայուն անհատական թէ հաւաքական ձգտումները, տագնապները, ինքնութիւնը, որոնք միեւնոյն հասարակ յայտարարը չունին: Այդ կարգախօսի ներգործութեան տակ կը կարծուէր, թէ Հայաստանի անկախութիւնը պիտի մղէր սփիւռքահայերը, որ եթէ ոչ զանգուածային, գէթ հաշուառելի թիւով պիտի ուղղուէին դէպի հայրենիք, մինչ հաւառակը պատահեցաւ: Եթէ իսկա-

պէս «սփիւռքը ինքնապատակ չէ», ապա ուրեմն, առանց անպայման հակադրուելու գաղափարին, պէտք է վերլուծել եւ հանդիչ դարձնել, թէ որքա՞ն իրատեսական է ատիկա, յստակացնելով նաեւ՝ թէ ի՞նչն է սփիւռքի նպատակը, ո՞րն է այդ նպատակին առաջնորդող ուղղութիւնը եւ եթէ ան այդ ուղղութեան կը հետեւի՞ կամ կրնա՞յ հետեւիլ թէ ոչ:

Մեծ իրականութիւն մը մերժել, չի նշանակեր զայն բացատրել: Մեծ իրականութիւն մըն է սփիւռքը, զոր պէտք է ընդունիլ իբրեւ այդպիսին ու վերլուծել զայն: Պաղեստինցիներու օրինակը եւ անոր վրայ կատարուած համեմատական մը հաւանաբար որոշ հիմք մը տայ վերի հարցադրումին. - Արաքական երկիրներու մէջ գաղթակայուած պաղեստինեան սփիւռքը «ինքնապատակ չէ՞րաւ ու չէ՞»: Այդ իմաստով ալ ուղեգիծ ճշդուած է, որ գաղթակայանները պահուին-պահպանուին: Նոյնիսկ իրենց բնակած երկիրներէն քաղաքացիութիւն չստանան անոնք, որովհետեւ պաղեստինեան ազատագրութեան ռազմավարական նպատակին մէջ իրենց

պարտադրուած սփիւռքը ժամանակաւոր բնոյթ ունի: Ժամանակաւոր ըլլալու այս հանգամանքը պատճառ մը չէ՞րաւ սակայն, որ չկազմակերպուին: Ընդհակառակն, զինական ու վարչական կազմակերպուածութեամբ, պետութեանց մէջ «փոքր պետութիւն» ստեղծեցին, որպէս զի աւելի արդիւնաւոր դարձնեն ազատագրական իրենց պայքարը: Վերջնական յաղթանակէն ետք, վստահ որ պիտի հետեւի վերջին հանգրուանը, այսինքն պաղեստինեան «սփիւռք»ի քանդումը, որպէսզի դէպի Պաղեստին ժողովրդային հոսքը յաջողի: Գաղթակայանի կենսածեւը եւ պաղեստինեան պայքարի թափն ու տեսակարար բնոյթը վառ կը պահեն կորուսեալ հայրենիք վերադառնալու

ծգտումն ու նպատակը: Գարլ Մարքս կատարած է իմաստուն հաստատում մը.- «Կեցութիւնն է, որ կը ճշդորոշէ գիտակցութիւնը»: Յայ մարդուն մօտ, նոյնիսկ հայկական սփիւռքի ղեկավար տարրին գիտակցութեան մէջ կը շարունակէ՞ արդեօք, իբրեւ մղիչ գործօն, դեր ունենալ հայրենիք վերադարձի նպատակը: Այս իմաստով բացառութիւններ կան, բայց անոնք առաւել եւս կը շեշտեն հակառակին փաստը: Տակաւին չենք խօսիր Յայաստանէն մեծագանգուած արտագաղթողներու մասին, որոնք սփիւռքի մէջ տուն-տեղ եղած՝ սկսած են խրիլ օտար միջավայրերու մէջ: Իսկ նոր սերունդները արդէն իսկ հարազատ կը զգան իրենց բնակած երկիրներու միջավայրին՝ ամէն իմաստով:

5.- Սփիւռքեան ռազմավարութիւն կարենալ մշակելու համար, անհրաժեշտ է վերլուծել սփիւռքի իսկական տարողութիւնն ու տազնապները, նկատի առնելով հիմնական կէտ մը այն մասին, որ իրենց տարբեր միջավայրի բերումով թէեւ տարբեր ինքնութեամբ կը կազմաւորուին սփիւռքի հայերը, բայց եւ այնպէս անոնք, բոլորն ալ ունին հոգեբանական միեւնոյն գիծը, որ կը կազմէ անոնց հասարակ յայտարարը.- երկակենցաղ ըլլալու հոգեբանութիւնն է անիկա, այսինքն՝ հայ եւ լիբանանցի, ֆրանսացի եւ հայ, հայ եւ ամերիկացի, եւայլն, ինչ որ կրնայ հիմք դառնալ՝ դաստիարակութեան մարզին ռազմավարական բովանդակութեան: «Սփիւռքը ինքնանպատակ չէ» լոզունգէն հրաժարիլը չի նշանակել անպայման հակառակին համոզումը ունենալ, այլ կը նշանակէ կանխակալ համոզումի կաշկանդումէն ձերբազատուիլ եւ համակողմանի քննարկման ենթարկել սփիւռքի ընկերային, հոգեբանական, տնտեսական, քաղաքական ու այլ խորքային տուեալներն

ու պարզած իրավիճակը եւ այդ տուեալներու հիման վրայ եզրակացութեան յանգիլ ու երկարժամկէտ ծրագրով կազմակերպուիլ, եւ ոչ՝ հակառակը: Երբ կարգախօսով մը կ'եզրակացուի սփիւռքի ինքնանպատակ չըլլալը, արդէն իսկ վճռուած կ'ըլլայ անոր ճակատագիրը: Մինչդեռ, մտածումի ճիգ մը աւելորդ չէ, այսպէս ըսուած, օրինակ, «համաշխարհային ազգ» յղացքի մը շուրջ բոլորուիլ՝ փորձելով նման գաղափար մը զարգացնել, ինչ որ թերեւս նոր հեռանկարներ բանայ մեր առջեւ եւ ռազմավարական նոր ուղեգծի մը ծնունդ տայ:

Անշուշտ, բոլոր պարագաներուն ալ համայն հայութիւնը պիտի ա-

բռնումներով ու լեզուներով դաստիարակուող եւ աճող հայ սերունդները, ցրուած աշխարհով մէկ, գաղափարի մը շուրջ կեդրոնացնելու, գիտակցական մակարդակի վրայ՝ պայքարի մէջ քով-քովի բերելու անհրաժեշտութիւնն է սա, որպէսզի հայը-հայուն կապող թելը չխափուի:

6.- Սփիւռքը վտանգուած է արդեօք, կարճ կամ երկար վազքի վրայ: Առանց հողի, հայրենիքէն դուրս կարելի՞ է տեսլել, տոկալ, ստեղծագործել, նպատակներ ունենալ ու իրագործել զանոնք թէ կարելի չէ:

Պատասխան մը տալու համար խուսափինք մանուածապատ վերլուծումներով ենթադրութիւն կատարելէ: Բայց շեշտենք, որ վտանգաւոր է վտանգի հոգեբանութիւն սրկել շրջապատին ու սերունդին մէջ: Վտանգաւոր է վտանգի մասին խօսիլը: Կայ փաստը, որ երկար դարեր ապրեցան Կիլիկիան, Պոլիսը, Պարսկաստանի հայ գաղութը, եւայլն: Բուն վտանգը, ահազանգիչ վտանգը լեզուի կորուստն է, որու համար ալ Կիլիկիոյ Արամ Ա. կաթող.ը 2007-ն հայ

**Բուն վտանգը, ահազանգիչ վտանգը լեզուի կորուստն է, որու համար ալ Կիլիկիոյ Արամ Ա. կաթող.ը 2007-ն հայ լեզուի տարի հռչակել է երեք համագումարներ կազմակերպել է երբ, արդէն իսկ ձեռնարկած է խորհրդակցութեանց՝ կազմելու համար խորհուրդ մը:**

ռաջնորդուի 1919-ին բանաձեւուած «միացեալ Յայաստան»ի տեսլականով, հայապատկան հողերու ազատագրութիւնը դարձնելով գերագոյն նպատակ, որովհետեւ անիկա ազգային իրաւունքի, արդարութեան եւ ազգային արժանաւորութեան խնդիր է, մեր գոյատեւման հետ առնչուած քաղաքական պահանջ մը ըլլալուն զուգահեռ: Եւ ազգային այս տեսլականը պիտի վերածուի հայութեան բոլոր հատուածները իրար միացնող, իրարու զօրող, իրարու հետ շողախող քաղաքական ու գաղափարական հիմնական ազդակի, որուն այնքան պէտքը ունի սփիւռքը: Այսինքն, տարբեր, նոյնիսկ յաճախ իրարու հակադրուած մշակոյթներու ու քաղաքակրթութեանց ազդեցութեան տակ, տարբեր ըմ-

լեզուի տարի հռչակել է երեք համագումարներ կազմակերպել է ետք, արդէն իսկ ձեռնարկած է խորհրդակցութեանց՝ կազմելու համար խորհուրդ մը, որպէսզի պատրաստուի հայեցի դաստիարակութեան համասփիւռքեան ծրագրի մը հիմնական նախագիծը, որու վրայ պիտի պատշաճեցուին գաղութներու հայակրթական ծրագիրները: Ապա պիտի ձեռնարկուի հայերէն դասագրքերու հիմնամիութիւնը նմարութեան, նախապէս յստակացնելով անոնց ուղղութիւնը, լեզուամտածողութիւնը: Տեղեակ են, որ նմանօրինակ նախաձեռնութիւններու մէջ է նաեւ Սփիւռքի Նախարարութիւնը: Իրարմէ անջատ առնուած այս նախաձեռնութիւնները կրնային լաւատեսութիւն ներշնչել՝ զիրար գերա-

զանցելու եւ աւելի լաւին ձգտելու նրցակցութեան ոգիով, բայց նկատի առնելով հարցին նրբութիւնն ու խաչածեւումէն յառաջանալիք այլապէս մտահոգիչ հաւանական անպատեհութիւնները, զուսպ կը դարձնեն լաւատեսութիւնը: Յամենայնդէպս, լեզուի կորուստին վտանգը առկայ է եւ զայն ամբողջապէս չէզոքացնելու գործը՝ շատ դժուար ու գերլարուած ճիգ կը պահանջէ:

7.- «Օտարութեան» մէջ սփիւռքի ցրուածութիւնը հաւաքելու-համախմբելու խնդիրը, միշտ գիտակցական մակարդակի վրայ անշուշտ, մտային փնտռտուքի մեծ ճիգ կը պահանջէ: Հոս անտեղի չէ շեշտել, որ սփիւռքը եղած է արտադրող, ուր պահպանուած է ու բարգաւաճած մշակոյթ, ծաւալած են քաղաքական գործունեութիւն, կրօնական-եկեղեցական կեանք ու կազմակերպութիւններ: Ազգային զարթոնքի առաջին շեփորահարը սփիւռքէն էր.- Վենետիկ, Մոսկուան, Թիֆլիսը, Պոլիսը հանդիսացան մշակոյթի վառարաններ, ուրկէ ծնաւ ազատութեան գաղափարի քահակիրներու մեծ բանակ: Հայ ժողովուրդի կեանքին մէջ բախտորոշ դերակատարութիւն ունեցող կուսակցութիւնները՝ ՀՅԼԿԵԱՆ, Հ.Յ.Դ., ՌԱԿ ծնունդ առին սփիւռքի մէջ: Նոյնպէս ՀՕՄը, Հ.Մ.Ը.Մ.ը, Բարեգործականը, Համազգայինը, Թէքեանը: Հայկական մամուլը, տպագրական գործը, հրատարակութիւններ, թատրոն, երգարուեստ, եւայլն: Եղան ժամանակներ, երբ նուազագոյն բաղդատական մը կարելի չէր կատարել սփիւռքի իրագործումներուն եւ հայաստանեան հողի վրայ եղածներուն միջեւ: Այս բոլորը կ'ընդգծուի, յանգելու համար, որ ճիշդ չէ սփիւռքին նայիլ իբրեւ հայակու հսկայ վիշապի, այդպիսին չէ եղած միշտ, բայց եւ այնպէս կրնայ ըլլալ վաղը, քանի որ սկսած ենք թերանալ ինքնակազմակերպ-

ման աշխատանքի մէջ, մեր դիմադրականութիւնը մշտատես ուժեղացնելու պարտաւորութեան մէջ եւ ընտրած ենք դիւրին ճամբան.- Հայաստան: Հայաստանի օժանդակութիւն կ'ըսենք ու կը հանդարտինք եւ կը հանդարտեցնենք՝ ամէն ինչ լուծած ըլլալու խղճի հանգստութեամբ: Գիտենք որ այդպէս չէ, բայց լոգունգը դարձուցած ենք դրօշակ, բան մը, որ դիւրինն է եւ ի՛նչ խօսք, որ ունի նաեւ էֆէ մը, հռետորական հմայք մը...: Սփիւռքի անյետածգելի արաջնահերթութիւնները անտեսելով հայրենիքին օժանդակելը հայրենասիրութեան գրաւական չէ: Վերջին հաշուով, բարեգործութիւնը անպայման հայրենասիրութիւն չէ, ինչպէս ոմանք

**Ճիշդ չէ սփիւռքին նայիլ  
իբրեւ հայակու հսկայ վիշապի,  
այդպիսին չէ եղած միշտ, բայց  
եւ այնպէս կրնայ ըլլալ վաղը,  
քանի որ սկսած ենք թերանալ  
ինքնակազմակերպման  
աշխատանքի մէջ,  
եւ ընտրած ենք  
դիւրին ճամբան:**

կը յայտարարեն, այլ մարդասիրութիւն է, ինչպէս եւ ներդրում կատարելը գործարարութիւն է, պըզնիս, որուն մէջ կայ շահ, կայ նաեւ վնաս, ինչպէս ամէն գործի մէջ: (Տխուր հաստատում.- օտարութիւն բառը չակերտեցի, քանի որ, ըստ ինձի սփիւռքը օտարութիւն չէ այլեւս, նոյնիսկ 15-20 տարիներէ հայրենաթող հայերու զաւակներուն համար):

8.- Գիտենք, որ կեանքը բնական ճամբով կ'ընթանայ, բայց ոչ անպայման մեր ուզած ուղիով: Որպէսզի թաւալող ժամանակին հոլովոյթը կարենանք մեզի ենթարկել եւ սփիւռքեան մեր կեանքը հունաւորել այնպէս, ինչպէս որ մենք կ'ուզենք, անհրաժեշտ են ծրագրունը, գիտակցութեան ամրացու-

մը, ինքնակերպողնացունը: Հասարակական կեանքի ընթացքը հունաւորելու համար են արդէն ընկերութեան ստեղծած կառոյցները, կազմակերպութիւնները՝ բոլոր մակարդակներու վրայ: Կեանքի գոյատեւումը ապահովուած է պայմաններուն համեմատ մարդուն կազմակերպուելու տաղանդին շնորհիւ: Թէեւ շատ չեն, բայց արդէն կան ծագումով հայեր, որոնք սկսած են ըսել «Իմ մեծ հայրս հայ էր»: Ասոնց բազմացումը արգիլելու գործը ճիտին պարտքն է կազմակերպուած սփիւռքին, որուն ղեկավար տարրը փոխանակ նուիրուելու վերակազմակերպման եւ լծացումէն դուրս գալու մեծ ճիգի մը, կարծես համակերպած է վայրէջքին եւ որդեգրած՝ «ամէն բան չտեսնելու, ամէն բան չլսելու» վարքագիծը: Այլապէս...

9.- Սփիւռքի մնայուն ըլլալը ընդունիլ կը նշանակէ ինքնակազմակերպուիլ եւ նուիրուիլ մեր տունը վերակառուցելու գործին, այն հասկացողութեամբ, որ սփիւռքի գոյութեան գրաւականը ինքն իր մէջն իսկ է: Նախ՝ մեր առաջնահերթութիւնները, եթէ կ'ուզենք իսկապէս եւ երկարաժամկէտ օգտակար ըլլալ Հայաստանին, անոր ի նպաստ աշխարհին բացուած իբրեւ լայն պատուհան մը, ուրկէ իրեն պակասած թթւածինը (oxygene) կրնայ առնել Հայաստանի Հանրապետութիւնը: Կրնա՞յ սփիւռքը այդ ներուժը ունենալ, այդ պատուհանը դառնալ: Վկայութիւն թող տայ Շեւարտնան՝ ժողովուրդի երկարամեայ անդամը, որ խորապէս ճանչցած եւ ուսումնասիրած պէտք է ըլլար աշխարհի մէջ գործող ու դերակատար ուժերու հաւասարակշռութիւնը, որու համար ալ, կ'ենթադրենք, նշանակուեցաւ Խորհրդային Միութեան արտաքին գործոց նախարարի բարձր պաշտօնին եւ երկար տարիներ վարեց այդ պաշտօ-

մը: Բան մը, որ վստահաբար ատիկա առիթ տուաւ իրեն, որպէսզի աւելի խորացնէ միջազգային խնդիրներու մէջ ուժերու յարաբերութեանց ճամաչողութիւնը: Ծանօթ է, որ Խ. Սիուբեան փլուզումէն ետք եղաւ Վրաստանի նախագահ: Իր երկրի դիմագրաւած դժուարութեանց դիմաց, առիթով մը յայտարարեց.- «Ատրպէյճանը քարիւղ ունի, իսկ Չայաստանը՝ սփիւռք... Վրաստանը զրկուած է ուժի այդ բարիքներէն...»: Քանի մը ամիս առաջ, Սփիւռքի նախարարին, տիկին Յրանոյշ Յակոբեանին երբ նկատել տուի այս պարագան, դիպուկ յաւելում մը ըրաւ, «Քարիւղը կրնայ սպառիլ, մինչ մարդուժը կ'աճի...»:

Մօտաւորապէս քսանամեակ մը պէտք եղաւ, որպէսզի Չայաստանի քաղաքական ղեկավարութիւնը հասկնայ այն, որ հասկցած ու յայտարարած էր օտար քաղաքական գործիչը: Եւ տակաւին եթէ՞ հասկցած է, կամ շրթունքի ծառայութիւն կը մատուցէ՞ հաճելի թուելու համար մեր ականջներուն: Իմ այս կասկածը անտեղի չեմ նկատեր...

10.- Կիլիկիոյ Արամ Ա. կաթող.ը ամէն պատեհ առիթի կը բարձրածայնէ, որ ազգին առջեւ ծառայած խնդիրները դիմագրաւելու համար անհրաժեշտ է խորհրդակցիլ եւ Չայաստան-սփիւռք գործակցութեան ենթահող ստեղծել, բայց այնպէս կը թուի, որ լսող ականջներ չկան: Հարց է նաեւ՝ թէ գործակցութիւն որո՞ւ հետ...

Արամ Ա.ի գործակցութեան առաջարկ-պահանջքը ունի հասցէ մը, որ ինքն է, կ'ենթադրեմ: Բայց ինքը կրօնապետ է, եկեղեցական հարցեր տնօրինող, նաեւ՝ հայակրթական, որոնց մէջ գործակցութիւնը աւելի քան անհրաժեշտ է: Բայց կան քաղաքական ու այլ մարզեր, որոնց համար գործակցութեան հասցէ գոյութիւն չունի: Ահա հոս է, որ կայ բաց մը, լուծելիք խնդիր մը,

որուն համար զբաղող չկայ...: Քսան տարիներէ ի վեր մնայուն օրակարգ է «Չայաստան-սփիւռք գործակցութիւն»ը, որուն բնոյթը կը դժուարանամ բացատրել:

Գործակցութիւն՝ ի՞նչ մարզերու մէջ: Տնտեսակա՞ն, գիտակա՞ն, ճարտարարուեստի՞: Այդ տեսակ կեդրոններ չունի սփիւռքը, որոնց հետ գործակցութեան մարզեր ստեղծուին ու փոխանակումներ կատարուին: Կան հայ անհատներ, որոնք ներդրումներ կը կատարեն Չայաստանի մէջ, ենթակայ շահի կամ վնասի: Ձբօսաշրջութեան: Հաւանաբար: Բայց վկան ենք, որ Չայաստանէն սփիւռքեան գաղութներ զբօսաշրջող քաղաքական-պետական գործիչներ, որոնց ա-

ղեր), որդեգրել պետական համակարգ մը, ուր պիտի գործէ երկպալատ դրութիւն, որուն մէկուն մէջ պիտի ներառուին սփիւռքի ներկայացուցիչներ...

Շուտիկութեամբ մը հրապարակ նետուած այս առաջադրանքը, թեր ու դեմ տեսակետներու պատճառ դառնալէ ետք, կը թուի թէ շուտով ալ մոռացութեան տրուեցաւ: Բնական ճակատագիրը մակերեսային առաջարկներու, որոնք կը թելադրուին տուեալ պահէ մը:

Այս մասին կարգ մը յօդուածագիրներ հրատարակեցին հարցումներ, որոնք պատասխան չունեցան, եւ... չունին: Ներկայացնեմ գլխաւորներ.-

ա.- Սփիւռքահայերէն հազիւ 50 հազար հոգի միայն ստացած են հայաստանեան քաղաքացիութիւն: Ասոնց մէջէ՞ն միայն պիտի ըլլան սփիւռքի ներկայացուցիչները:

բ.- Պատկերացում կա՞յ, թէ ի՞նչ մեքենականութեամբ պիտի ընտրուին այդ ներկայացուցիչները, թէ՞ պիտի նշանակուին ՀՀի իշխանութիւններէն:

գ.- Մտահոգիչ չէ՞ որ նման պարագայի մը հայաստանեան քաղաքական ամուլ վէճերն ու աթոռակռիւր կր-

ման փոխադրուիլ սփիւռք մոռցնել տալով մեր հրատապ խնդիրներն ու առաջնահերթութիւնները:

դ.- Ընտրովի թէ նշանակովի այդ ներկայացուցիչները լիազօրուած պիտի ըլլան ազգային կարեւոր ու պատմակշիռ հարցերու նկատմամբ ամբողջ սփիւռքի անունով որոշումներ կայացնելու:

ե.- Ինչպէ՞ս առաջքը պիտի առնուի այն պարագային, որ այդ ներկայացուցիչները սպառնալիքով կամ կաշառքով եւ կամ սեփական համոզումով կողմնորոշուին սփիւռքահայութեան ըմբռնումներուն, ձգտումներուն եւ ազգային դատի մեր պատկերացումներուն հակառակ ուղղութեամբ: Աչքի առաջ ունիմ, օրինակ, Չայաստան-Թուրքիա արձանագրութեանց

**Քսան տարիներէ ի վեր մնայուն օրակարգ է «Չայաստան-սփիւռք գործակցութիւն»ը, որուն բնոյթը կը դժուարանամ բացատրել: Գործակցութիւն ի՞նչ մարզերու մէջ: Տնտեսակա՞ն, գիտակա՞ն, ճարտարարուեստի՞:**

առաջադրած օրակարգն է երկուստեք յարաբերութիւններու խնդիրը, անոնց մէջ նոյնիսկ ՀՀի նախագահ, կու գան, օրինակ Յունաստան, կը հանգստանան փարթամ պանդոկներու կամ որեւէ կղզիի մէջ, եւ ոչ մէկ շփում կ'ունենան գաղութին հետ, բացառութեամբ դաշնակցական գործիչներու, որոնք արդէն օրկանական կապեր ունին գաղութներու հետ, իրենց պատկանած կուսակցութեան ճամբով: Այս բացառութիւնները սակայն չեն փրկեր օրակարգին բովանդակութիւնը:

Հոս, թերեւս կ'արժէ պահ մը կանգ առնել ՀՀի նախագահին նորագոյն առաջադրանքին վրայ, զոր հրապարակեց Սփիւռքի նախարարը, ըստ որուն կը նպատակադրուի (ե-



տխուր նախընթացը:  
Կարելի է երկարել պատասխան  
չունեցող հարցումներու շարքը...:

11.- Շուրջ քսանամեակի մը լո-  
զունգն է «զօրաւոր սփիւռք՝ հզօր  
Հայաստանի մը համար»: Սքանչե-  
լի: Բայց արդեօ՞ք կը տեսնենք  
սփիւռքի զօրացումը, թէ ականա-  
տես ենք, թէ ինչպէս կը լուսանց-  
քայնանան արդէն իսկ սպառումի  
ենթակայ սփիւռքեան գործօններն  
ու կառոյցները:

Վստահաբար երկրորդն է պատաս-  
խանը: Մեսիայի՞ կը սպասուի ախ-  
տաճանաչում կատարելու եւ կա-  
ցութիւնը վերափոխելու ճիգի մը  
համար: Հաստատելի է, որ վերան-  
կախացումէն քսանամեակ մը վերջ  
Հայաստանը տակաւին  
հայուն պատկերացու-  
ցածը չէ, իսկ սփիւռքը  
հետզհետէ կը կորսնցնէ  
քաղաքական իր ջիղը:

12.- Ժիրայր Դանիէլեան  
բանասիրական իր նորա-  
գոյն հրատարակութեան  
մէջ Շահան Շահնուրի  
վաստակը ներկայացնե-  
լու իր վերլուծումին՝ շեշ-  
տը դրած է դիպուկ այն  
մտածումին վրայ, որ  
գաղթականութիւնը ող-  
բերգական տեղաշարժ է  
թէեւ, բայց եւ այնպէս անոր թիրա-  
խը կրնայ ըլլալ վերադարձը: Ահա-  
ւորը սփիւռքացումն է, որ վերջնա-  
կան հանգրուանում կը նշանակէ...:  
Սփիւռքը վերջնական այդ հանգ-  
րուանումին մէջ չէ՞ արդեօք:

13.- Քանի որ խօսքիս սկիզբը  
հրեաներուն հետ զուգահեռ մը կա-  
տարեցի, նոյնաման զուգահեռով  
մը վերջացնեն թափառումներս.-  
Հրեաները ապրեցան, կ'ապրին ու  
պիտի ապրին մեծ սպասումով մը,  
Մեսիային սպասումով: Կը սպասեն  
որ պիտի գայ Եհովայէն ղրկուելիք  
մեսիան, որ պիտի իրականացնէ ի-  
րենց նպատակները, իղծերը: Եւ  
այդ սպասումը անվերջ է:  
Մենք ապրեցանք՝ նպատակներ ա-  
ռաջադրելով: Ցեղասպանութենէն

վերջ կազմուած սփիւռքը ապրե-  
ցաւ ու ինքզինք կազմակերպեց  
անկախ պետութիւն ու միացեալ  
հայրենիք կերտելու նպատակով:  
Եւ գիտենք, որ երբ նպատակ կ'ա-  
ռաջադրես ու այդ նպատակդ կ'ի-  
րականանայ, կը գտնուիս պարա-  
պի առջեւ, երբ մանաւանդ նոր  
նպատակ չես ունենար:

Կեանքի անիմաստութիւնը իմաստ  
կը ստանայ նպատակով: Ուրեմն,  
սփիւռքի գոյութիւնը որպէսզի ի-  
մաստ առնէ, պէտք է նպատակներ  
ունենայ: Անկախ պետութիւն ունե-  
ցանք, որուն մեծ նպատակն է միա-  
ցեալը:

Ներկայի մեր տագնապը նպատա-  
կի բացակայութիւնն է: Անցեալի  
չէն ու կազմակերպ գաղութներ

**Ներկայի մեր փազնապը  
նպատակի բացակայութիւնն է:  
Անցեալի շէն ու կազմակերպ  
գաղութներ չկան այսօր:  
Պատճա՞ռը: Իմ կարծիքով  
նոր նպատակներ  
չկարենալ առաջադրելու  
հետեւանքն է:**

չկան այսօր: Պատճա՞ռը: Իմ կար-  
ծիքով նոր նպատակներ չկարենալ  
առաջադրելու հետեւանքն է:

14.- Ըսենք նաեւ արժանին.-  
Պահ մը միայն փորձենք պատկե-  
րացնել մեր հայրերուն ու մեծ հայ-  
րերուն սերունդը, որ զանազան եր-  
կիրներու մէջ ցանուցիք եղաւ ա-  
նօզնական, անտուն, անգործ, տե-  
ղական լեզուներուն, անոնցմէ շա-  
տեր՝ նաեւ հայերէնին անտեղեակ:  
Հոս-հոն ինկած անդիմազիծ ու  
գաղթական բազմութիւն մը, որ  
նուիրուեցաւ տիտանեան ճիգի՝  
ինքզինք վերականգնելու կամքով:  
Շատ կարճ ժամանակամիջոցի մէջ  
կազմակերպուեցաւ այնպէս, որ  
պետական տարողութեամբ գոր-  
ծեր կատարեց:

Եւ ուշադրութիւն: Այդ գործերը յա-  
ռաջ եկան ոչինչէն: Առանց որեւէ  
նեցուկի ու արտաքին օժանդակու-  
թեան: Ընդհակառակը: Նոյնիսկ  
անպակաս չեղան սփիւռքի ուժե-  
րը ջլատելու, զայն պառակտելու  
ցաւագին փորձեր՝ սեփական հայ-  
րենիքի համայնավար կամ ոչ հա-  
մայնավար վարչակարգէն ...: Գի-  
տենք, թէ պետութիւններ որքան ե-  
ռանդ ու մարդուժ կը տրամադրեն,  
նիւթական ներդրում ու քաղաքա-  
կան օժանդակութիւն կու տան ի-  
րենց սփիւռքներուն, բայց եւ այն-  
պէս չեն յաջողիր անոնց ներարկե-  
լու այն կազմակերպութիւնները  
եւ ուժականութիւնը, որ ունի հայ-  
կական սփիւռքը:

Եւ իրապէս, բռնահանութենէն  
սփիւռքացած հայութեան  
պարզած պատկերին դիմաց,  
իբրեւ մարդ միայն կարելի է  
զարմանալ ու հիանալ, իսկ  
իբրեւ հայ՝ արդարօրէն  
հպարտանալ:

Կը մնայ ընել այնպէս, որ ե-  
կող սերունդներն ալ ունենան  
միեւնոյն հպարտութիւնը: Ո-  
րուն համար ալ՝ հայատեւու-  
մի խնդիր նկատել սփիւռքի  
առաջնահերթութիւնները:

15.- Սփիւռք եւ Հայաստան  
միեւնոյն ամբողջութեան բե-  
կորներն են եւ տարբեր չեն ի-

րարմէ: Լիբանանցի հանրածանօթ  
գրող-բանաստեղծ Խալիլ էլ-Ճէպ-  
րան ողբերու շարք մը ունի, որոնց-  
մէ մին կ'ըսէ. «Ողբամ այն ազգին,  
որ բեկորներու բաժնուած է եւ այդ  
բեկորներէն ամէն մէկը ինքզինք  
ազգ մը կը սեպէ...»:

Որով տարբեր պրիսմակէ պէտք է  
դիտել ու վերլուծել սփիւռքը, եւ  
տարբեր պրիսմակէ՝ Հայաստանը:  
Բայց այս երկուքը տեսնել միեւնոյն  
պարունակին մէջ, որ մէկ ու ամբող-  
ջական հայութիւնն է:

Այնպէս, ինչպէս միեւնոյն արմատէն  
ծլարծակուած ու աճած երկու ծա-  
ռերու, որոնցմէ իւրաքանչիւրը  
անհրաժեշտաբար ու առանձնա-  
պէս պէտքն ունի խնամքի ու հո-  
գածութեան՝ կարենալ պտղա-  
բերելու համար:

# Սփիւռքը՝ Հայաստանի վերանկախացման լոյսին տակ

ՇԱՀԱՆ ՖԱՐՄԱԾԵԱՆ

Նայ ժողովուրդը թե՛ աշխարհագրական, թե՛ ալ դժբախտաբար լեզուական իմաստով, կը բաղկանայ երկու համահասար ու համազօր բեւեռներէ: Ոչ անշուշտ բեւեռացման ժխտական իմաստով այլ խմբաւորման իմաստով: Շարք յաճախ կ'ըսենք, ու այդպէս է, թէ սփիւռքահայութիւնը չկազմուեցաւ մեր կամքով, այլ ընդհակառակը սփիւռքը պարտադրուեցաւ հայութեան՝ պարմական ծանօթ եղելութիւններէն ետք: Ինչ պարտաւեցաւ, երբ 20 րարի առաջ վերահաստատուեցաւ Նայաստանի անկախութիւնը: Որո՞նք էին ակնկալութիւնները հայրենաբնակ ժողովուրդի եւ սփիւռքահայութեան շարքերէն ներս:

Անկախութիւնն ու ազատութիւնը փրկեցրական արժէքներ են ու արոր համար նոյնն էր բացառիկ խանդավառութիւնը երկրի ու արտերկրի մէջ. կը փարբերէին թերեւս առաջնահերթութիւնները՝ հասկնալի պարճառներով: Նայրենիքէն ներս կեանքի ու ապրուստի պայմաններու բարելաման ակնկալութիւնը մեծ ըլլալով հանդերձ, հայրենի ժողովուրդը անմիջապէս գրկեց Արցախի հիմնախնդիրը ու իր պահանջարկական ճայնը բարձրացնելէ ետք, արիւնով կերտեց Արցախի հանրապետութիւնը: Սփիւռքը անմասն չմնաց անշուշտ, քանի Արցախը եւ ազգային փրկալականներու իրականացումը սփիւռքահայութեան հիմնական ու անսակարկելի առաջնահերթութիւնը կը կազմէին:

Սփիւռքը կ'ակնկալէր ընկերային արդար կարգերու հաստատում, ժողովրդավարութիւնն ու հայութեան միաւորման ստարտող քայլեր: Նայրենի բնակչութիւնը իր ուսերուն վրայ



ունէր սովեթական ժխտական ժառանգ մը, որուն ազդեցութիւնը չէր կրնար յաջողապէս մարակարարել, առանց հայրենիքի ղեկավարութեան համապարասխան վճռակամութեան: Ի փարբերութիւն նախկին Սովեթական Միութենէն ձերբազատուած այլ երկիրներու եւ ժողովուրդներու, կար այն համոզումը, թէ հայ ժողովուրդը իր բացառիկ իրաւապկութիւններով, պիտի յաջողէր նուաճել փարբեր հանգրուանները, թօթափելով գոյութիւնն ունեցող մրայնութիւնները՝ արագօրէն: Այդպէս չէր:

Մինչ այդ 1991-ի Սեպտեմբերէն ետք, պարմական այս անկանխարեսելի ու անսպասելի իրադարձութիւնը, մշուշապար երագ մը իրականացած փրեսնելու ոգեւորումը, հասկնալի խանդավառութիւնն պարճառեց սփիւռքահայութեան, զգացական պոթելումներու կլիմայ, բայց նաեւ «մեր ընելիքները վերջացած, կամ գրեթէ վերջացած» փրեսնելու սողացող հոգեբանութեան մը սրեղծումը. նամանաւանդ որ նկարառելի թիւով սփիւռքահայեր՝ յայտարարելով, թէ «մենք հոն չենք ապրիր, պայմանները չենք գիտեր, հայրենի ժողովուրդն է որ պիտի որոշէ, մենք

պիտի հետեւինք», փաստօրէն կը վերածէին սփիւռքը պարզ հայասեր, քաղաքականօրէն անպէտ ու անձեռնահաս, անդիմագիծ ու անջարգանգուածի մը, երբ ընդհակառակը հայութեան ամբողջութեան ներուժն էր որ պէտք էր օգտագործել:

Վերջին քսանամեակի ընթացքին, այսինքն անկախութեան վերահաստատումէն ետք, հայրենիքի պարկերը գոհացուցիչ չէ. ցուցափեղկային փոփոխութիւնները զգալի են, գլխաւորաբար մայրաքաղաքի պողոտաներուն վրայ, սակայն արմարական կամ առնուազն հնարաւոր բարեփոխումները կը կաղան գրեթէ բոլոր մարզերէն ներս՝ ժողովրդավարութեան արմարացում, ընկերային ապահով ու արդար մթնոլորտի սրեղծում, փրեսնութեան բարոյականացում, դարական համակարգի առողջացում եւ այլն: Այս բոլորը վարահարար կ'ազդեն հայրենաբնակ ժողովուրդին վրայ ու կ'առաջնորդեն փրագնապալի երեւոյթի մը, որ Նայաստանէն, մինչեւ օրս, շարունակուող արիւնահոսութիւնն է, արտագաղթն է դէպի ներքին սփիւռք (գլխաւորաբար Ռուսիա) ու դէպի արտաքին սփիւռք, որուն պարկերը բոլորովին փոխուած

է: Տայաստանի քաղաքական կեանքը կարելի չէ փակալին բնականոն նկատել ընդհակառակը. բացի մէկ կամ երկու գաղափարական յարուկ յարկանիշներ ունեցող կուսակցութիւններէ, որոնք փոքրամասնութիւն են, մնացեալները պարահական ու միայն իշխանութեան փիրանալու համար սրեղծուած մենափիրական խմբաւորումներ են. այս խմբաւորումներու ճամբով, միարեղուած ու նոյնացած են գործադիր, օրէնդիր ու նոյնիսկ դատական կառոյցները, յառաջացնելով աղաղակող փրփեսական հակապարկերներ, որոնք վստահաբար ոչ միայն չեն ստարեր արտահոսքի կասեցման, այլ ընդհակառակը փագնապալի փրկոսներու կը հասցնեն երեւոյթը:

Անցնելով սփիւռքին, ըսենք անմիջապէս, թէ գաղութային կառոյցները ջլարուած են. աւանդական կառոյցներ, որոնք փասնամեակներ շարունակ գրեթէ կառավարական չափանիշներով գաղութներ ղեկավարած ու մարակարարած են, այսօր կը գրնուին թուլացման ու անարբերութեան հանգրուանին: Մարդոժի պակասը վարանգատը համեմատութիւններու հասած կը թուի ըլլալ, թէ որովհետեւ կամաւոր աշխատանք ընծայելու պարտաստականութիւնը լուրջ նահանջ կ'արձանագրէ, թէ ալ որովհետեւ աւելի առաջ նշուած հոգեբանութիւնը (այժմ հայրենիք ունինք, մենք քիչ ընելիք ունինք) չ'արօներ կամաւոր աշխատանքի կարեւորութեան անփոխարինելիութեան ու - մանաւանդ այսօր, ինչպէս քիչ վերջ պիտի փեսնենք - բացարձակ անհրաժեշտութեան ընկալումը: Անշուշտ անցեալին եւս կամաւոր աշխատանքի արժէքի ու կարեւորութեան ընկալումով էր որ գաղութները պահուեցան ու յաջողութիւններու առաջնորդուեցան, ոչ միայն որպէս գաղութներ, այլ որպէս ընդհանրապէս հայ ժողովուրդի ձայնը փարածող միարներ, այսօրուան պայմանները սակայն այնպիսին են, որ քայլ մը անդին երթալու պահանջը ոչ միայն այժմէական սուր խնդիր մըն է, այլ նաեւ լայն իմաստով ազգային հրամայական: Կայ նաեւ այլ երեւոյթ մը, որուն պարճառները հաւանաբար մէկէ աւելի են, սակայն պարճառներու թուարկումը չէ այս ներա-

ծականի նպարակը, այլ երեւոյթի գոյութիւնը որպէս այդպիսին: Սփիւռքի գաղութներու հայութեան թիր միշտ չէ, որ կը համապարասխաներ փրուեալ գաղութի ուժականութեան, որ երբեմն բարձր մակարդակի կը հասներ յարաբերաբար փոքրաթիւ կամաւորներու աշխատանքով. այսպէս կարելի է ըսել, թէ գաղութի մը ուժականութիւնը պէտք չէ չափել այդ գաղութի հայերու թիրով, այլ համոզումի եւ հեղեղականութեան հետ կապուած չափանիշներով: Սակայն երբ ակնարկուած փոքրաթիւ կամաւորներու շարքերը կը նօսրանան, եթէ գաղութը նաեւ փոքրաթիւ է մարդոժի փագնապը կը դառնայ լուրջ: Ռ'րն է այն երեւոյթը, որուն մասին կ'ըսելինք. Տայաստանէն արտագաղթած եւ սփիւռքի զանազան գաղութներուն մէջ հաստատուած հայրենակիցներու երեւոյթն է. այս հայրենակիցները

**Սփիւռքահայութեան  
դերակատարութիւնը  
մեր ժողովուրդի նորագոյն  
պատմութեան մէջ տակաւին  
չէ քննարկուած, չէ վերլուծուած  
ու արժեւորման  
չէ ենթարկուած,  
հաւանաբար որովհետեւ այդ  
դերակատարութեան  
բովանդակութիւնն ու արդիւնքը  
իր լրումին չէ հասած:**

րը կառոյցներէն ներս գործօն կամաւոր դերակատարութիւն չեն փափաքիր ու չեն ուզեր սրանմէլ, բան մը՝ որ պիտի մեղմացներ մարդոժի փագնապը ու նոր աիշ պիտի հոսեցնէր գաղութներու կեանքէն ներս: Պարճառներու քննութիւնը եւ վերլուծումը կարեւոր խնդիր մըն է, որ սակայն այլ կտր սեղանի մը նիւթը կրնայ կազմել: Ըսենք պարզապէս, թէ անկախ մասնակի պարճառներէ, հակառակ նոր ու այլազան կամաւոր խմբակցութիւններու եւ կազմակերպութիւններու սրեղծման միջազգային գեղնի վրայ, ընդհանրապէս կամաւոր աշխատանքի հոգեբանութիւնը շար լուրջ ու անմխիթար նահանջի ճամբան ընտրած կը թուի ըլլալ:

Աւելցնելով՝ թէ աւանդականօրէն ամուր ու կարեւոր հայագաղութներ եւս զանազան պարճառներով սուր

փագնապի մարնուած են, եզրափակենք ըսելով, թէ հայութեան խճապարկերը 91-ի Մեպրեմբերէն 20 փարի երք փճոյն է:

Սոր ու ինքնափայ մարմումներ արտայայտելու յաւակնութիւնը չունենալով հանդերձ, կրկնութեան գնով կարեւոր կը նկատեն այս մեկնակէտը անկեղծութեամբ մարնանշելու անհրաժեշտութիւնը, որպէսզի արդիւնաւէր խօսակցութեան մը նիւթը դառնան, ըստ հնարաւորի, յաջորդող մօտեցումները:

1915-ի Թուրքիան չէր կրնար երեւակայել, թէ ինչ պիտի ըլլար հայ ժողովուրդի ապագան ցեղասպանութենէն ետք: Սերքին մաքրագործումը կարարելէ ետք վստահաբար կը հաւատար թէ հայութեան հետ դէմ յանդիման պիտի չգրնուէր կրկին: Տայկական սփիւռքը սակայն, որ կազմուեցաւ արեան յիշարակներով ու ցնցոփներով, դարձաւ աննախափեսելի զէնք մը, ազդու զէնք մը ամբողջ հայ ժողովուրդին համար, որ ողբը վերածեց պայքարի: Սփիւռքահայութեան դերակատարութիւնը մեր ժողովուրդի նորագոյն պարմութեան մէջ փակալին չէ քննարկուած, չէ վերլուծուած ու արժեւորման չէ ենթարկուած, հաւանաբար որովհետեւ այդ դերակատարութեան բովանդակութիւնն ու արդիւնքը իր լրումին չէ հասած: Զգենք սպագայի պարմագիրներուն այս պարտականութիւնը: Վերլուծումներէն անդին սակայն կայ իրականութիւն մը որուն վկաններն ենք բոլորս, փեսած ու սարած ենք սփիւռքահայութեան պարմական ներդրումը: Ու առանձին չենք որպէս վկաներ, վկայ է նաեւ Թուրքիան, որ իր Արտաքին գործոց նախարարի, պրն. Տաւթոյղլուի բերնով կը յայտարարէ, թէ լրջօրէն կ'ուզէ քննել սփիւռքի պարասխանափրներու հետ հայ-թրքական փրոթոթոյններու խնդիրը, ցեղասպանութեան խնդիրը եւ այլ հայ-թրքական մերձեցման առնչուած խնդիրներ, որպէսզի մեղմանան կամ նոյնիսկ ջբանան այս խնդիրներուն առնչուած հայկական սփիւռքի հակազդեցութիւնները եւ ձայնը: Ինչ կ'ակնկալէ արդեօք Թուրքիան, թէ այս ձեւով պիտի կարենայ ճեղքել սփիւռքի միաձայնութիւնը, թէ պիտի գրնուին խմբակցութիւններ ու անձեր, նոյ-

նիսկ համայնքներ որոնց հետ պիտի կարենայ հայկական ճակատը պառակտող մասնակի երկխոսություն ու գործակցություն ստեղծել: Ահմէտ Տաւոթօղլու կը յայտարարէ, թէ Թուրքիոյ փափաքն է Նայաստանը րնտեսական րագնապէս եւ անկախութեան ճերաններէն փրկել: Բարգաւաճ ու առարասիրտ Թուրքիան չի փափաքիր րեսնել հագարաւոր հայերու արրագաղթը Նայաստանէն ու կը հաւարայ, թէ կան հայկական խմբաւորումներ ու անձնաւորութիւններ որոնց հետ պիտի կարենայ օգրաշար երկխոսութիւն մը սկսիլ: Ի՞նչ ունի իր մրքին մէջ Ահմէտ Տաւոթօղլուն. որո՞նց կ'ակնարկէ. գործնապաշար հայասերներո՞ւ. կա՞ն րակաի եւ ո՞ր թաղում եւն արդեօք Վասակ Մամիկոնեանի աճիւնները: Կա՞ն արդեօք հայկական խմբաւորումներ կամ հայ անձնաւորութիւններ կամ աւելի ճիշդ անձեր, որոնք դիւանագիտութեան կամ իմաստութեան ռահվիրաներ դառնալու փառասիրութեան մը գոհը կրնան դառնալ խօսակցելով Թուրքիոյ հետ, կառոյցներէն դուրս, հակագղելով կառոյցներո՞ւն: Չեմ ուզեր հաւարայ սակայն, ո՞վ պիտի հակակշռէ նման նախաձեռնութիւններ՝ եթէ սրեղծուին, ո՞վ պիտի սանձէ ու դարապարրէ նման փառասիրութիւններ, եթէ դրսեւորուին: Եթէ ուրեմն, ըսք նաեւ Թուրքիոյ, սփիւքահայութիւնն ու սփիւքը պարենէ է, յաւելեալ պարճառ մը չէ՞ այս մէկը՝ պնդելու համար թէ հայրենիքի ազոու զէնքը հայկական սփիւքն է:

Նայ ժողովուրդը միակ սփիւք ունեցող ժողովուրդը չէ: Սփիւք կոչուած իրականութիւնը ընդհանրապէս դարապարրուած է ուճաման. այս կ'ուսուցանէ պարմութիւնը. անձեր ու փոքր խմբակցութիւններ կարողացած են պահպանել իրենց ազգային գիտակցութիւնը եւ զգացումները, ու բարարարուած են արով. այլ ժողովուրդներ կարողացած են պահպանել նաեւ այլ յարկանիշներ, ունենալով հայ ժողովուրդի երթին զուգահեռ ճանապարհ մը, պարմութեան ընթացքին յաջողելով այսպէս պահել ու պարրարել իրենց ազգային նպարակները՝ անշուշտ րնտեսական ու հետեարար քաղաքական շար լուրջ միջոցներով:

Ուրիշներ գրեթէ բոլորովին կորսուած են: Նայ ժողովուրդը ունի իր բացառիկ իրայարկութիւնները. չի նմանիր այլ ժողովուրդներու. այսպէս հայկական սփիւքը եւս իր նմանը չունեցող սփիւք մըն է. առանց նկարառելի րնտեսական հնարաւորութիւններու, յաջողած է ազդեցութեան բերրի մթնոլորտ մը սրեղծել, հիմնականօրէն կամարո աշխարանքի ճամբով: Ու րակաիւն իրայարուկ է հայ ժողովուրդը, որով հետեւ ուճացման այլընտրանքին պերճանքը չունի: Սփիւքահայու մը կորուարը ինքնին բախարորշ պիտի չըլլար եթէ վճական ու բախարորշ չըլլար սփիւքահայութեան աշխուժ ու գործօն գոյութիւնը ի շահ հայրենիքի գոյարեւման, բարգաւաճման ու ամբողջացման: Առողջ քաղաքա-

**Նայ ժողովուրդը պէտք ունի՞ քաղաքականացած սփիւքի մը: Նարցադրումը կը փափաքիմ փոխանցել բոլորին՝ շեշտելով միայն, թէ քաղաքականացման իմաստը պէտք չէ փնտռել միայն Նայ Դատի ի նպաստ տարուած աշխատանքներուն մէջ:**

կան եւ ընկերային մշակոյթի մը սրեղծումը հաւանարար անիրաժեշտ պիտի չըլլար, եթէ Մովեարական Միութենէն ժառանգուած մրայնութիւնները եւ անոնց հետեւանքները գոյութիւն չունենային Նայաստանէն ներս եւս: Փափաքելի սերնդափոխութեան մը եւ մրայնութեանց բարեփոխման հոլովոյթի ընթացքին, սփիւքի գոյարեւումը վճարորշ է, կամրջելու համար Մայիսեան հանրապետութեան արժեքներու ժառանգը՝ Մեպտեմբերեան հանրապետութեան պահանջներուն: Իսկ Նայաստանի մէջ Սփիւքի նախարարութեան սրեղծումը, այն հասկացողութեամբ, որ կը մարուցուի հայութեան՝ անյաջող պէտք է նկարել, քանի շար հեռու է սփիւքահայութեան պարկերացումներէն եւ ակնկալութիւններէն: Սփիւքի մշակութային ու բարեսիրական միայն գոյարեւումը բարարար չէ. մշակոյ-

թը ուճականութիւն կը ներշնչէ՞, ճիշդ է, սակայն ապաքաղաքականացած սփիւք մը, միայն մշակութային ուճականութեամբ չի կրնար իր էական ներդրումը ունենալ, փոխարինելով քաղաքական-դիւանագիտական զէնքի մը ընելիքը՝ մշակոյթով:

Կ'ուզենք ունենալ քաղաքականացած սփիւք մը. բարելաւենք հարցականը՝ հայ ժողովուրդը պէտք ունի՞ քաղաքականացած սփիւքի մը: Պարասիւսանը այս հարցադրումին միանշանակ ըլլալով հանդերձ, չեմ փափաքիր ես րալ այդ պարասիւսանը, այլ հարցադրումը կը փափաքիմ փոխանցել բոլորին՝ շեշտելով միայն, թէ քաղաքականացման իմաստը պէտք չէ փնտռել միայն Նայ Դատի ի նպաստ րարուած աշխարանքներուն մէջ, նկարի ունենալով բացայար իրականութիւն մը, այսինքն թէ հայ ժողովուրդը եւ ի մասնաւորի հայկական սփիւքը չի կրնար որեւէ ժամանակաւոր, փաստօրէն, իշխանութեան մը պարանդը դառնալ: Ներեարար անիրաժեշտ հարկ է նկարել ազգային ընդհանուր ռազմավարութեան մը մշակումը, ազգային հաւարագիր մը, որ ժամանակաւոր չի կրնար ըլլալ, որովհետեւ ազգային նպարակները ժամանակաւոր չեն: Ու երբ ազգային նպարակներու մասին կը խօսինք, անոնց մէջ ներառնուած են ոչ միայն մեր ազգային զերագոյն նպարակները այլ նաեւ ու վարահարար հայրենաբնակ մեր ժողովուրդի ընկերային ու րնտեսական առօրեան եւ արդար կարգերու, արդար պերականութեան մը արմարացումը: Եթէ անցող քսան րարիներու ընթացքին չէ յարակացած րակաիւն, որ այս է հայութեան ակնկալութիւնը, այս է նաեւ ակնկալութիւնը անոնց, որոնք գաղափարական յարկանիշները ունեցող շարքերու չեն պարկանիր կամ չեն փափաքիր պարկանիլ: Նարարալով, թէ քսանամեակի «Նայաստանը դու ես» լոգունքը ուղղուած է ամբողջ հայութեան ու հետեարար նաեւ սփիւքահայութեան, հայ ժողովուրդի հարարագրի գորճարութեան ընթացքին սփիւքի եւս քաղաքական դերակարարութիւնը հարկ է նկարել կենսական: Օգարակար պիտի չըլլար փնտռել օրէնքներու, իրարեսուրթեան եւ խնդիրներու հետ կարուած

դժուարություններ. օգտակար պիտի չըլլար նաև այդ դժուարությանց վերլուծման ճամբով փկարացնել հարցի էությունը եւ հայության ակնկալությունները: Այս ակնկալությունները իրականության վերածելու իրաւունքը կը պատկանի բոլորին. պատմությունն է որ այս իրաւունքը կու տայ մեր ժողովուրդին՝ որմէ հրաժարելու որեւէ պատճառ չունի:

Համոզուած ըլլալով, որ հայրենի ժողովուրդը եւ սփիւռքը միասնաբար կրնան իրենց հնարաւորութիւններով ապահովել պետականութեան կայացումն ու անվտանգութիւնը, ընկերային ու փնտեսական անարդարութիւններու վերացումը, դատական համակարգի առողջացումը եւ քաղաքական մշակոյթի զարգացումը հայրենիքէն ներս, հարկ է կեդրոնացնել ուշադրութիւնը սփիւռքի կառոյցներուն վրայ, քանի սփիւռքն է մեր այսօրուայ նիւթը, կրկնելով սփիւռքեան դերակարարութեան դաշտը, որ ինչպէս ըսինք արդէն Նայ Ղարի աշխարհաքններու ծիրէն անդին կ'երթայ: Որպէսզի սակայն սփիւռքահայ կառոյցները կարողանան իրենց անհրաժեշտ ներդրումին փեր կանգնիլ, նախապայմանը իրենց իսկ, այսինքն սփիւռքեան կառոյցներու գոյատեւումն է: Այս գոյատեւման առնչուած մարտահրաւերը փագնապալի է, ու փարուէ փարի աւելի փագնապալի կը դառնայ: Ըսինք արդէն, թէ հայության խճապարկերը փժգոյն է, իսկ սփիւռքի վերաբերեալ խճապարկերի բաժինը միայն փժգոյն չէ. գիտենք արդէն, թէ խճանկար մը կազմուած է խճաքարերէ, բայց բազմաթիւ խճաքարեր ինկած ու կորսուած են, մինչ ստեղծուած պարսպութիւնը կարելի չէ եղած լրացնել, ոչ անփոխարինելիութեան իմաստով, այլ նուիրումի նահանջին պատճառաւ:

Կը վերադառնանք, այսպէս, գեկոյցի սկզբնաւորութեան, ուր կը նշուէր գաղութիս թուլացումը եւ զգալի անարբերութիւնը:

Կարելի՞ է դարմանել խճանկարը, եւ ինչպէ՞ս: Կարելի՞ է վերաշխուժացնել ու ամրապնդել սփիւռքեան կառոյցները: Պարասխանը դիւրին չէ. նախ որովհետեւ հարկ է համոզել գաղութներու բաղկացուցիչ փարը, թէ իսկապէս անհրաժեշտ է սփիւռքի ուժականութեան գոյատեւումը եւ յե-

տոյ որովհետեւ կամաւոր աշխարհաքնի մշակոյթը վտանգուած է արտաքին եւս ազդակներէ: Երկրասարդ ու միջին փարիքով ներկայացուցիչները իրենց անձնական եւ ընտանեկան փնտեսական ապագային առնչուած լուրջ խնդիրներ կը դիմագրաւեն, իսկ երէցներէն կարեւոր բաժին մը շփոթի մատնուած կը թուի ըլլալ, սփիւռքահայութեան դերակարարութեան բովանդակութեան հարցով, ոչ միայն զգացական կամ այլ արգելակներու, այլ նաև յաճախ անբացաբերելի վերապահութիւններու պատճառաւ: Յստակ է, անշուշտ, որ եթէ սփիւռքահայութիւնը դադրի ուժական ըլլալէ ու ինչ ինչ պատճառներով վերածուի այլ կամ այն իշխանութեան ընտրանքներու պարզ ու լռելեան հետեւորդի հայրենիքը եւ ամբողջ հայութիւնը կորսնցուցած պիտի ըլլան իրենց ամենաազդու գէնքը որուն նպատակը թէ՛ ազգային իրեալներու հետապնդման շարունակականութիւնն է, թէ՛ ալ արդար պետականութեան մը կայացումը: Նոյնինքն Ահմէտ Տաւրթոյլուն է, որ այս համոզումը կ'արտայայտէ անուղակիօրէն ու մեզի կը թողու հասկնալու կամ չհասկնալու ընտրանքը:

Կամաւոր աշխարհաքն ունէր եւ ունի իր մանրէն (microbe). եթէ մանրէն թմբիթի մատնուած է, արագօրէն կեանքի պէտք է կոչել, որպէսզի վարակէ կրկին գործող ու գալիք սերունդները: Ո՞րն է այն համոզիչ պատգամը, որ յատկապէս երիտասարդութիւնը պիտի ուզէր ընկալել. բարդոյթներէ ու բանգիտութեան պատմունքներէն ձեռքազատուած պատգամ մը, որ պիտի ըլլայ ամբողջական փեղեկութիւններու եւ փունտներու փոխանցումը, որոնց հիման վրայ երիտասարդութիւնը ինքը հարկ է գիտնայ, օգտագործելով երէցներու ապրումներէն բխող փունտները: Իսկ կամաւոր աշխարհաքնի իմաստը կարելի է, փոխանցել ոչ միայն որպէս ազգային պարտականութեան մը դրսեւորում, այլ նաև ու մանաւանդ որպէս գոյութեանական ելք՝ այն հոգեվիճակներէն ու պարտադրուած կենսակերպերէն, որ մարդկութեան երթը յատկանշած են պատմութեան ընթացքին՝ ժպտականօրէն:

Իսկ հիմնական այն հարցակա-

նին պատասխանը, թէ՛ ինչո՞ւ կարեւոր է հայության համար ազգային նպատակներու հետապնդումը եւ միաժամանակ արդար ու ժողովրդավար հայրենիքի մը կայացումը, դիւրաւ կարելի է գտնել այն երեւոյթներուն մէջ որ յատկանշած են հայ ժողովուրդի բարձր ներդրումը համամարդկային մշակոյթին ու բարոյական արժէքներուն: Ու փակալին որովհետեւ հայ ժողովուրդը արժանի է այսպիսի նուաճումի մը:

Խճաքարեր եւ անկման ու կորուստի պատասխանաբանները մենք ենք. բոլորս հաւաքաբար, բայց նաև մեզմէ ամէն մէկը անհարաբար:

Զգալիօրէն ծանրացանք կամաւոր աշխարհաքնի կարեւորութեան ու անհրաժեշտութեան վրայ: Թէև կամաւոր աշխարհաքնը միայն հայրենասիրութեան ծառայող գործիք չէ, ինչպէս արդէն նշուեցաւ, հայ ժողովուրդի պարագային, իր կրկնակի բովանդակութեամբ եւ բոլորիս անձնական օրինակով՝ կրկնակիօրէն կրնայ իմաստաւորել մեր ներկան ու մանաւանդ մեր ապագան: Կարելի չէ չնկատել թէ կամաւոր աշխարհաքնի ճամբով է նաև որ սփիւռքահայութիւնը պատեհութիւնը ունեցաւ պահպանելու ազգային ու հետեւաբար նաև քաղաքական անմեղութիւն մը, որուն շնորհիւ այսպանց իր առջեւ ծառայած դժուարութիւնները:

Պետականութիւնները կը կայանան ժողովրդավարութեան ու փնտեսական եւ ընկերային արդար կարգերու վրայ. պետականութեան մը կայացումը կը մնայ կաղ, այնքան արեւն որ չեն իրականանար նշուած արդար կարգերը: Եւ հոս ըսելիք ունի հայկական սփիւռքը, որ նախարարութիւններէ կամ այլ կառոյցներէ հակակշռուելու փորձեր գոյուլութեամբ քննելով՝ պիտի մասնակցի ազգային ու պետական հաւաքագրի մը մշակման գործին իր ազդու ձայնով, հակազդելով այն փոքրաթիւ մրմունջներուն որ հայրենասիրութիւնը կը շփոթեն հայասիրութեան հետ: Երբ սփիւռքը կը բողբէ անդրադառնալով հայրենիքի ղեկավարութեան մը ձախող կամ վնասակար գործելաձեւին եւ ընտրանքներուն, սփիւռքահայութեան հայրենասիրութիւնը չէ խնդրոյ առարկան: Ընդհակառակը:

# Նօթապարտրիս Աշուններից



Մերկէյ Վարդանեան

2011ի Յուլիս 25-ից Օգոստոսի 3ը՝ 10 օր, շատ փոքր խումբով, շրջագայեցինք Թուրքիայի Էրզրումի, Արդվիհի եւ Ռիզէի նահանգների նախկինում հայաբնակ մի շարք բնակավայրերում, նաեւ թուրքախօս եւ հայախօս կրօնափոխ համշէնցիների գիւղերում: Այցելեցինք Էրզրումի նահանգում գտնուող պատմական Հաստանի Սպեր (Խսպիր) քաղաքը, լուսանկարեցինք նշանաւոր բերդը, այնուհետեւ, հիտրոկայանի շինարարութեան պատճառով քարուքանդ արուած գետափերին զուգահեռ ձգուող խորտուրորտ ճանապարհով հասանք Խսպիրի գաւառի մէջ մտնող Խոտորջրի գիւղախումբ: Նախկինում այն ուներ 14 գիւղ ու քաղամաս, որոնցից եղանք 4 գիւղում՝ Խոտորջրում (այժմ Սըրաքոնաքլար), Գեղուտում, Կաղշխուտում, Մունենցում: Մեծ Եղեռնից յետոյ Թուրքիայի տարբեր գաւառներից, այդ թուրմ նաեւ Ռիզէի նահանգից Խոտորջրի գիւղեր վերաբնակիչներ են բերել: Գիւղում բնակուում են Ռիզէի Դեմիլ գիւղից եկած համշէնցիներ, որոնք պատկանում էին մէկ տոհմի, եւ այժմ 5 տուն են: Գիտէին, որ իրենք համշէնցի են, բայց մոռացել են հայերէնը եւ հատուկեմտ բառեր են յիշում: Այս գիւղերից շատ մեծ արտագաղթ է կատարուում: Չմբանը, ըստ տեղացիների, Խոտորջրի բոլոր գիւղերում միասին հաշուած, հազիւ 80 տուն է բնակեցուում լինում, այն էլ մեծ մասամբ տարեցներ: Մեկնածների մի մասն ամբանը գալիս է հարազատների մօտ հանգստանալու, ինչը քիչ թէ շատ աշխուժութիւն է հաղորդում այս մեկուսի վայրերին: Եղանք նաեւ Ռիզէի նահանգի Չայեւի գաւառի Մենոգի գիւղախումբի Օրմանջըք (նախկին Ջուրիհնչ) գիւղում: Մենոգի գիւղախումբն ունի կրօնա-



փոխ եւ թուրքախօս համշէնցիների 12 գիւղ: Այս տեղերից եւս մեծ արտագաղթ է կատարուում: Թէեւ գիւղերի տեսքը շատ բարեկեցիկ է, բակերում թանկարժէք մեքենաներ են կանգնած, բայց բնակիչներից շատերը միայն ամբան ամբաներին են հայրենի տուն գալիս: Այսպիսով, այս գիւղերի կրօնափոխ համշէնցիները մեծ քաղաքներում խառնուում են տեղի բնակչութեանը եւ բնականաբար, խառն ամուսնութիւնների միջոցով կորցնում իրենց ինքնութիւնը: Չկիրառուելու պատճառով՝ մոռացուում են նաեւ նրանց խօսակցականում դեռ եւս պահպանուած հայերէն բառերն ու տեղանունները: Կրօնափոխ, բայց հայախօս համշէնահայերից հայերէն բանահիւսութիւն գրառելու համար եղանք նաեւ Արդվիհի նահանգի Խոփայի գաւառում, որի շուրջ 22 գիւղերում խօսում են Համշէնի բարբառի Խոփայի խօսուածքով: Խոփայի գաւառի հայախօս համշէնցիների մի մասն ընդունում է իր հայկական ծագումը, ոմանք նոյնիսկ ասում են, որ իրենց արիւնով հայ են, բայց շատերը նախընտրում են իրենց կոչել համշէնցի, ոմանք ասում են որ թուրք են: 2007ի տուեալներով Խոփայի գաւառում բնակուում էր 32.209 հոգի: Մեր կարծիքով, նրանցից 20 հազարից ատէլին համշէնցի են: Նրանք բնակուում են Խոփա (Հոփա) քաղաքում եւ հետեւեալ գիւղերում՝

Քոյունջուլար (նախկին Չալոնա), Բաշոբա (Խիզօ), Չաուշլու, Եորդերէ (Չուրփիջի), Գիւնեշլի (Չաղրիհնա), Բալքըլը (Չենդիղ) եւ այլն: Աւելցնենք, որ Ռիզէի եւ Արդվիհի նահանգների համշէնցիների շրջանում տարածուած են ձախակողմեան, մարքսական գաղափարները: Ռմանք իրենց համոզմունքների համար բանտ են նստել: Նոյնիսկ մեր օրերում շատերի համար դեռ եւս կուռք են գուպայական յեղափոխութեան մասնակիցները, մասնաւորապէս Չէ Կուէվարան: Եթէ մարքսական համշէնցիները անաստուած են, ապա Ռիզէի նահանգի համշէնցիների մի մասը, իսլամական է: Ռիզէի նահանգի թուրքախօս համշէնցիների շրջանում ազգային ինքնագիտակցութիւնն արդէն խամբել է, քիչերն են իրենց ծագումով հայ համարում: Շատերն էլ պարզապէս տեղեակ չեն իրենց ծագումից եւ կարծում են, որ իրենց օգտագործած թուրքերէնում առկայ ոչ թուրքերէն բառերը՝ յատուկ են միայն իրենց գիւղին կամ էլ յունարէն են, լազերէն կամ այլ լեզուներէ փոխ առնուած: Նրանց թուրքերէն լեզուով անհրաժեշտ տեղեկատուութիւն տալու դէպքում, կարծում ենք որ ոմանք կը վերադառնան իրենց արմատներին, իսկ միւսները գոնէ ատէլի լաւ կ'իմանան իրենց ծագման մասին: Մերկէյ Վարդանեանը «Չայն համշէնական» քերթի խմբագիրն է

# Նայասփանի անկախ պեֆականության վերականգնումով ի՞նչ փոխուեցաւ Նամշէնահայութեան, իսլամացած հայութեան եւ ընդհանրապէս թաքնուած հայերու կեանքին մէջ



ՆԱՅԿԱԶՈՒՆ ԱՎՎՐՅԵԱՆ

Կարելոր է իմանալ թրքահայութեան խնդիրներուն մասին, մանաւանդ երբ շատ անգամներ սխալ եզրակացութիւն, կամ սխալ պիտակաւորում կամ բանաձեւում կայ այս հարցին մէջ:

Համայն սփիւռքի եւ Արեւելահայաստանի բնակչութեան մէկ կարելոր տոկոսը ծագումով արեւմտահայաստանցի է: Մեր պատմութեան ամենէն ողբերգական, միաժամանակ ամենէն հերոսական էջերը պարունակող այս տարածքը մեզի համար շատ կարելոր է: Ձանագան ուսումնասիրութիւններով այսօր կը հաստատուի, որ Թուրքիոյ եւ Կիլիկիոյ մէջ կ'ապրին հայեր, որոնք տարիներ շարունակ զուրկ եղած են մեր լեզուով արտայայտուելու, սորվելու եւ դաստիարակուելու իրաւունքէն՝ սահմանադրական օրէնքով, որ կ'ըսէ՝ Թուրքիոյ բոլոր քաղաքացիները թուրք են: Այդ հայերը բռնի իսլամացած իբրեւ թուրք կամ քիւրտ ապրելու ստիպուած եղած են: Իսլամացած հայութեան թիւը այսօր մինչեւ 4,5 միլիոնի կը հասնի, գերազանցելով Հայաստանի Հանրապետութեան բնակչութիւնը:

Անձնական հանդիպումներու եւ ծանրորդութիւններու ընդմէջէն ստացուած պատկե-

րը կը պարզէ իրավիճակը այսօրուայ թրքահայութեան, մանաւանդ ծպտուած հայերու մեծ զանգուածին, որոնք զարթօնքի շրջան մը կ'ապրին, մասամբ բացայայտելով իրենց ինքնութիւնը, փորձելով վերատիրանալ կորսուած բարքերուն ու կենցաղին: Այսօր Թուրքիան Եւրոպական Միութեան անդամակցութեան ձգտումով ստիպուած է փոքրամասնութիւններուն նկատմամբ իր քաղաքականութիւնը որոշ փոփոխութիւններու ենթարկել: Հետեւաբար, վերջին շրջանին Թուրքիոյ մէջ ստեղծուած են հայկական կազմակերպութիւններ, հարեւակցական միութիւններ: Հիմա փոքրամասնութիւնները աւելի ազատ կ'արտայայտուին: Հայրենի հողին վրայ իբրեւ հայ կ'ուզեն ապրիլ: Հետեւաբար անոնք մեր կարիքը ունին:

Այսօր աւելի շարժառայութիւն ունինք Արեւմտահայաստանի մէջ՝ քան Նայասփանի Հանրապետութեան մէջ

Անցեալին տիրած են կարգ մը անհասկացողութիւններ ու մեղադրանքներ, սակայն պէտք է յստակացնել, թէ Թուրքիոյ մէջ ապրած հայութեան յանցանքը չէ, եթէ բախտի ու պայմաններու բերումով իրենք ստիպուած եղան թաքնուած պայմաններու տակ պահելու իրենց ինքնութիւնը: Տեղի հայութեան մտայնութիւնն ու մտածելա-



կերպը դիւրաւ կարելի չէ ընկալել, բացի եթէ մօտէն ծանօթութիւն ըլլայ եւ փոխադարձ վստահութիւն հաստատուի: Հայ դատի պայքարը անցեալին կը մղուէր չորս ուղղութիւններով՝ Հայաստան, Արցախ, Ջաւախք եւ Սփիւռք, իսկ այսօր եկած է աւելնալու Արեւմտահայաստանը՝ իր թաքնուած հայերով:

Արեւմտահայաստանը մեր ժողովուրդի կենսագրութիւնն ու յիշողութիւնն է: Անցեալին թերեւս ան շատերու համար հեքիաթ էր, երեւակա-



յութիւն էր, սակայն այսօր ան տարբեր նշանակութեամբ կը ներկայանայ մեզի: Ժամանակները փոխուած են եւ զարգացումները կ'ընթանան շատ արագ: Այսօր աւելի շատ հայութիւն ունինք Արեւմտահայաստանի՝ քան Հայաստանի Հանրապետութեան մէջ:

Արեւմտահայաստանի հայութիւնը այսօր կը հաշուէ 3,5-4 միլիոն, մեծ մասամբ

բացայայտած Միհրան Փրկիչ Կիւլթեքինը, հիմնած է Տերսիմի հայերու միութիւնը: Ան իր նախկին անունը՝ Սելահատին Կիւլթեքին փոխած է դատական գործընթացով եւ կնքուած է քրիստոնեայ:

Թաքուն հայերու զանգուածները տարբեր բաժանումներով կը ներկայանան: Մենք գիտենք, որ ամենէն շատ ունչնչացուեցան կիները: Փոքրիկ աղջիկներ, որ որբանոցներու կամ տուններու մէջ պահուեցան՝ մեծցան ու դաստիարակուեցան, որպէս իսլամ:

Տարբեր քաղաքներու եւ գաւառներու բնակչութեան մօտ ուղարկուեցան այդ փոքրիկները, հայութենէ հեռու, մասնատուած, եւ ամէն երեխայի համար վճարելով որոշ գումար: Այնքան շատ էին երեխաները, որ ժամանակ եկաւ, երբ բոլորը կը խօսէին այս հարցի մասին, իրարու հարց տալով՝ «Դուն ունի՞ս հայ երեխայ»:

Եթէ կար ընտանիք որ չուներ, ապա ետ կը մնար օրուան պարտադրած կացութենէն...

Այդ զանգուածներէն է, որ յառաջ եկած են այսօրուայ թրքահայերը, որոնք գիտակցութիւնն ունին իրենց կացութեան, ապրելով մայր հողին վրայ եւ բարձրածայնելով հայութեան հարցերը:

36 ազգութիւն կայ այսօր Թուրքիոյ մէջ

**Բ**նաւ չափազանցութիւն չէ ըսել, թէ Թուրքիոյ տարածութեան մէջ տարբեր տեսակ ազգերու պատկանող մարդիկ կ'ապրին:

Այսօր Թուրքիոյ մէջ 36 տարբեր ազգութեան պատկանող մարդ կայ: Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ, Փոքր Հայքի, Համշէնի, Պոնտոսի եւ Թուրքիոյ այլ բնակավայրերուն մէջ շատեր կան:

Հասկնալի է որ բոլոր այդ տարածքները ազգային փոքրամասնութեանց պատկանող տարածքներ են. եւ ոչ միայն հայերու՝ այլեւ յոյներու, ասորիներու, լազերու, չերքեզներու, արաբներու եւ բազմաթիւ այլ ժողովուրդներու: Բացի այն ազգերէն, որ իրենց լեզուն կորսնցուցած են, այսօր Թուրքիոյ մէջ 36 լեզու գործօն վիճակի մէջ է:

Ինչպիսի՞ն է սահմանադրականօրէն ճշդուած կարգավիճակը այս ժողովուրդներուն համար: Յստակ է. անոնք թուրք են, նոյնիսկ քիւրտերը, բոլորը թուրք կը համարուին: Խնդիրը շատ բարդ կը դառնայ, որովհետեւ սահմանադրութեան առաջին 15 կէտերու փոփոխութիւնը արգիւտուած է ըստ օրէնքի: Անշուշտ իրենք ալ կը հասկնան, թէ որոշ փոփոխութիւններ պէտք է որ ըլլան, մանաւանդ փոքրամասնութիւններու իրաւունքներուն վերաբերեալ:

Ինչպէ՞ս սկսան փոփոխութիւնները

**Շ**ատ բան փոխուեցաւ փլուզումէն ետք: Ապա՝ Թուրքիոյ ձգտումը եւրոպական Միութեան մաս կազմելու ուղղութեամբ, իր զօրաւոր ազդեցութիւնը ունեցաւ նաեւ անոնց վարած քաղաքականութեան վրայ:

Կրօնական հարցեր, դպրոցական հարցեր, լեզուական հարցեր՝ կնճռոտք իրականութիւնը կը կազմեն թրքահայութեան

քրտացած եւ թրքացած հայեր («ծպտեալ հայեր»), որոնք կ'ապրին զգալի զարթօնք մը: Օրինակ, Տերսիմի հայերը սկսած են վերագտնել իրենց հայկականութիւնը: 600 ընտանիք դարձած է քրիստոնեայ, կազմած է «Տերսիմ հայ» միութիւնը եւ ձեռնարկած է կիրակնօրեայ հայկական դպրոցի մը բացման: Այլ պարագայ մը. վերջերս Երեւան գացած եւ ինքնութիւնը



Թրքական ընկերութեան մէջ փոփոխութիւնները հետզհետէ բաւական գետին շահեցան: Բայց ոչ՝ բաւարար: Տեսնենք քիւրտերը: Աւելի քան 20 միլիոն հաշուող քրտական համայնքը կը համարուի թուրք: Ամբողջ աշխարհին յայտնի հարց է, ազգային հարց է:

Թուրքիաստիպուած եղաւ որոշ քայլերու դիմելու այս ուղղութեամբ:

Ինչ կը վերաբերի հայութեան հարցերուն, բարդ վիճակ է: Ոեւէ մէկը պէտք չէ մտածէ, որ հայ-թրքական սահմանի բացումը նպաստաւոր է նախ եւ առաջ Հայաստանի համար, ասիկա քաղաքական մեծ խաղ մըն է, որ առաջին հերթին անհրաժեշտ է Թուրքիոյ, հասկնալի է Արեւմուտքի եւ Եւրոպական Միութեան ճնշման տակ, որպէսզի ան իր դէմքը կարենայ փրկել՝ իբրեւ տարածաշրջանին մէջ հարեւաններուն հետ խնդիրներ չունեցող ժողովրդավար երկիր, որ կը յաւակնի մուտք գործել Եւրոպական Միութիւն:

Անշուշտ մենք դէմ չենք, որ սահմանները բացուին, սակայն հետեւեալ կերպով պէտք է դիտել հարցը, որ ո՛չ թէ սահմանները կը բացուին, այլ Թուրքիան կ'ապաշրջափակէ Հայաստանը, ան շրջափակած է Հայաստանը, ինչ որ ռազմական գործողութիւն է միջազգային իրաւունքի տեսակէտէն, եւ ան հիմա պէտք է ապաշրջափակէ, յետոյ երկու երկիրներուն միջեւ զուտ դիւանագիտական յարաբերութիւններ կը հաստատուին:

Կրօնական հարցեր, դպրոցական հարցեր, լեզուական հարցեր՝ կնճռոտ իրականութիւնը կը կազմեն թրքահայութեան:

Գաւառներուն մէջ կայ հայութիւն, որ չափազանցութիւն չէ եթէ ըսեն՝ թէ օրէ-օր նոր զարգացումներ կ'ապրի եւ նոր դրսեւորումներով հանդէս կուգայ:

## Առածներ եւ ասացուածքներ Խոփայի գաւառէն



Աստիճուն գիյագին թամնէցաւ օջ՝ յես գարբէվիմ:  
(Աստիճու Կիրակին չաւարպեցաւ՝ ես ամուսնանամ):

Գադուն ձէձօղին մօղէ գերթա:  
(Կապուն ձենողի մօտ կ'երթայ):

Դեմիրչուն փաղա փերգօվ խօղէ թիամ ունին:  
(Երկաթագործին փայտէ բրիչով հողը դրած են):

Ինչի՞ մըղնուս լաղաս կու. ինչի՞ քելլէս թօղաս կու:  
(Ինչո՞ր կը մտնես լողանալու, ինչո՞ր կ'ելլաս եւ կը դողաս):

Մարէ՛ հացի, դաղան՛ լացի:  
(Մայրը՛ հացի, երեխան՛ լացի):

Մարթ աղ՛ չարաղ կաա, հարս աղի ու դուն բահա:  
(Մարդ եղիր՛ չարուխ կարիր, հարս եղիր ու փուն պահիր):

Ում ու հացը ուղես, անու քաշուիս կու:  
(Որո՞ւ որ հացը ուտես, անոր կը քաշես (կը նմանիս):

Հայկազուն Ալվրցեանը ծնած է 1957ին, Ջաւախքի մէջ: Միջնակարգ կրթութիւնը ստացած է Աբխազիա: 1981ին աւարտած է Երեւանի պետական համալսարանի բանասիրութեան բաժինը:

1981-1989 թուականներուն աշխատած է Երեւանի պետական համալսարանի հրատարակչական բաժնէն ներս՝ որպէս խմբագիր:

1989ին պաշտօնաւոր է գիտական թեզ եւ ստացած է բանասիրական գիտութիւններու թեկնածուի գիտական աստիճան:

1989-2005 թուականներուն դասաւանդած է Երեւանի պետական համալսարանէն ներս, Երեւանի գեղարուեստի պետական ակադեմիոյ եւ այլ համալսարաններու մէջ:

1991-92ին աշխատած է Ն.Յ.Դ. «Ազգայամարտ» թերթին մէջ:

1992-94ին եղած է Ն.Յ.Դ. Բիւրոյի գործիչը Ջաւաքի, Աբխազիոյ, Վրաստանի եւ Ռուսաստանի մէջ:

2004 թուականէն սկսեալ եղած է Ն.Յ.Դ. Բիւրոյի Նամշէնի հարցերով զբաղող գրասենեակի պատասխանատուն: Ապա, 2005ին Բիւրոյի կողմէ նշանակուած է Արեւմտահայոց Հարցերու Ուսումնասիրութեան կեդրոնի փնօրէն:

Այս բոլորին զուգահեռ՝ ան շարունակած է գիտական աշխատանքները Երեւանի պետական համալսարանի հայագիտական կեդրոնէն ներս:

Ներկայիս է աւելի քան 200 գիտական եւ հրատարակախօսական աշխատանքներու:



# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

## **Յունաստանի մօտ ՀՀ դեսպանության քաղաքական-մշակութային- վերլուծական հարցերու Բ. քարտուղար Լիանա Գրիգորեանի հետ**

**Մօտ երեք տարի տեւած ձեր պաշտօնավարության ընթացքին հիմնական ի՞նչ հարցեր դիագրաւեցիք:**

Նախ եւ առաջ սա դիւանագիտական ծառայութեան անցնելուց ի վեր իմ առաջին երկարաժամկէտ նշանակումն էր օտարերկրեայ պետութիւն: Պաշտօնավարութիւնը չափազանց հետաքրքիր էր եւ արդիւնաւետ: Յունաստանում հայ համայնքը մեծ է եւ ունի տարաբնոյթ խնդիրներ, որոնց հետ առնչուել են որպէս հիւպատոս: Հիւպատոսի աշխատանքն իր մէջ ներառում է գործողութիւնների մեծ շրջանակ, սկսած անձնագրային գործընթացից, ներառեալ նոտարական ծառայութիւնները, քաղաքացիական ակտերի

# Լիայոյս եմ, շուտով էլ աւելի կը մեծանայ սփիւռքահայերի թիւը, որ ցանկանում են ստանալ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն

գրանցումը, Հայաստան մուտքի արտօնագրերի տրամադրումը եւ քաղաքացիութեան հետ կապուած հարցեր: Շատ հայեր հանգրուանել են Յունաստանի այլ քաղաքներում եւ մեծ դժուարութիւններ էին ունենում իրենց խնդիրներով գալ հասնել Աթէնք՝ դեսպանութիւն: Նրանց կարիքներին ընդատաջ՝ ՀՀ դեսպան Գ. Ղալաչեանի որոշմամբ 2011 թուականի Յունիս ամսից սկսած ամէն ամսուայ առաջին Ուրբաթ օրը կազմակերպուած է արտագնայ հիւպատոսական ընդունելութիւն Սալոնիկ քաղաքում, ինչը էապէս թեթեւացնում է մեր հայրենակիցների հոգսը կապուած՝ Աթէնք գալու հետ:

Գոհունակութեամբ արձանագրում եմ, որ այս երեք տարիների ընթացքում նկատելի կատարելագործուել է հիւպատոսական ոլորտը կարգաւորող իրաւական դաշտը, շատ օրէնքներում կատարուել են փոփոխութիւններ, հեշտացուել է գործընթացը ՀՀ քաղաքացիութիւն ստանալու համար, 2011 թուականին «Պետական տուրքի մասին» ՀՀ օրէնքով նուազեցուել է պետական տուրքի չափը՝ համեմատած 2010 եւ 2009 թուականների հետ: Ընդհանրապէս օրէնքները մշտական անընդհատ կատարելագործման գործընթացի մէջ են:

**Արդեօք քանի՞ յունահայեր ստացած կան դիմած են ՀՀ**

**քաղաքացիութիւն ստանալու համար:**

Ընդհանրապէս Սփիւռքը կազմում է մօտ 7 մլն հայ: Նրանցից մօտ 6000 սփիւռքահայ ստացել է ՀՀ քաղաքացիութիւն, Յունաստանից քաղաքացիութիւն ստանալու համար, վերջին 3 տարուայ ընթացքում, դիմել են 19 հոգի: Ներկայումս քաղաքացիութիւն ստանալու դիմումների թիւը զգալի աճի միտում ունի: Լիայոյս եմ, շուտով էլ աւելի կը մեծանայ սփիւռքահայերի թիւը, որ ցանկանում են ստանալ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն, մանաւանդորբաւականին պարզեցուել է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու գործընթացը:

**Բարդութիւններ կա՞ն քաղաքացիութիւն ստանալու խնդրին կապուած:**

Ինչպէս նշեցի, ներկայումս չափազանց պարզեցուել է Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութիւն ստանալու գործընթացը, քանի որ այլեւս չի պահանջում մի շարք տեղեկանքների առկայութիւնը, սակայն, իհարկէ դեռ կան որոշ բարդութիւններ՝ կապուած անունների հետ, հաշուի առնելով հայերէնի հարուստ հնչիւնային համակարգը եւ յունարէն լեզուում որոշ տառերի բացակայութիւնը, ինչի հետեւանքով հայկական անունները աղաւաղուած են գրաւում յունարէն լեզուով, որից

էլ բխում է սխալ տառադարձութիւնը անգլերէն լեզու: Յուսով եմ, որ օրէնքը շուտով կը կարգաւորի նաեւ այդ հարցը:

**Հայրենադարձութեան օրինագիծի վերաբերեալ:**

Հայրենադարձութեան հայեցակարգը ՀՀ պետական քաղաքականութեան կարեւոր բաղադրիչ մասն է դիտարկուած, քանի որ այն ուղղուած է հայկական պետականութեան ամրապնդմանը, հայ ժողովրդի միասնութեանը, հայ ինքնութեան պահպանմանը: Սակայն հայեցակարգը դեռ օրինագիծ չի դարձել, քանի որ դա բազմափուլ, բարդ եւ ժամանակատար գործընթաց է: Հայեցակարգի նպատակն է սահմանել հայրենադարձութիւն եւ հայրենադարձ հասկացութիւնները եւ յստակեցնել հայրենադարձութեան գործընթացի կազմակերպման կարգերը:

Հայրենադարձութեան հետ առնչուող խնդիրները համա-

կողմանի կարգաւորումը պահանջում է մի շարք միջոցառումների իրականացում: Օրինակ՝ անհրաժեշտ է այլ պետութիւններում ՀՀ եւ Սփիւռքի կառույցների համատեղ ուժերով իրականացնել նախապատրաստական աշխատանքներ, ստեղծել հայրենադարձութեան գործընթացքը կարգաւորող իրաւական դաշտ, ապահովել բոլոր իրաւասու մարմինների մասնակցութիւնն այս գործընթացում, աջակցել հայրենադարձների համարկմանը հայ իրականութեան մէջ, մշակել ծրագրեր, կազմակերպել անհրաժեշտ աջակցութիւն հայրենադարձներին եւ գործընթացը կանոնակարգող մարմիններին, լիարժեք տեղեկատուութիւն ունենալ հայրենադարձների վերաբերեալ, նրանց տրամադրել արտօնութիւններ, նոյնիսկ աջակցել այն պարագայում, եթէ հայրենադարձուող չունի միջոցներ հայրենիք վերադառնալու եւ բնակութիւն հաս-

տատելու համար: Այս եւ բազմաթիւ այլ խնդիրներ են ծառայած հայրենադարձութեան հայեցակարգը մշակողների առջեւ: Ինքնըստինքեան հասկանալի է, որ այս բոլոր հարցերը կարգաւորելու համար անհրաժեշտ է օրէնքի աշախույժ մշակում, հետագայ ընդունում եւ կիրառում:

**Ինչպէ՞ս պիտի գնահատե՞ք ձեր կեցութիւնը յունահայ գաղութին մէջ:**

Նախ, կը ցանկանայի շնորհակալութիւն յայտնել բոլոր մարդկանց, որոնց հետ առիթ ունեցայ ծանօթանալու եւ առնչուելու, իրենց ջերմ ընդունելութեան եւ պատրաստակամ վերաբերմունքի համար:

Մեր հայրենակիցներին եւ ամբողջ յունահայ համայնքին մաղթում եմ բարեկեցիկ ապագայ, ճգնաժամային իրավիճակները յաղթահարելու տոկուն կամք եւ կարողութիւն, ինչպէս նաեւ հայրենիքի կարօտը առնելու հնարաւորութիւն:

**Վերջին Տարւուան Ընթացքին Հայաստանի Քաղաքացիութիւն Ստացած Է Շուրջ 30.000 Սփիւռքահայ**

Անդրադառնալով Սփիւռքի նախարարութեան տուեալներուն՝ 2011ին Հայաստանի քաղաքացիութիւնը ստացած սփիւռքահայերու թիւին վերաբերեալ, ՀՀ նախարար Հրանուշ Յակոբեան կարեւոր ձեռքբերում համարեց վերջին տարիներուն Հայաստանի մէջ երկքաղաքացիութիւն ստացած մեր հայրենակիցներուն բաւական մեծ թիւը: «Եթէ մինչեւ 2007-2008 երկքաղաքացիութիւն էր ստացել մօտ 3.000 հայ, ապա երկքաղաքացիների թիւը, յատկապէս վեջին տարում, հասել է շուրջ 30.000-ի», - ըսաւ ան:



նական դասագիրքերու ելեկտրոնային տարբերակներու ստեղծում, ուսուցիչներու վերապատրաստում, մայրենի լեզուի քարոզչութիւն եւ այլն:

Նախարարը առանձնացուց բարձր գիտարուեստի ներդրումը, որուն միջոցով ալ հնարաւոր դարձած է խօսիլ ամբողջ Սփիւռքի հետ: Ան նկատեց, որ մեծ ուշադրութիւն դարձուած է յատկապէս հայրենադար-

Հրանուշ Յակոբեան նշեց, որ անցեալ տարի նախարարութեան կողմէ իրականացուած ծրագրերը ձեռք բերուած են աւելի մեծ ընդգրկուածութեամբ: «Սփիւռքն այլեւս հայկական իրականութեան մէջ յատկապէս ներկայութիւն ունի», - ըսաւ ան, ներկայացնելով իրականացուած բոլոր մեծ ու փոքր աշխատանքները՝ ինչպէս «Արի Տուն», Սփիւռքի հայկական կրթօճախներու աջակցութիւն, արեւմտահայերէնի միաս-

ծութեան խթանման եւ ընդհանրապէս հայապահպանութեան ծրագիրներուն, որոնք իրականացուած են Սփիւռքի կառույցներուն հետ միասին:

Յառաջիկայի ծրագիրներուն մէջ յատուկ կարեւորութեամբ շեշտուեցաւ նախարար Յակոբեանի կողմէ Երեւանի Պետական Համալսարանէն (ԵՊՀ) ներս ստեղծուելիք Սփիւռքի ամառնային դպրոցի կայացումը, երկու ուղղութիւններով՝ արեւմտահայերէն եւ արեւելահայերէն:

«Սփիւռքի մեր հայրենակիցները, ովքեր ցանկութիւն ունեն սովորել հայերէն եւ լաւացնել մայրենին, ամրանը կարող են մասնակցել մեր կողմից կազմակերպուած դասընթացներին», - ըսած է ան:



### Ո՛վ Հայոց Աստուած

Հայրենակարօտ ամէն հայու պէս  
 Հայաստան եկայ ես ալ ապրելու:  
 Այրող երազի տենչանք մըն էր ան,  
 Որ գիս տանջած էր երկար տարիներ  
 Օտար անգրաւիչ հողերուն վրայ,  
 Ուր առանց կամքիս ծնած էի ես,  
 Ու հասակ նետած...:

Ինչ լաւ է հիմա, որ երազս այդ  
 Իրական դարձաւ կեանքիս ընթացքին,  
 Չմեռած տեսայ հայրենիքն իմ,  
 Որուն հողին վրայ նոր կեանք մը կ'ապրիմ:  
 Հողը հայրենի կը խօսի ինձի  
 Երբ ամէն անգամ իր վրայ ծռիմ,  
 Ծառ մը տնկելու, սերմեր ցանելու  
 Եւ կամ արտիս մէջ ջրտուք ընելու:  
 Ի՛նչ երանութիւն, ո՛վ Հայոց Աստուած,  
 Որ Քեզ գործակից ունիմ ես այստեղ,  
 Ձի ամէն անգամ երբ ծառ մը տնկեմ  
 Քեզ փառաբանած կ'ըլլամ ես արդէն:  
 Ո՛վ Հայոց Աստուած, կը խնդրենք քեզմէ,  
 Որ հողերը մեր անվտանգ պահես:  
 Երկար տարիներ սպասեցինք մենք,  
 Որ մեր հողերուն մտերիմ դառնանք,  
 Անոր վրայ ապրինք ու յարատեւենք,  
 Անոր կառչելով մենք հզօրանանք:  
 Ո՛վ Հայոց Աստուած, տուն վերադարձուր  
 Զաւակները քո, որ օտար վայրեր  
 Ալ չքափառին...  
 Այստեղ հաւաքուիմք, նոյն երդիքին տակ,  
 Միասին գործենք, միասին տոկանք,  
 Ու բռունցք դարձած հզօր ազգ դառնանք:  
 Ո՛վ Հայոց Աստուած, կամք տուր դուն մեզի,  
 Որ ազգը մեր հին աննկուն պահենք,  
 Մեր հողերուն վրայ անսասան մնանք,  
 Ձի հոս է ներկան ու մեր ապագան:

### Հայեր երթանք Հայաստան

Հայեր երթանք Հայաստան  
 Դարձնենք զայն բուրաստան,  
 Միասնաբար ո՛ւժ դառնանք  
 Մեր պատմութեան տէր դառնանք:

Այսքան տարի տոկացինք  
 Հայ անունը պահեցինք,  
 Հիմա երթանք Հայասան  
 Մասնակցինք մեր պատմութեան:

Քաղաքներուն այս օտար  
 Չունինք հանգիստ ու դադար,  
 Հայրենիքը կը կանչէ,  
 Դէպի Երկիր կը գոչէ:

Հայեր երթանք Հայաստան  
 Դարձնենք զայն բուրաստան,  
 Միասնաբար ո՛ւժ դառնանք  
 Մեր հողերուն տէր դառնանք:

-----

Ինչ որ ըլլայ, մե՛րն է ան  
 Վատ կամ լաւ, մե՛րն է ան  
 Աչքէ հեռու, մե՛րն է ան  
 Կը սիրենք զայն, մե՛րն է ան  
 Չենք սիրեր, մե՛րն է ան  
 Սխալ կ'ընէ, մե՛րն է ան  
 Ծիշտ կը գործէ, մե՛րն է ան  
 Մեր փրկութեան տո՛ւնն է ան:



## Հայաստան եւ Սփիւռք

# ԸՆՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԸԱՄԱԿԱՐԳ

*Տարեվերջի մեր այս Բացառիկին մէջ յարուի րեղ րրուած է հայկական կրթական համակարգի հարցերուն, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ: Յարկապէս պարտաստուած այս թղթածրարին մէջ յօդուածագիրներ կամ մասնագէտներ կը շօշափեն հայրենիքի թէ սփիւռքի մէջ րիրող իրավիճակը՝ րուեայ համակարգէն ներս: Տեղ գրած են հայեցի կրթութեան եւ հայերէն լեզուի ուսուցման քարդութիւններու, Սփիւռքի մէջ րիրող պայմաններու (հայաիօսութեան նուագում, անքաւարար դասագրքեր, ուսուցիչներու պարտաստութեան հարց), ՀՀ լեզուի մասին օրէնքի չափորոշիչներու, դասագիրքերու որակի ու րովանդակութեան, ինչպէս եւ երիրասարդներու եւ ուսանող-աշակերրր հաւաքականութիւններու շուրջ հարցադրումներու րարքեր քննարկումներ:*



# ՀԱՅԵՑԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԴԻՄԱՑ

## ՅԱԿՈԲ ՊԱԼԵԱՆ

Հայերենը հայաձնունդ մարդոց, մասնատրաբար նորահաս սերունդին համար օտար լեզու չէ, անելի ճիշդ՝ պեք չէ ըլլայ, պեք չէր ըլլար: Իսկ մօտաւոր քննություն մը ցոյց կու տայ, որ ան հազիւ թէ օտար լեզու է, գոր կարելի է սորվիլ կամ գիտնալ, կամ պարզապէս՝ անգիտանալ: Այս բացասական ընթացքը ղեկավարություններու սխալ կողմնորոշումներու սխնակին մէջ կ'արձանագրուի եւ գաւնոնք ըստ այնմ չենք գնահատեր: Համաշխարհայնացումը, մշակութային թէ րնփեսական, եւ հայ մարդոց գործնապաշտ պարտաճեցումները սրեղծած են այնպիսի կացութիւն, որուն եզրայնագումը չենք ուզեր րեսնել, հակութեամբ, ազգային գաղափարախօսութենէ, րեսելու կամքէ թելադրուած հիմնական պարասխա-

նափութիւններէ խուսափելու վափութիւն, սպասելով, որ ժամանակը վճռէ մեր շիջումը: Այս մրահոգութիւնը ապահովաբար ունին Հայասրանի Հանրապետութեան ազգային հարազատ խորք ունեցող ոչ «բիզնեսային» մրատրականները: Բայց ան հայկական համարուած սփիւռք(ներ)ի հիմնահարց է՝ թէ՞ ի միջի այլոց գործունեութեան դաշտ՝ ներազգային ժամանակավրէպ մրցակցութիւններու ծառայող: Աւելի պարզ. եթէ հայ ժողովուրդի որպէս ազգի անելի քան կէս հափուածի րեսնելու, այսինքն չձուլուելու համար համազգային ռազմավարութիւն ունի՞նք, անոր հունով կ'առաջնորդուի՞նք, երբ ղեկավարութիւններ կը յառաջացնենք, նախաձեռնութիւններ կ'ունենանք: Մեր նախաձեռնութիւնները հայկական զանգումներուն եւ Հայասրանի Հանրապետութեան վերա-

բերեալ, համայնքային րեսակարար րարբեր նկարագիր ունին այս կամ այն երկրի նկարմամբ բարեսիրութենէ: Հայերէնի ուսուցումը, իրացումը եւ գործածութիւնը երբ կը դադրի ազգի քաղաքականութեան առանցք ըլլալէ, կը դափապարփուինք արագ կամ դանդաղ շիջումի: Այս առարկայականութեամբ կը մօտենանք հարցերուն: Կան հիմնահարցեր: Օրը օրին ապրելու գործնապաշտութեամբ կամ անգիտութեամբ, զանոնք չենք քննել իբր թէ անփրելի հարցերէ խուսափելու կամ պառակտում չյառաջացնելու մրմրութով: Սփիւռք(ներ)ի պարագային հիմնահարց են հայերէնի ուսուցումը, իրացումը եւ գործածութիւնը, պղպշակ են ուշագրաւ միւս երետոյթները, նոյնիսկ երբ կը շոյեն մեր դափարկ եւ անհեռանկար ինքնասիրութիւնը: Ռ՛վ պիտի ըսէ յսփակու-

թեամբ, թե առանց հայերէնի ի՞նչ կը ժառանգենք, ո՞ր հասնելու համար: Ազգի աւելի քան կէս սփիւռք(ներ)ի համար կը նախապես նախ Ժողովուրդը հայ ըլլալէ քաղաքներ հեռանկար, որուն առանցքին ըլլան (ըլլային) ինքնութեան եւ հայրենադարձութեան անանջարելի գոյգ խնդիրները:

Եթէ զգացական, մխիթարական եւ բարեսիրական թափահարումները փակագիծի մէջ դնենք, քրեական, քրեալայնական, համայնքային, կողմնապաշտական եւ դիրքապաշտական ժամանակավրէյ եւ, ըստ ամենայնի, վնասակար կեցուածքները փոխարինենք համազգային եւ հեռանկարային վերաբերումով, ազգը կրնանք առաջնորդել քոկալու եւ քրեալու ճամբով:

Առաջին հերթին սփիւռք(ներ)ը հարկ է հասկնալ, սահմանել, ճշդել անոր քրեալ եւ դերը հայ ժողովուրդի լինելութեան ընդհանուր գիծին վրայ: Սփիւռք(ներ)ը հողաբեր, ուրոյն մշակոյթ եւ լեզու ունեցող հայրենահանուած ժողովուրդ է, ինչ որ յաճախ կը մոռնանք, մեր աշխարհները եւ նախաձեռնութիւնները բեւեռելով Նայաստանի Նանրապետութեան վրայ, կարծէք հաշտուած ըլլալով, որ հայրենահանուած ժողովուրդը դարապարտուած է կորստեան եւ անոր բնիկ աշխարհը արձանագրուած պարմութեան շահ-վնասի քոմարին մէջ արդէն կըստի՝ Պարմական Նայաստան: Սփիւռքի որպէս ազգի հարուած քոկալու եւ քրեալու առանցքային խնդիրը հոս կը գտնուի:

Առաջինը, ներկայ հանգրուանին, լեզուն է:

Եթէ իսկական ազգային-քաղաքական վերաբերում ունենանք, ամենայն յարակրթեամբ պիտի ճշդենք, որ հայրենահանուած ժողովուրդի լեզուն արեւմտահայերէնն է, որ առաջին սերունդներուն հետ պահուեցաւ: Ներկայիս այդ ճիգի թափը նուազած է, զանազան ձեռք թէթետիկութիւններու պարճառով, երբ գէշ իրացում արեւելահայերէն մը, -անոր սովորաբար հայերէն քաղաքակրթական արեւմտահայերէնի դաշտը: Իսկ սփիւռք(ներ)ը ճշմարիտ այս գծով յարուած ուսուցման մանկավարժու-

թիւն եւ կեցուածք չորդեգրեց եւ անգիտութեամբ կը նպաստէ եւ լեզուի, եւ ինքնութեան կորուստին:

Սփիւռք(ներ)ը կը շարունակէ աւագախրի ժամանակավրէյ հակասութիւններու եւ հակամարտութիւններու մէջ: Օրինակ մը: Նայակական համայնքներու մէջ գոյութիւն ունին ուսումնական խորհուրդներ կամ մարմիններ: Այդ խորհուրդները կազմուած են ազգային առաջնորդարաններու շրջանակին մէջ: Յարանուանական կամ միութեանական վարժարանները կը գործեն անկէ դուրս, եւ ազգային վարժարան անունով ներկայացողները միայն կենթարկուին կամ կը գտնուին անոնց հսկողութեան ներքեւ: Այս պայմաններուն մէջ ինչպէ՞ս կարելի է համադրական աշխարհը կարգել, լեզուի որակը եւ ուսուցումը բերել նոյն հասարակ յայտարարի: Դասագիրք կը պարտաւորուի եւ կ'որդեգրուի նոյն ձեւով, կողմնապաշտութեամբ:

Մտահոգութիւնը նորահաս սերունդն է՝ հեռանկարային ըմբռումով, ո՛չ յաւելեալ լուսապսակը եւ ո՛չ ալ յաւելեալ իրաւունքը:

Այլ խօսքով, հայեցի կրթութեան եւ հայերէնի ուսուցման համար նախ հարկ է ճշդել ընդհանուր քաղաքական-փիլիսոփայական մօտեցում եւ ապա յարուած մանկավարժութիւն: Այսօր սփիւռք(ներ)ի մէջ հայերէն կարելի չէ ուսուցանել ինչպէս կէս դար առաջ, այնպէս, ինչպէս սորված էին այսօրուան երեցները: Այս խնդիրը կը կարօտի բազմակողմանի եւ բազմաձայն քննութեան՝ առանց հրէի եւ հեթանոսի քարքերութիւններու առջեւ կանգ առնելու: Ազգի աւելի քան կէս սփիւռք(ներ)ը այս քննութիւնը պարտի կարգաւ ի՞նք, ընկերային, քրեալական, մշակութային եւ միջավայրի ոչ-մակերեսային քոմարներու լոյսին քակ:

Յաջողելու համար պիտի կարենա՞նք գոյացնել բարոյական համաձայնագիր մը, ոչ թէ գերադասի կամ սքո-

քադասի քրթութիւններէ մեկնելով, այլ՝ նկարի ունենալով մշակոյթով եւ լեզուով կարենալ քրեալու անշրջանցելի հրամայականը, գիտակցելով, որ առանց այդ գոյգին՝ սերունդ չի պահուիր, սերունդ չի հայանար: Իսկ սփիւռք(ներ)ը ըլլալով իւրայարուկ կացութիւն կրնանք ըսել նոյնիսկ ժողովուրդի մը համար անբնական, մշակուած ծրագիրները նկարի պիտի ունենան անկէ բխած երկուութիւնները:

Ֆրանսայի աւելի քան կէս միլիոն հաշտող հայկական համայնքը չէր ունեցած ուսումնական խորհուրդ կամ մարմին: Տասնամեակներու սպասումէ ետք, այսօր նման մարմին գոյութիւն ունի: Բայց գոյութիւն ունեցող

**Եթէ նպատակ է ազգի աւելի քան կէս սփիւռք(ներ)ի գոյապետումը, եթէ ճառերը կեղծիք չեն, անյերաճելի պահանջ է համադրական աշխարհները՝ կարողութիւններու մէկքերումով եւ օգտագործումով:**

քանի մը վարժարանները եւ հայերէնի միօրեայ դպրոցները գործած են իրարմէ անջար: Իւրաքանչիւրը կը քրեալուի իր իղին մէջ: Քարացած սովորութիւն:

Եթէ նպատակ է ազգի աւելի քան կէս սփիւռք(ներ)ի գոյապետումը, եթէ ճառերը կեղծիք չեն, անյերաճելի պահանջ է համադրական աշխարհները՝ կարողութիւններու մէկքերումով եւ օգտագործումով:

Այլապէս, անմիջական յաջողութիւնները եւ գեղարեսիլ շէնքերը կ'աւագախրին: Որպէս հայօրէն գիտակից հարաբերականութիւն կ'ունենա՞նք բարար ողջմութիւն անմիջականը, արանդականը, սովորութիւն դարձած քարքերութիւնները յաղթահարելու: Այս՝ հո՛ն, ուր հայեր կան, որոնք, պղպշակային իրարանցումներէ անդին անցնելով, կ'ուզեն քոկալ եւ քրեալ ազգային հարազատութեամբ:

# ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑ

Զրուցել Լիլիթ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ

Iatres De Facto

**Պրն. Սկրտչեան, ի՞նչ արժէքների վրայ պետք է դաստիարակուեն աշակերտները դպրոցում: Ինչպիսի՞ն պետք է լինի ՀՀ քաղաքացին:**

Դաստիարակութեան հարցը որոշ իմաստով մեզ մօտ դեռ քննարկուող թեմա է: Անցած տարիներին, երբ ամեն ինչ վերանայում էր, դպրոցից դաստիարակութեան հարցերն աննկատելիօրէն դուրս մղուեցին: Հիմա արդէն երկար քննարկումներ ու աշխատանքներ ենք տանում, որպէսզի դաստիարակութեան խնդիրը դարձեալ վերադառնայ դպրոց: Իհարկէ, չի կարելի ասել՝ դպրոցներն այդ խնդրով չեն զբաղում, բայց հեռանկարային կուռ համակարգ դեռ չենք ստեղծել, դաստիարակութեան հայեցակարգ դեռ չունենք, թէև հայրենա-

սիրական դաստիարակութեան առումով բաւականին շատ բան արոււմ է: Դպրոցները, իրենց ծրագրերով, միջոցառումներով, ուսուցիչների արժէքային համակարգի հետ պայմանաւորուած, որոշակի գործեր անում են:

**Մենք արդէն շատ երկար ժամանակ մնայուն կրթական բարեփոխումների մէջ ենք: Ի վերջոյ, գալո՞ւ է ժամանակ, որ դուրս գանք բարեփոխումների շրջափուլից:**

Ընդհանրապէս բարեփոխում բառը ճիշդ չի արտայայտում այն, ինչ արոււմ է կամ անհրաժեշտ է անել կրթութեան ոլորտում: Կրթութիւնը՝ (եւ ոչ միայն) պետք է ունենայ հեռանկարային զարգացման ծրագիր: «Զարգացում» բառը նշանակում է անընդհատ փոփոխութիւն: Զարգացումը միշտ ենթադրում է որոշակի նուաճումներ ունենալու դէպ-

քում անել յաջորդ քայլը: Գոյութիւն ունի տագնապային մեթոդաբանութիւն՝ երբ ունես խնդիրներ եւ մտածում ես դրանք յաղթահարելու մասին: Գոյութիւն ունի նաեւ զարգացման քաղաքականութիւն. երբ ունես զարգացման ծրագիր՝ ըստ դրա կատարում ես քո յաջորդական քայլերը: Երկու դէպքում էլ իրավիճակն այնպիսին է, որ անընդհատ փոփոխութիւններ պետք է լինեն: Ուղղակի պետք է տարանջատել՝ փոփոխութիւնները այն պատճառով են, որ ցանկանում ենք շտկե՞լ, թէ՞ փոփոխութիւնները յաջորդ քայլն անելու անհրաժեշտութիւնից են բխում:

Այդ իսկ պատճառով կողքից նայելիս կարող է թուալ, թէ անընդհատ կատարուող փոփոխութիւնները վատ բան են: Լաւ իմաստով բարեփոխումները չընդհատուող գործընթաց են եւ տանում են զարգացման:





# «Անցնելով 12-ամեայ կրթութեան՝ հնարաւորութիւն ենք ստանում դրական փոփոխութիւններ անելու»

**Հիմա մեզ մօտ ո՞ր տարբերակն է. փոփոխութիւնները շտկելո՞ւ կարիքից են բխում, թէ՞ առաջընթացի:**

Պետք է արդար լինենք եւ սենք, որ տարբեր մարդկանց ջանքերով այսօր մենք որոշակիօրէն անում ենք զարգացման քայլեր: Չնայած դեռ ամէն ինչ չէ, որ շտկել ենք, կան նաեւ հնուց կուտակուած խնդրայարոյց պահեր: Այս իմաստով ես կ'ասեմ՝ յարաբերութիւնը 50-50 է:

Արդէն կարողանում ենք մի քիչ զբաղուել այն խնդիրներով, դժուարութիւններով, որոնք կուտակուել են եւ աստիճանաբար պետք է լուծուեն, բայց նաեւ հնարաւորութիւն ենք ունենում զարգացման մասին մտածելու եւ զարգացման քայլեր անելու: Դա ակընյայտ է: Օրինակ, երբ մենք զբաղուում ենք դասագրքերի եւ ծրագրերի բեռնաթափման հարցերով, ի հարկէ, խնդիրներ ենք լուծում՝ ցանկանալով գտնել արդիւնաւէտ գործող տարբերակ: Աւագ դպրոցների ցանցի ստեղծումը, նորարարական մօտեցումները, նոր տեսակի կրթական հաստատութիւնների ստեղծումը զարգացման քայլեր են:

**Ուսուցիչի կերպարը, ըստ ձեզի, ինչպիսի՞նք պետք է լինի:**

Ինչպէս աշակերտի, այնպէս էլ ուսուցիչի կերպարը շատ ծանր հարց է: Երբ մենք քննարկում

ենք ռեւէ մէկի կերպարը, ենթագիտակցական մակարդակում բոլոր լաւ յատկանիշները վերագրում ենք նրան եւ, որպէս կանոն, ընկնում ենք իրականութիւնից կտրուած մի դաշտ: Խ. Աբովեանի անուան պետական մանկավարժական համալսարանը, Գիւմրու պետական մանկավարժական ինստիտուտը, Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտը, Գորիսի պետական համալսարանը, որ ունի մանկավարժութեան ֆակուլտետ, մշակել են իրենց զարգացման ծրագրերը, որտեղ յատուկ առանձնացուած է, թէ ինչպիսի՞ շրջանաւարտ պետք է պատրաստեն, այսինքն՝ ելնում են ուսուցչի մասին պատկերացումներից:

Որոշակի պատկերացումներ առանձնացուած են նաեւ կրթակարգով: Այսօր բոլոր ուսուցիչները պետք է անցնեն պարտադիր քննութիւնները (պետութեան ծախսերի հաշուին), որոշ ուսուցիչներ եթէ ցանկանան, կարող են դիմել տարակարգ ստանալու համար, ինչը ենթադրում է աշխատավարձի յաւելւածար: Այս բոլոր ծրագրերը կազմուած են այն պատկերացումներից, թէ ինչպիսին պետք է լինի փորձաքննուած ուսուցիչը: Մենք բաւականին լուրջ միջոցառումներ ենք անցկացրել՝ պարզելու տնօրէնի, ուսուցիչի, կրթական ոլորտի տեսուչի կերպարը: Կերպարներ մշակելը շատ ծանր հարց է,

իենց այն պատճառով, որ չես կարող գերծ մնալ իտեալական տարբերակից:

**Այս տարի ունենալու ենք աւագ դպրոցների առաջին շրջանաւարտները: Ձեր կարծիքով, այս հաստատութեան ներդրումն արդարացրե՞լ է իրեն:**

Աւագ դպրոցների ներդրմամբ մեր կրթական համակարգը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու խնդիր էր դրուած, ինչը՝ արուել է: Այլ բան է, որ, անցնելով 12-ամեայ կրթութեան, մենք նաեւ հնարաւորութիւն ենք ստանում դրական փոփոխութիւններ անելու: Իսկ 12-ամեայ կրթութիւնն այդ հնարաւորութիւնը ստեղծեց: Մենք 12-րդ դասարանի երկրորդ կիսամեակը յատկացրել ենք անցածի կրկնութեանը: Այսինքն՝ տուեալ առարկայի ամբողջ կրթական ծրագիրը իւրացուում է մինչեւ Յունուար: Յունուարից յետոյ դասաժամերը տրուում են միայն այն առարկաներին, որոնք աշակերտն ընտրել է քննութիւն տալու համար: Այսինքն՝ երեխան շարունակում է նոյն ծանրաբեռնուածութեամբ յաճախել դպրոց, բայց զբաղուում է միայն իր քննութեան առարկաներով՝ ամփոփելով ծրագիրը: Դա հնարաւորութիւն է տալիս, որ շրջանաւարտը վերջին 6 ամիսներին նախապատրաստուի իր աւարտական եւ միասնական քննութիւններին:

# Ինչպես անցան Հայաստանի մէջ համալսարանական մուտքի վերջին քննութիւնները

ԴԻՄՈՐԴՆԵՐՈՒ ԼԱՅՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, ԲԱՅՑ ԿՐԹԱԿԱՆ ԽԻՍՏ ՑԱԾ ՄԱԿԱՐԴԱԿ

2011ի Յուլիսին փեղի շունեցաւ միասնական քննութիւններու լրացուցիչ փուլը: Այդ հանգրուանին 1,486 հոգի դիմում կատարեց, աւելի քան հիմնական փուլին կատարուած դիմումներէն: Այս փարուայ քննութիւնները յափկանշուեցան դիմորդներու շարքա՞մ յառաջդիմութեամբ:



Հայաստանի Գնահատման եւ քննութեան կեդրոնի իրաւաբանական բաժնի պետ Էդուարդ Սանթրոսեանի խօսքերուն համաձայն՝ «քննութիւնները խիստ անհանգստացնող մէկ խնդիրով յափկանշուեցան. այդ խնդիրներու կրթական խիստ ցած մակարդակն էր: Դիմորդները կարծես չօգտուեցան 12-ամեայ դպրոցի կրթական համակարգէն: Հանրակրթութիւնը

քննութիւնը: Մեծ թիւով դիմորդներ կային Զաւախքէն, Ռուսաստանէն, նաեւ Հնդկաստանէն, Թայլանդէն, Ռումանիայէն, Սպանիայէն: Ոչ միայն ԲՈՒՏ ընդունուիլ փափաքողներու աշխարհագրութիւնը բազմազան էր, այլեւ նոյնպէս լայն էր փարիքային ցենզը. եթէ ամէնէն երիտասարդ դիմորդը 18 փարեկան էր, ապա ամէնէն փարեցը՝ 60ը անց էր:

## Կրթութեան բնագաւառի հանդէպ հանրային վերաբերումը՝ դրական միտումով

«Ազգայն Օր»ի խմբագրութեան փրամադրուեցան Հայաստանի Գնահատման եւ քննութեան կեդրոնի եւ յափկապէս կեդրոնի աշխատակից Գայիանէ Մանուկեանի կողմէ փրուեալներ, որոնց հիման վրայ, ժողովուրդի կարծիքը կարելի է ճշդել այս մարզէն ներս: Կրթութեան համակարգէն ներս կառավարութեան գործունէութիւնը գնահատողներու 34,3% փրուոսը դրական կը նկատել, 34,9% փրուոսը միջին, 30,8 փրուոսը բացասական: Ընդհանուրին մէջ ամէն մարդ կրթութեան համակարգով կը զբաղի Յունիսին եւ Մեպփեմբերին, իսկ մնացեալ ամիսներու ընթացքին սառած վիճակ կը փրիւ,

առանց որեւէ կարեւոր նախաձեռնութեան: Հարցուածներու մեծ մասը նշած է, որ փրեղեակ է կրթութեան համակարգէն ներս օգտագործուող նոր արհեստագիտութեան ներդրման, կրթական բարեփոխումներուն, նոր դասագիրքերուն եւ ծրագիրներուն մասին: Յատուկ անդրադարձ կը կատարուի, սակայն, պեփրական մարմիններուն մէջ կաշառակերութեան եւ օրէնքներու խախտումներու խնդիրին: Դատելով հարցումներու արդիւնքներէն կրթութեան մարզէն ներս կառավարութեան հակա-«կոռուպցիոն» ծրագիրը որոշ դրական արդիւնքներ փրուած է, սակայն սկսած գործընթացը պեփր է շարունակելի եւ պահանջափր ըլլայ:

Որոշ փրուեալներ այս հարցի մասին ալ: Պեփրական դպրոցներու հեփր առնչութիւն ունեցող քաղաքացիներու 37,7% փրուոսի կարծիքով կաշառակերութեան մակարդակը նուագած է, 26,5% փրուոսի կարծիքով նոյնը մնացած է, 14,5% փրուոսի կարծիքով նուագած է, իսկ 21,3% փրուոսը համոզուած է, որ դպրոցներուն մէջ կաշառակերութիւն չկայ: ԲՈՒՏերու հեփր առնչութիւն ունեցող քաղաքացիները նշած են, թէ կաշառակերութեան մակարդակը նուագած է 29,9% փրուոսով, նոյնը մնացած է 35,8% փրուոսով, ան արձանագրած է 23,8% փրուոսով, եւ կաշառակերութիւն չկայ՝ 10,4% փրուոսով: Նշենք, որ կրթութեան բնագաւառին հանդէպ հանրա-

յին կարծիքի դրական միփրումը պայմանաւորուած է նաեւ Հայաստանի կրթութեան նախարարի 2010ի Դեկտեմբերէն սահմանուած հրամանով «Կրթական համակարգում կոռուպցիոն երեւոյթների դէմ պայքարի 2011-2012 թրուականների միջոցառումների համալիր ծրագիր»ի իրականացմամբ: Այս ծրագրի ծիրէն ներս ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութիւնը, ամէն երեք ամիս, հաշուեփրութիւն մը կը ներկայացնէ հանրութեան, կաշառակերութեան դէմ գործադրուած միջոցառումներու մասին, որոնք կը հրապարակուին ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան պաշտօնական կայքէջով:

# Հարցազրույց

## Մպարտրակ Սէյրանեան

COUNCIL  
OF EUROPE

CONSEIL  
DE L'EUROPE



**«Նորանկախ հանրապետութեան 20 տարուան պատմութեան ընթացքին, դեռ վերջնականապէս զգնուած չէ գիտակրթական համակարգի ճիշդ բանալին: Այդ փնտրութի ուղղութիւններէն մէկը՝ համաշխարհային գիտակրթական տարածքի բաղկացուցիչ մասը դառնալու մղումն է»**

**Ինչպիսի՞ն է Հայաստանի մէջ կրթական համակարգը այս պահուս: Ի՞նչ մակարդակի վրայ կը գտնուի ուսումը եւ որքանո՞վ կը համապատասխանէ Հայաստանի կարիքներուն:**  
Հայաստանի նորանկախ շրջանի վերջին 20 տարիներու պատմութեան մէջ, գիտութեան մարզէն ներս ամենէն տարբեր կարծիքները հնչած եւ բոլոր երեւոյթները քննարկուած ու գտնուած են հասարակութեան ուշադրութեան կեդրոնին վրայ, եւ այդ մէկը շատ տրամաբանական է: Որեւէ պետութեան, որեւէ ժողովուրդի կենսագործունէութեան եւ զարգացման կարեւորագոյն գրաւականը գիտակրթական համակարգն է: Կրթական այն համակարգը որուն միջոցաւ կը պատրաստեսքու երկրի քաղաքացիները, եւ գիտական այն համակարգը որուն միջոցաւ հնարաւորութիւն ձեռք կը բերես ժամանակակից աշխարհին մէջ մրցունակ պետութիւն եւ մրցունակ ժողովուրդ դառնալու համար:

Գաղտնիք չէ, որ ամբողջ աշխարհի վրայ փոփոխութիւններ տեղի կ'ունենան, իսկ տնտեսութեան մարզէն ներս շեշտադրութեան փոփոխութիւն է, որ տեղի կ'ունենայ՝ դէպի ոչ-գուտ արտադրական, այլ գիտելիքներու վրայ հիմնուած տնտեսութիւն կառուցելու ուղղութեամբ: Այդ առումով տրամաբանական է, որ Հայաստանի գիտակրթական համակարգէն ներս որեւէ երեւոյթ ոչ միայն տուեալ ոլորտի մարդոց մտահոգութեան խնդիրն է, ոչ ալ առանձին մէկ նախարարութեան հարց է, այլ ամբողջ պետութեան զարգացման խնդիր է:  
Միաժամանակ պէտք է նշել, որ այս բնագաւառը երկու կարեւոր առանձնայատկութիւններ ունի: Առաջինը՝ խիստ պահպանողականութիւնն է, բառին դրական իմաստով եւ երկրորդ՝ փոփոխութիւններու եւ բարեփոխումներու առջեւ բաց ըլլալը: Այս երկու հանգամանքներուն միջեւ ճիշդ հաշուեկշիռ, ճիշդ փոխ-յարաբերակցութիւն գտնելն է հար-

ցը. աւելի ճիշդ՝ գիտակրթական պետական քաղաքականութիւնը ճշգրտութեամբ որոշելու բանալին հո՞ն կը գտնուի: Որովհետեւ գիտակրթական համակարգը ունի որոշակի բնոյթ: Նախ՝ ամպայմանօրէն պէտք է պարունակէ պահպանողական տարրեր, ինչ կը վերաբերի դաստիարակութեան, օրինակ՝ կարելի չէ մեծ փոփոխութիւններու ենթարկել համակարգը, որովհետեւ շատ զգայուն մարզ մըն է, ոչ ալ կարելի է յաւերժ փորձարկումներ կատարել, որովհետեւ բարեփոխումներ կատարելու մտադրութեան տակ կարելի է վնասներ հասցնել:  
Միեւնոյն ժամանակ սա այն համակարգն է, որուն միջոցաւ մենք կը շփուինք աշխարհի հետ: Հետեւաբար այս համակարգէն ներս քարացած վիճակը ամպայմանօրէն կը տանի դէպի անկում:  
Եթէ ես փորձեմ գնահատել այսօրուան ընդհանուր վիճակը Հայաստանի մէջ, պէտք է ըսեմ, որ նորանկախ հանրապետութեան 20 տարուան պատմու-

թեան ընթացքին դեռ վերջնակա-  
նապէս գտնուած չէ գիտա-կրթա-  
կան համակարգի ճիշդ բանա-  
լին: Այս փնտռտուքի ուղղութիւն-  
ներէն մէկը համաշխարհային  
գիտակրթական տարածքի բաղ-  
կացուցիչ մասը դառնալու  
մղումն է, ինչ որ տասնամեակ-  
ներ առաջ ընտրուած է որպէս  
պետական կրթական քաղաքա-  
կանութիւն, իսկ աւելին՝ եւրո-  
պական կրթական տարածքէն  
ներս համարկուելու մղումն է:

**Դպրոցական 12ամեայ հան-  
րակրթական համակարգը որ-  
քանո՞վ կը համապատասխա-  
նէ Հայաստանի իրավիճակին  
եւ պահանջներուն:**

Գիտէ՞ք, շատ դիրքին է, ձեռք-  
բերուած որոշ մակարդակի  
վրայ մնալ եւ ըսել, թէ մեզ որեւէ  
նորութիւն պէտք չէ, մենք փոր-  
ձենք եղած համակարգը բարե-  
փոխել, սրբագրել թերութիւննե-  
րը: Բայց կրթութիւնը եւ գիտու-  
թիւնը, ժամանակակից 21րդ դա-  
րու իրազեկման (ինֆորմացիոն)  
դարաշրջանէն ներս, տարբեր  
տրամաբանութեան ենթակայ  
են. չենք կրնար մէկ երկրի մէջ մե-  
կուսացած՝ առանձին զարգա-  
նալ, այլ պէտք է զարգանալ հա-  
մաշխարհային մակարդակին  
համահունչ: Փոքր եւ մեծ պետու-  
թիւններ - կրթական իմաստով -  
չկան: Կայ գիտակրթական մէկ  
ընդհանուր տարածութիւն: Եւ  
Հայաստանի գիտակրթական  
տարածութիւնը եթէ պիտի զար-  
գանայ 21րդ դարուն համա-  
հունչ՝ ապա տուեալ մարզէն  
ներս մեր առջեւ պէտք է ըլլան  
նոյն այն օրակարգերը, որոնք  
համաշխարհային օրակարգեր  
են: Այսինքն անոնք զուտ հայկա-  
կան խնդիրներ պիտի չըլլան,  
այլ պիտի ըլլան հարցեր, որոնք  
վրայ այսօր կ'աշխատին բոլոր  
զարգացած երկիրներու համա-  
պատասխան համակարգերը: Եւ  
այս առումով եթէ մենք կ'ուզենք  
համաշխարհային բանավեճին  
(եթէ կարելի է այսպէս ըսել) մաս-  
նակից դառնալ, ապա մենք  
պէտք է մասնակից դառնանք՝  
ատոր համապատասխան հա-  
մակարգ ստեղծելով: Որեւէ  
դժուարութիւն, որեւէ անպատե-  
հութիւն, որեւէ խոչընդոտ, որ յա-

րիր չէ մեր հասարակարգին, մեր  
կրթական համակարգէն ներս  
գոյութիւն ունենալու տեղ չունի:  
Դժուարութիւններ անշուշտ որ  
կան, որոնք յաղթահարելի են:  
Բայց անոնք թեքնիք դժուարու-  
թիւններ են. երբ որ նորամուծու-  
թիւն կը մտցնես՝ դժուարութիւն  
կը բերես: Խնդիրներէ խուսա-  
փելով զարգանալը՝ ոեւէ մէկու  
մօտ յաջողած չէ:

**Մարդու մը զարգացումը, բա-  
ցի գիտելիքներ ամբարող մե-  
քենականութիւն մը ըլլալէ, մի-  
աժամանակ նկարագիր կեր-  
տող, որոշ սկզբունքներու վար-  
ժեցնող, վաղուան գիտակից  
քաղաքացին պատրաստող  
ազդակներու հետ ալ կապ  
ունեցող գործընթաց է: Այս տե-  
սակէտէն որքանո՞վ հասուն-  
ցած կը տեսնէք ուսանողական  
այսօրուան շրջանակները:**

Իմ խորին համոզմամբ՝ դաս-  
տիարակութեան խնդիրը - եթէ  
ուզենք կապուած տեսնել արժե-  
քային համակարգի խնդրին  
հետ - կարելի չէ առանձնացնել  
եւ քննել միայն ժամանակակից  
դարաշրջանէն ներս, միայն  
կրթական համակարգին մէջ:  
Այդպէս վարուելով՝ այնքան ալ  
արդարացուած չենք ըլլար:  
Կրթական համակարգին հետ  
առընչուող անձը չի կրնար  
դպրոցին մէջ ապրիլ մէկ արժե-  
քային համակարգի, եւ ընտանի-  
քէն ներս ապրիլ մէկ այլ արժե-  
քային համակարգի տիրոջով:  
Սա կը նշանակէ, որ պետակա-  
նութեան քաղաքացի դաս-  
տիարակելու համապատաս-  
խան արժեքային համակարգ (եւ  
բնականաբար նկատի ունիմ  
ազգային արժեքային համա-  
կարգը՝ լեզու, մշակոյթ, հա-  
ւատք, ազգային գաղափարներ,  
ազգային գիտելիքներ) պէտք  
ունիս, որովհետեւ դուն չես  
կրնար աշխարհը ճանչնալ, եթէ  
նախ՝ դուն քեզի չես ճանչնար:  
Այս բոլոր գիտելիքներու համա-  
կարգը միայն կրթականը չէ, որ  
պիտի փոխանցէ: Այդ պէտք է ըլ-  
լայ պետական համապատաս-  
խան ծրագրի հիմամբ, որտեղ իր  
դերն ունի դպրոցը, բարձրա-  
գոյն ուսումնական հաստատու-  
թիւնը (Բ.ՈՒ.Յ.ը), հեռուստատե-

սութիւնը, հասարակութիւնը,  
բազմաթիւ այլ նախարարու-  
թիւններ եւ պետական գերա-  
տեսչութիւններ, ամբողջ հասա-  
րակութիւնը, հասարակական  
կազմակերպութիւնները եւ քա-  
ղաքական անհատները: Այդ  
ընդհանուր բնագաւառն է, որ ոչ  
միայն գիտելիք պիտի տայ, այլ  
նաեւ պիտի դաստիարակէ Հա-  
յաստանի Հանրապետութեան  
քաղաքացին, հայրենասիրու-  
թեան, ազգային արժէքները յար-  
գելու եւ զանոնք պաշտպանելու  
տրամաբանութեամբ:

**Երիտասարդութիւնը, յատկա-  
պէս ուսանողութիւնը պահան-  
ջատէ՞ր է՝ իր իրաւունքներու  
պաշտպանութեան տեսակէ-  
տէն:**

Գիտէ՞ք, ուսանողութիւնը միայն  
մէկ զանգուած չէ: Հասարակու-  
թիւն է: Կարելի է հասարակու-  
թեան մէջ շատ բարձր մակար-  
դակի վրայ ունենալ քաղաքա-  
ցիական գիտակցութիւն, սեփա-  
կան իրաւունքներու, ազատու-  
թիւններու պահանջք եւ նոյն  
պահուն, նման խնդիրներու վե-  
րաբերեալ, շատ աշխոյժ վե-  
րաբերմունք ունենալ հասարա-  
կութեան մէջ. բայց ուսանողու-  
թիւնը առանձին դեր չի կրնար  
վերցնել տուեալ հարցերուն մէջ:  
Եւ ոչ ալ հակառակը: Չի կրնար  
ուսանողութիւնը շատ աշխոյժ  
ըլլալ, որպէս ա- ռանձին մէկ  
շերտ, երբ ամբողջ հասարակու-  
թեան մէջ կայ պասիվութիւն  
(կրաւորական կեցուածք): Կ'ու-  
զեմ ըսել, որ ուսանողութիւնը  
որպէս մէկ մասնիկը ամբողջ հա-  
սարակութեան, անշուշտ իր  
վրայ կը բերէ հասարակութեան  
ընդհանուր պատկերի ազդեցու-  
թիւնը:  
Բարեբախտաբար, նոր սերուն-  
դը, որ մեծցաւ արդէն անկախու-  
թեան շրջանին, 21 տարեկան  
նոր սերունդը, կը մտնէ հասա-  
րակական, կրթական, գիտա-  
կան կեանք եւ բնականաբար  
այս սերունդը իր իրաւունքնե-  
րուն համար իր ծայնը բարձ-  
րացնելու իր կարելիութիւնները  
պէտք է ստեղծէ:  
Իմ կարծիքով, այստեղ պէտք է  
երկկողմանի շահագրգիռ քա-  
ղաքականութիւն առկայ ըլլայ,

այսինքն ոչ թե պետական կրթական քաղաքականությունը պահանջ է, որ ուսանողությունը աշխոյժ դիրքորոշում ունենայ, այլ պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի ուսանողը իր ժամանակը տրամադրի ոչ թե իր իրաւունքներու պաշտպանութեան պայքարին մէջ, այլ իր ժամանակը տրամադրի գիտելիքներ ձեռքբերելու եւ հասարակութեան մէջ գիտելիքներով լեցուն ու մասնագիտացած քաղաքացի դառնալու համար:

Ընդհանրապէս ընդունուած տրամաբանութիւն է, որ ուսանողութիւնը տուեալ հասարակութեան մէջ ըլլալով, որպէս ամենայնառաջադէմ, ամենալաւ իմաստով յեղափոխական գանձուածը, միշտ աւելի աշխուժորէն կ'անդրադառնայ հասարակութեան մէջ տեղի ունեցող երեւոյթներուն: Սակայն, ես խորապէս համոզուած եմ, որ քաղաքացիական ընդհանուր աշխուժութիւնը եւ կրթական հարցը տարբեր ոլորտներ են: Որպէս հանրապետութեան քաղաքացի՝ անձ մը կրնայ իր ծայնը բարձրացնել հասարակութեան մէջ տեղի ունեցող որեւէ խնդրի համար: Բայց ուսանողութեան հիմնախնդիրներու հետ կապ ունեցող աշխուժութիւնը ես կ'ողջունեմ այն պարագային, եթէ անիկա ուղղուած է իր սեփական գիտական բուն գործունէութեան: Ես դէմ եմ գիտակրթական համակարգի գերքաղաքականացման:

**Սփիւռքի երիտասաղութիւնը իր ուսումը կը փնտռէ այլ երկիրներու մէջ:**

**Հայաստանի մէջ եղող համակարգը կը բաւարարէ՞, որպէսզի սփիւռքահայ երիտասաղութիւնը իրենց բարձրագոյն ուսման համար հայրենիք ուղղուին. եւ ինչպէ՞ս կարելի է ձեւեր գտնել, որպէսզի հայրենիքի մէջ ուսանելու յանձնարարութիւնները հասնին երիտասաղութեան:**

Երկու մասի կրնանք բաժնել այս հարցը: Առաջինը՝ առարկայական խնդիրներ են. եթէ դուն կ'ուզես բարձր կրթութիւն ստանալ, ես չեմ կրնար այսօր պնդել

- եւ միանտութիւն կ'ըլլար պնդել - թէ Հայաստանի ԲՈՒՀական այժմու համակարգը այնպիսի բարձր մակարդակ ունի, որ յաջողութեամբ կրնայ ամբողջապէս մրցակցական դառնայ եւրոպական կամ այլ երկիրներու կրթական հաստատութիւններուն հետ: Այսուհանդերձ կան շատ մասնագիտութիւններ եւ շատ ուղղութիւններ՝ ինչպէս առաջին հերթին հումանիթար (մարդկային գիտութիւններ) ուղղութիւնները, հայագիտութիւն, արեւելագիտութիւն, մշակութաբանութիւն, միւս կողմէ ֆոնտամենթալ այնպիսի գիտելիքներ՝ ինչպէս են բնագիտութիւնը, քիմիագիտութիւնը, արհեստագիտութիւնը, ճարտարապետութիւնը, ճարտարագիտութիւնը, որոնց վերաբերեալ Հայաստանի մէջ տասնամեակներ շարունակ գործող եւ գիտական փորձառութիւն ունեցող լաւ դպրոցներ կան: Այս առումով Հայաստանի կրթական համակարգը միանգամայն մրցունակ է այսօրուան եւրոպական ընդհանուր չափանիշներուն հետ: Բայց հարցը չդիտենք սոսկ շուկայական չափանիշով: Ես տամ ձեզի օրինակ մը, որ ենթակայական պայմաններու հետ ալ կապուած է: Ժամանակին Երեւանի պետական համալսարանին մէջ հաստատուեցաւ սփիւռքագիտութեան բաժին, ուր կը նախատեսուէր Սփիւռքի հայութեան յաւելեալ մասնակցութիւնը: Ցաւով սակայն պետք է արձանագրել, որ այդպիսի հոսք չնկատուեցաւ:

Սփիւռքահայ ուսանողութեան մուտքը Հայաստանի կրթական համակարգ կրնանք խրախուսել բացառապէս հիմնական մէկ ճանապարհով. բարձրացնելով Հայաստանի ԲՈՒՀական համակարգի վարկը, հեղինակութիւնը, «արտադրելով» այնպիսի ուսանողութիւն, որոնք Հայաստանի ԲՈՒՀերուն մէջ ստացած իրենց գիտելիքներով պիտի կանգնին, միջազգային մրցութաբեմին վրայ, որպէս մրցունակ մասնագետներ: Սա լաւագոյն ազդակը կը հանդիսանայ, որպէսզի սփիւռքահայ ուսանողները մղուին ունենան

գալու եւ գիտութիւն ստանալու Հայաստանի մէջ:

Յաւելեալ նշեմ, որ Հայաստանի կարգ մը ԲՈՒՀեր իրենց վկայականները եւրոպական չափանիշներուն համապատասխանեցնելու գործընթացին մէջ են արդէն եւ, շուտով, ի վիճակի կ'ըլլան տրամադրելու գիտութիւններու գծով միջազգային ճանաչում ունեցող բարձր վկայագրեր:

Հոս շատ կարեւոր գործօն մըն ալ կայ. հայրենիք գալով եւ Հայաստանի մէջ ուսանելով՝

**Սփիւռքահայ ուսանողութեան մուտքը Հայաստանի կրթական համակարգ կրնանք խրախուսել հիմնական մէկ ճանապարհով. բարձրացնելով Հայաստանի ԲՈՒՀական համակարգի վարկը, հեղինակութիւնը, «արտադրելով» այնպիսի ուսանողութիւն, որոնք պիտի կանգնին, միջազգային մրցութաբեմին վրայ:**



սփիւռքահայ ուսանողը միայն գիտելիք չէ որ ձեռք պիտի բերէ, այլ պիտի շփուի հասարակութեան հետ եւ հայրենիքի մէջ պիտի ձեւաւորէ իր առօրեան: Կ'ուզէի նաեւ աւելցնել, որ Հայաստանեան գիտակրթական համակարգի զարգացումը շատ կարեւոր նշանակութիւն ունի սփիւռքի համար, հայապահպանման գործին մէջ, բայց միեւնոյն ժամանակ այս բնագաւառի մոպիլիզացումը (գորաշարժը) կարեւոր է այն իմաստով, որ Սփիւռքը այն խողովակն է, կամ սփիւռքի հայօժախները այն պատուհաններն են, որոցմով կարելի է նոր գաղափարներ ընդունիլ, որպէսզի աշխարհի վերջին ձեռքբերումները հասնին ու թափանցեն հայրենի մեր գիտակրթական համակարգէն ներս:

*Սպարտակ Սէյրանեանը ՀՀ կրթութեան նախկին նախարար է, ՀՀԳ Գերագոյն Սարմնի անդամ:*



Հարցազրոյց

# Յարութիւն Բիրքճեան

**«Քիչ մը անկեղծ ըլլանք.- Երբ մեր փուններու հաղորդակցութեան լեզուն փեղական լեզուն դարձուցած ենք, երբ հայերէնը լաւագոյն պարագային «ծառայական» հաղորդակցութեան խեղճ գործիքի մը վերածած ենք, կամ դպրոցի մէջ սանկ-նանկ աւանդուող «երկրորդ լեզու» մը, իմաստ ունի՞ ողբալը մեր զաւակներու օտարախօսութեան համար...»**

Ձեր ետին ունիք դասագիրքերու հեղինակութեան երկար ասպարէզ մը: Գիտենք, որ նաեւ, աւելի կանուխ, ունեցած էք ուսուցչական վաստակ մը՝ Լիբանան եւ Ֆրանսա, այս երկու երկիրներուն մէջ ստանալէ ետք ձեր ուսումը: Ծանօթ ենք՝ անգլերէնով կամ ֆրանսերէնով հայերէն սորվեցնող ձեր երկլեզու ինքնուսոյց դասագիրքերուն: Ծանօթ ենք ձեր հեղինակած Միջնակարգի «Հայրենի Աղ-

բիր» շարքին, ինչպէս եւ երկրորդական բաժինի «Հայ Կեանք եւ Գրականութիւն» դասագիրքերուն:  
Մեր այս պատկերացումը ամփոփ է, վստահաբար կան նաեւ ուրիշ իրագործումներ. կ'ուզէի՞ք դուք աւելցնել...

Ամփոփը հոս՝ բաւարար է. տեղը չէ աւելիին: Միայն մէկ կարելոր ճշդում.- Այս դասագիրքերը, յատկապէս «Հայրենի Աղբիր»ները եւ անոնց ընկե-

րացող քերականութեան «Տետրակ»ները, կազմուած են միասնական աշխատանքով՝ Մարօ Գալայճեան-Քիրքճեանի հետ: Նոյնը՝ այս դասագիրքերու ամերիկեան տարբերակներու պարագային, պատրաստուած՝ Քալիֆորնիոյ ազգ. Առաջնորդարանի պահանջով եւ պատուէրով՝ իրենց համար:

Թերեւս կ'արժէ ընել նաեւ երկրորդ ճշդում մը.- Պարագաներու բերմամբ՝ հրատարակչական այս գործը եղած եւ մնացած է անհատական նախա-

ծեռնութիւն, աշխատանքի իր բոլոր մասերով: Բայց տեղեկատուական եւ յարաբերական ջանքերով, հասած ենք ճանաչումի ազգային-միութենական շատ շրջանակներու եւ վարժարաններու մօտ, Սփիւռքի գրեթէ ամբողջ տարածքին: Եւ դեռ՝ մեր արտադրութիւնները առաւելագոյն կարելի չափով մօտեցուցած ենք եւրօ-ամերիկեան գաղութներու պայմաններուն...

**Այս բոլորէն կ'եզրակացուի, որ կը ճամբորդէք ու կը հետեւիք Սփիւռքի դպրոցներուն եւ հայերէնի դասաւանդման: Ի՞նչ ըսելիք ունիք անոնց վիճակին եւ մակարդակին մասին:**

Հայերէնի դասաւանդումներուն հետեւելու բերումով, այո, շփումի մէջ եղած ենք եւ կը մնանք մեծ թիւով սփիւռքահայ վարժարաններու հետ՝ կամ հեռակայ կապով, կամ այցելութիւններով: Պարզ է, շրջանէ շրջան՝ պայմաններու եւ առարկայական վիճակի տարբերութիւնները մեծ են: Արեւելեան «մայր» գաղութներու մէջ, համատարած հայախօսութեան պայմաններով եւ համայնքային կայուն կառոյցներով, դպրոցները կը գործեն համեմատաբար (կը կրկնեն՝ համեմատաբար) գոհացուցիչ մակարդակով: Իսկ Եւրոպայի ու Ամերիկայի մէջ յատկապէս, կամ ուշացած ենք դպրոցներ բանալու, կամ եղածները շատ անբաւարար են քանակով:

Յաճախ այս դպրոցները որակով ալ անբաւարար են. հեռու են դիմագրաւելէ՝ ներկայի կրթա-մշակութային դժուար պայմանները: Քիչ բացառութիւններ կան, երբ որոշ դպրոցներ, կամ պարզապէս միակ դպրոցի մէջ մէկ-երկու ուսուցիչ, ճիշդ ընտրանքներ կ'ընեն եւ հրաշք կը գործեն: Բայց երեւոյթը կը մնայ սահմանափակ, եւ ընդհանուր վի-

ճակը անհեռանկար է...

**Կրնա՞նք աւելի յստակ ախտաճանաչում մը ընել...**

Նախ նշենք փաստը՝ դպրոցներու կամ/եւ աշակերտութեան քանակական նուազումը. դպրոցներ կը փակուին, կամ կը կորսնցնեն իրենց աշակերտութեան մէկ մասը: Փոքր շրջաններու մէջ, հայկական դպրոց յաճախողներու համեմատութիւնը արդէն սկզբնապէս անբաւարար էր: Երեւոյթը վերջին տասնամեակներուն կը դիտուի նաեւ «կեդրոնական» շրջաններուն մէջ, որ հետեւանք է գաղութի ընդհանուր թիւի նուազումին, բայց նաեւ հոն տեղ գտնող օտար դպրոց յաճախելու յարաճուն սովորութեան:

Ճիշդ է, այսպիսի կացութիւններու մէջ՝ երբեմն կ'իմանանք նոր դպրոցի մը բացումը, կամ դպրոցի մը ընդլայնում-ամրապնդումը - բան մը՝ որ հրաշքի պէս կը հնչէ, մխիթարող է: Բայց ատիկա պէտք չէ մեզ խաբէ, պէտք չէ որ «ծառը ծածկէ անտառը»...

**Ուրեմն, Սփիւռքի դպրոցներու ներկայ քանակական պատկերը լաւատեսութիւն չի ներշնչեր...**

Ոչ, դժբախտաբար: Եւ ո՛չ միայն քանակական պատկերը: Ահա՛ հո՛ն կը հասնինք հիմնական պատճառին՝ դասաւանդումներու մակարդակի անբաւարար որակին: Մանկավարժական կազմաւորման, արհեստավարժ պրոֆեսիոնալ մօտեցումի բացակայութեան: Թէ՛ կրթական ընդհանուր կազմակերպութեան, թէ՛ ուսուցիչներու մանկավարժական պատրաստութեան համար, կը մնանք նախնական մակարդակներու վրայ: Իսկ քանակական ոչ-դրական պատկերը՝ մէկ հետեւանքն է ասոր:

Սփիւռքի առաջին յիսնամեակին՝ այսպիսի միջոցներ ու մակարդակ՝ դեռ ներելի էին, գէշ-

աղէկ մեզի օգնեցին մշակութապէս վերապրելու: Բայց ի վերջոյ մեզ հասցուցին հոս, քանի չգարգացուցինք մեր որակը. վերջին տասնամեակներու եւ մանաւանդ վաղուան աշխարհի մշակութային պայմաններով, անհրաժեշտ էր լուրջ պատրաստութիւն մը, մանկավարժական իսկական յեղափոխութիւն մը:

Պէտք էր մեր դպրոցներու պատասխանատուներու նշանակումը առաջնորդուէր կրթական-մանկավարժական եւ արհեստավարժ չափանիշներէ. ու մանաւանդ՝ ստեղծուէին այնպիսի պայմաններ, որ ուսուցիչները ուսուցիչ դառնային՝ մղուած լուրջ հակումէ («կոչում» կ'ըսէինք անցեալին. պարապ բառ մը չէր ասիկա...), եւ այդ հակումը լրացնէին համապատասխան պատրաստութեամբ: Իրենց տրամադրուէին պայմաններ՝ հետագայ որակաւորման, նաեւ ինքնակատարելագործման... Ուսուցիչ պատրաստող հիմ-

**Եւրոպայի ու Ամերիկայի մէջ յարկապէս, կամ ուշացած ենք դպրոցներ բանալու, կամ եղածները շատ անբաւարար են քանակով:**

նարկներու բացակայութեան առջեւ (անցեալին եղած հիմնարկները նոյնպէս թերի էին...), պէտք էր նիւթական լուրջ միջոցներ գոյացնել, փայլուն շրջանաւարտներ քաջալերել դառնալու յանձնառու, հետեւելու Սփիւռքի տեղական համալսարաններու մանկավարժական ճիւղերուն, ի հարկին անոնց տրամադրելով հայերէնի լրացուցիչ դասընթացքներ:

**Հայաստանի պատասխանատուներու եւ ուսու-**



**ցիչներու հետ շփումներ ունի՞ք... Ինչո՞ւ չմտածել անոնց համալսարաններու համապատասխան ճիւղերուն մասին...**

Գիտէ՞ք ի՞նչ...: Հոս տեղը չէ մանրամասնելու. բայց հարցը դու՞ք կը դնէք, եւ կենսական ալ է: Հայրենի համալսարանները կրնան հայագիտական միւթեր տրամադրել առատօրէն - առաւելաբար՝ գիտելիքի՝ իմաստով: Բայց՝ նոյնիսկ խոստացուած «արեւմտահայերէնի ամպիոն» կամ նման ճիւղի

**Ինչ կը վերաբերի յայրկապէս կրթական մարզին, դժբախտաբար շատ դրական բնուիք չունին Հայաստան-Սփիւռք գործակցութեան մասին: Ոչ ալ՝ երկա՛ր տարիներէ իվեր Երեւանի մէջ կազմակերպուող ուսուցիչներու վերապատրաստումի դասընթացքներուն մասին:**

մը ստեղծման պարագային, մեր ուսանողները քանի մը տարի հոն խրթին հայագիտութեան հետեւելով չէ որ յարմար ուսուցիչներ պիտի դառնան Սփիւռքի վարժարաններուն: Որովհետեւ Երեւանի Պետական Համալսարանի, եւ «Մանկավարժական» կոչուած համալսարանի դասանիւթերը շատ քիչ կապ ունին Արեւմուտքի մէջ հասկցուած իմաստով մանկավարժութեան հետ: Արդէն Հայաստանի կրթական


համակարգին մէջ, յառաջադէմ փոքրամասնութիւն մը ի՞նք մտահոգ է ու դժգոհ՝ խորհրդային օրերէն վերապրած եւ դեռ տիրող կրթական-մշակութային պահպանողական այդ գիծերէն...:

Անձնապէս շփումներ ունիմ, նաեւ պարագայական որոշ գործակցութիւն՝ այսպիսի անձնաւորութիւններու հետ. անոնք երբեմն դասախօս են, կամ դասագիրքերու հեղինակ, կամ պետական պաշտօնատար: Բայց, ինչ կը վերաբերի յատկապէս կրթական մարզին, դժբախտաբար շատ դրական ըսելիք չունիմ Հայաստան-Սփիւռք գործակցութեան մասին: Ոչ ալ՝ երկա՛ր տարիներէ իվեր Երեւանի մէջ կազմակերպուող ուսուցիչներու վերապատրաստումի դասընթացքներուն մասին, որոնցմէ մեր ուսուցիչները մասնագիտական ոչ մէկ օգուտ կրնան քաղել - բացի հայրենասիրական, թերեւս նաեւ լեզուագիտական պզտիկ լիցքաւորումէ մը: Մինչ՝ էականը մանկավարժներ պատրաստելն է, ոչ գիտելիքի «գանձանակներ»:

Ենթադրեմք հասկցուիմ.- Ուրիշ մարզերու մէջ հայրենի ուժերու հետ գործակցութիւնը բարերար է, կրնայ նոյնիսկ անհրաժեշտ ըլլալ. բայց կրթականի մէջ, նշած պատճառներովս եւ նախատեսելի ապագայի մը համար՝ մեր կարիքներուն չի կրնար պատասխանել:

**Բայց ի վերջոյ՝ ձեւեր չունի՞նք կեցնելու հայախօսութեան այս նահանջը: Տեղեակ էք, որ Ինքնաբոս վերջերս արեւմտահայերէնը դասեց վտանգուած լեզուներու շարքին: Ինչպէ՞ս կատարուած է այս գնահատումը...**

Տեղեակ եմ: Չեմ գիտեր, ու կարեւոր ալ չէ, թէ Ինքնաբոս ինչպէ՞ս կատարած է գնահատումը...: Բայց աչք ունեցող եւ Սփիւռքը դիտող ոեւէ գիտա-



կից հայ արդէն Ինքնաբոսը շա՛տ առաջ վտանգուած լեզու նկատած պիտի ըլլայ մեր արեւմտահայերէնը: Նայի՛նք մեր շուրջ: Ինքնաբոսի՞ պէտք ունինք պատահածը տեսնելու համար: Ինքնաբոսներո՞ւ կարեւորութիւն պիտի տանք (կամ պիտի ձեւացնենք տալ), թէ՞ մեր ներքին հրամայականներուն: Քիչ մը անկեղծ ըլլանք.- Երբ մեր տուններու հաղորդակցութեան լեզուն տեղական լեզուն դարձուցած ենք, երբ հայերէնը լաւագոյն պարագային՝ «ծառայական» հաղորդակցութեան խեղճ գործիքի մը վերածած ենք, կամ դպրոցի մէջ սանկ-մանկ աւանդուող «երկրորդ լեզու» մը, իմաստ ունի՞ ողբալը մեր զաւակներու օտարախօսութեան համար...: Կամ՝ անշուշտ լաւ բան է տեղական լեզուներով հայանիւթ հրատարակութիւններ ընել, հայութեան հարցերը արծարծել օտարախօս դարձած հայերու եւ համակիր օտարներու համար: Բայց հաւատալ, որ ատով մեր պարտականութիւնները կատարած ենք իբր հայ,- պարզապէս մոռնալ է հիմնականը, բուն պարտականութիւնը՝ հայերէն լեզու եւ հայալեզու մշակոյթ պահել...:

Հայախօսութեան նահանջը կեցնելու ձե՞րը: Նախ՝ ատիկա իսկապէ՞ս կամենալն է, այսինքն՝ կամենալ ատոր պահանջած միջոցները, ճի՛գը, մի՞նչեւ ծայրը...: Մեր տուններուն ու դպրոցներուն մէջ հայերէնը տեղական լեզուին հաւա-



սար վերահաստատելը, մեր դպրոցներում կրթական որակ տալը, ատոր համար կազմակերպական եւ նիւթական միջոցներ ստեղծելը...:


Չանազան երկիրներու մեր համայնքներու կեանքը տնտեսական տագնապէ՞ կը տառապի՝ իր բոլոր մարզերով: Կրնայ ըլլալ: Բայց կրթական մարզը գոնէ՝ պէտք էր զերծ պահուէր ատկէ: Կրթականը առաջնահերթն է, մեր ապագան է, մեր ըլլալ-չըլլալու հարցն է...

**Ելեկտրոնային հաղորդակցութեան միջոցներ, power point, Համացանց առհասարակ չեն օգտագործուիր. ասիկա պատճառ մը չէ՞ ձախողութեան: Օրինակ, կա՞ն հայերէն ել-գիրքեր, ել-գրադարաններ եւն.:**

Ծիշո՞ք է, այս միջոցները գրեթէ չենք գործածեր: Ծիշո՞ք է նաեւ, որ գէշ չէր ըլլար՝ գործածելիք: Բայց՝ զգո՞յ՜:

Շատ են մեր մէջ անոնք՝ որ այս միջոցները կախարդական ցպիկ կը նկատեն. կը հաւատան, որ կը բաւէ գործածել զանոնք՝ որպէսզի աշակերտները կեդրոնանան, ինքնաբերաբար լաւ արդիւնքներ ստացուին: Բայց այդ միջոցներուն այս աստիճան ասպիկնիլը՝ խաբկանք է: Չախողութիւններ անոնց պակասով բացատրելն ալ՝ պարզ alibi մը...: Ոեւէ ուսուցիչ, եթէ կը սիրէ եւ գիտէ իր գործը, տէր է ասպարեզին, լաւ արդիւնքի պիտի յանգի առանց այս միջոցներուն ալ: Իսկ անհոգի եւ անպատրաստ ուսուցիչներ ձեռնքալի պիտի մնան՝ զանոնք գործածելով հանդերձ:

Ուրիշ խօսքո՞վ...: Ուրիշ խօսքով, ասոնք ալ պարզ միջոցներ են, ինչպէս դասագիրքերը: Ծիշո՞ք է, կան աւելի լաւ ու նուազ լաւ միջոցներ, բայց կենսականը միշտ կը մնայ, պիտի մնայ հաղորդակցու-



թեան մթնոլորտը, ուսուցիչ-աշակերտ կապը, այդ կապին մարդկային որակը:

Չափահասներու մշակութային կեանքին պարագային՝ նոյնը չէ՞ հարցը: Հայերէն ել-գիրքեր եւ ել-գրադարան կը հարցնէք. անշուշտ կա՞ն: Բայց հայ մարդուն մօտ կա՞յ դրդում, motivation... Քանի՞ հոգի տեղեակ է, քանի՞ հոգի կը հետաքրքրուի եղածով, օրինակ՝ digilib.am կամ haybook կայքերով - միայն երկու կարեւորներ յիշելու համար:

Մեր «Հայրենի Աղբիւր» (եւ միւս) դասագիրքերը 15 տարի է՝ ունին կայք, որուն կարելի է հասնիլ Համացանցի վրայ «զարնելով» պարզ բանալի բառեր - armenian learning, armenian method, armenian self-teaching եւն.: Պիտի հաւատա՞ք, որ 15 տարուան մէջ 15 հոգի չէ կապուած մեզի՝ այդ դասագիրքերով հետաքրքրուելու համար: Մենք կայք կազմած ենք, որովհետեւ կայքը նկատած ենք հաղորդակցութեան միջոց՝ ուրիշ միջոցներու կարգին-առանց յատուկ ակնկալութեան: Որովհետեւ գիտենք, ելեկտրոնային կայքերը չեն որ մարդոց միտքերը պիտի արթնցնեն. Համացանցը չէ որ մարդը Սարգսի պիտի ընէ: Ատանկ հրաշքներ չկան: Նոյնիսկ հակառակը աւելի ճիշդ սկսած է ըլլալ. ելեկտրոնային պատրաստ ապրանքը մեզ աւելի կը թմրեցնէ, կը վարժեցնէ կրաւորական սպառումի, սպասելու՝ որ հրամցնեն, ծամեն-բերան-

միս դնեն: Իսկ Համացանցը յաճախ անհակակշռելի է, յաճախ հոն չափահասին համար ալ դժուար է իրաւը սուտէն, արժէքը անարժէքէն զանազանել: Ասոր համար լուրջ մեթոտներ եւ դպրոցներ յաճախ կը յանձնարարեն զգուշանալ աշակերտները յղել Համացանցին՝ տեղեկութիւններ քաղելու համար, կամ զանոնք կ'ուղղեն յստակ ու ճշդուած հասցէներու միայն...

**Ուրե՞մն... Եզրակացութեան մը պիտի չյանգի՞մք... Յոռետե՞ս կը մնանք...**

Կարելի չէ եզրակացութեան յանգիլ հոս. հարց չի դրուիր, եղածը... զրոյց է: Այսպիսի ճակատագրական խնդիրի մը մէջ, որ մշակութային հաւաքականութեան մը եւ իր ժառանգութեան՝ արեւմտահայերէն լեզուի եւ մշակոյթի վերապրումի խնդիրն է, արժող եզրակացութեան մը կը հասնինք միայն գործով - կրկին կը շեշ-

**Աչք ունեցող եւ Սփիւռքը դիպող  
նեւէ գիտակից հայ արդէն  
Ինկեսքոյէն շա՛ ր առաջ  
վրասնզուած լեզու նկատած պիպի  
ըլլայ մեր արեւմտահայերէնը:  
Նայի՛նք մեր շուրջ:  
Ինկեսքոյի՞ պէպք ունինք պատահածը  
դեանելու համար:**

տեմ՝ որակաւոր գործով: Եթէ գիտակցինք մեր կացութեան եւ կամենանք հայալեզու հայ մշակոյթ մը վերստեղծել Սփիւռքի տարածքին. եթէ կամենանք մեր հայերէնին տալ այն արժէքն ու աստիճանը, որ մով կը գործածենք տեղական կամ միջազգային հաղորդակցութեան լեզուները,- այն ատեն, բայց միայն այն ատեն, ոչինչ կրնայ մեզ մահացնել:

*(«Արմենիքա»ի մէջ լոյս տեսած է յունարէն թարգմանութիւնը)*

# Հայկական Կրթական Համակարգ



ԽՈՐԷՆ ԵՊՍ. ՏՈՂՐԱՄԱԾԵԱՆ  
Յունաստանի հայոց առաջնորդ

Յայաստանի թե սփիւռքի տարածքին քանիցս գիտաժողովներ, համագումարներ, դասախօսութիւններ եւ կլոր սեղաններ եղած են ու պիտի ըլլան տակաւին, ուր արծարծուած է այս հարցը ամենայն լրջութեամբ եւ փորձած են լուծումներ գտնել: Ամենքս ալ շատ լաւ գիտենք, թէ հոգեւոր եւ ազգային ղեկավարներ որքան մտահոգութեամբ կը կազմակերպեն գիտաժողովներ որպէսզի փրկեն հայերէն լեզուն, թէ՛ օրէ օր կը նօսրանան զայն գործածողները: Անշուշտ գաղութ-գաղութ պատկերը կրնայ քիչ մը փոխուիլ բայց երբեք խրախուսիչ չէ, որովհետեւ ուշ կամ կանուխ բոլորս ալ գիտենք, թէ ուր կ'երթայ հայերէն լեզուն ու հայկական կրթական համակարգը, եթէ հիմնական եւ վճռական լուծումներ չգտնենք՝ ալ աւելի սատարած կ'ըլլանք անոր վաղահաս անկման:

Սփիւռքի մէջ տիրող պայմանները ներկայ ընթացքով յօգուտ մեզի չեն: Ընդհանրապէս համայն սփիւռքը բայց մասնաւորաբար մեր գաղութը նկատի ունենալով՝ կը տեսնեն հայրենախօսութեան նահանջ, հայերէնով դասաւանդող նիւթերու թէ՛ մարդու ղեկավարութիւն եւ թէ հետեւողներու հետաքրքրութեան պակաս: Հարց մը, որ շատ կը մտահոգէ զիս անձնապէս, երբ ամէն կողմէ կը նկատեն անտարբերութիւն այսինքն մեր տղաներէն ներս եւ յատկապէս դպրոցներէն ներս տակաւ-տակաւ հայերէն լեզուն այլեւս



պէտք եղած ձեւով չի գործածուիր, աւելի ճիշդը չի խօսուիր: Գիտակից եւ հայախօս ընտանիքներ (բացառութիւնները յարգելի են) նոյնիսկ զուտ հայկական ընտանիքներ իրենք իրարու միջեւ կը նախընտրեն յունարէն խօսիլ, քանի որ աւելի «հեշտ» է եւ կամ աւելի լաւ «կը հասկցուի» քան հայերէն լեզուով: Այսպէս, օրինակ, դպրոցի բակին մէջ խաղացող երեխաներուն կը մօտենամ, որոնք ինչպէս միշտ ոչ միայն զբօսանքին այլեւ դասարաններուն մէջ յունարէն կը խօսին եւ հարց կու տամ «ի՞նչո՞ւ յունարէն կը խօսիք». «Ձեր ծնողները հայեր չէ՞ն» եւ պատահի մը կը պատասխանէ «քանի իրենք տունը օտար լեզուով կը խօսին»... Սիրտս կը կոտտայ ի տես այս ճշմարտութեան եւ պատկերին: Դժբախտաբար նոր սերունդը կը խուսափի հայերէն խօսելէ եւ կարծեք մայրենի լեզուի գործածութիւնը թողած ենք միայն մեր մեծ հայրերուն ու մայրերուն... Որելէ լեզու, երբ չի գործածուիր ոչ միայն մոռացութեան կը մատնուի, այլեւ «կը ժանգոտի»: Ի՞նչ արժէք ունի ժանգ կապած երկաթ մը, որ

սահմանուած է փճանալու, նոյնն է պարագան որելէ լեզուի: Որքան ատեն որ լեզուն ժանգ կապած է մեր շրթներուն ան դատապարտուած է փճանալու: Անշուշտ լուծումներ կան. տակաւին ուշ չէ բայց անհրաժեշտ է համահայկական աշխատանք, ախտաճանաչումներ ու սրբագրութիւններ պէտք է ըլլան, երբեմն նոյնիսկ ծանր միջոցներու ալ դիմելով: Վերադառնալով վերնագրի նիւթի՝ կանդորադառնանք եւ ականատես կը դառնանք թէ հայագիտական կեդրոններ մէկը միւսին ետեւէն կը փակուին, կամ փակուած են, եւ այս առումով մարդու հասցնելու հեռակարները մութ են: Կը կարծեն, որ պէտք է նախաձեռնել կեդրոնները վերաբանալու եւ կամ նորերը ստեղծելու աշխատանքին: Իսկ ինչ կը վերաբերի այն գաղութներուն, որոնք տարիներ շարունակ այս առումով մեծ ու հսկայական աշխատանք տարած են մանաւանդ, պէտք է ուժերու համախմբումով եւ կեդրոնացումով ամպիոններ վերաբանան կամ ալ աշխատին որ տեղւոյն համալսարաններուն կամ

դպրոցներուն մէջ սկսին գործել հայագիտական ամպիոններ:

Որեւէ երկիր իր պետական լեզուն պահպանելու համար օրէնքներ մշակած է եւ ճշդած ուսման մէջ, մանկապարտէզէն մինչեւ համալսարան պետական լեզուով տրուելիք դասանիւթերուն չափը ինք որոշած է: Մտահոգիչ կ'ըլլայ, երբ մեր պարագային հայերէն դասանիւթերը իրենց տեղը սկսին հետզհետէ զիջիլ օտար լեզուներու: Այս առումով բնականաբար ո՞մանք պիտի արկեն, թէ պետական դպրոցներու համակարգին կը հետեւինք: Համաձայն. բայց ինչո՞ւ համար կէտրէ ետք կամ շաբթուան մէջ այլ պահեր չենք ստեղծեր ամբողջացնելու համար մեր ծրագիրը... Պիտի ըսեն դարձեալ, որ ուրիշ պարապունքներ ունին պատանիները, հետեւաբար կը տեսնենք լուրջ անհասկացողութիւն մը մեր ծնողներուն կողմէ, ինչ որ կամաց կամաց անտարբերութեան կը տանի մեզ ու դէպի անդունդ: Այստեղ դժբախտաբար շատերուն մտահոգութիւնը հայերէն լեզուն չէ, այլ՝ ինչպէս պիտի կարենան իրենց զաւակները յարմար տեղեր հասնին արդի ընկերութեան եւ միջավայրին մէջ, միեւնոյն ժամանակ խաբուսիկ հպարտութեամբ մըն ալ ըսելու, թէ այսինչ կամ այնինչ անձնաւորութեան զաւակը իրենց զաւկին բարեկամն է կամ դասընկերը...

Անդրադառնալով դասագիրքերու խնդրին՝ սուր կերպով կը զգացուի անոր տագնապը սփիւռքի մէջ: Հասկնալի է, որ գաղութ-գաղութ տարբեր են պայմանները, տարբեր պիտի ըլլան բնականաբար նաեւ դասագիրքերը: Յարգելով յունահայ գաղութը, պիտի ըսեն փորձառաբար, որ այլ գաղութի մը դասագիրքը ամբողջական առումով չի սագիր մեր աշակերտներուն, նկատի ունենալով հայերէնի անբաւարարութիւնը մեր շատերուն մօտ: Այստեղ մատչելիութեան խնդիրը պէտք է փոխուի պարզապէս եւ ոչ թէ դասաւանդումի բուն նպատակը, էութիւնը: Եւ այդ առումով՝ ինչ պէտք է տալը չէ ուսումնասիրուած համասփիւռքեան տարողութեամբ, ուր մնաց մեր գաղութի պայմանները նկատի ունենալով, երբ ճիշդ

մարդը իր ճիշդ դերին մէջ չէ: Իսկ այս աշխատանքը (դասագիրքերու եւ դասաւանդման) մասնագիտական բնոյթ ունի. հոն պէտք է աշխատին մանկավարժներ, հոգեբաններ, մեթոտաբանութեան մասնագէտներ, իսկական հայագէտներ եւ սրտցաւ ու ոգի փոխանցող ուսուցիչներ:

Հայաստանի հանրային կրթութեան նոր բարեփոխումները պէտք է ըլլան հանգրուանային: Յստակ է, որ Հայաստանը որդեգրած է եւրոպական համակարգերուն համարկուելու քաղաքականութիւն, եւ բնականաբար, հանրակրթութեան առումով անցումային վիճակ է՝ սովետականէն եւրոպականին: Կը խորհիմ

թիւնը եթէ իրենք չնախաձեռնեն եւ պարզապէս հետեւին այլոց շարժումներուն, ըսել է, թէ հիմնական խնդիր գոյութիւն ունի եւ այդ առումով ապագայի մասին ալ լաւատես մօտեցում չի կրնար ցուցաբերուիլ: Վերջապէս սփիւռքը տակաւ կը հիւծի եւ հայ լեզուն կը մեռնի մեր զաւակներու շրթներուն վրայ: Ծնողներ, համեմատաբար «երեց» սերունդ, երիտասարդութիւն եւ պատանիներ դժբախտաբար նոյնիսկ մանկապարտէզի աշակերտներ հայերէն «չեն ուզեր» խօսիլ կամ կը դժուարանան... Տագնապը եւ ցաւը համատարած պիտի դառնայ որովհետեւ եթէ հայերէն չխօսինք, ամէն օր, մենք մեր ձեռքով ոչ միայն Մես-

***Որեւէ լեզու երբ չի գործածուիր ոչ միայն մոռացութեան կը մատնուի այլեւ «կը ժանգոտի»: Ի՞նչ արժէք ունի ժանգ կապած երկաթ մը, որ սահմանուած է փճանալու, նոյնն է պարագան որեւէ մէկ լեզուի: Որքան արեւն որ լեզուն ժանգ կապած է մեր շրթներուն ան դասարարութեամբ է փճանալու:***

որ տարուէ տարի հեզասահ անցումներ պատրաստելը անելի արդիւնաբեր է այս պարագային:

Հայաստանի մէջ ուսանողութեան քաղաքականացումը պարագայաբար կ'երեւի: Համալսարաններու վերաբերող խնդիրներ թէ ազգային հարցեր, ուսանողութիւնը ինքզինք զգալի կը դարձնէ: Ղարաբաղեան շարժումի օրերուն եւ Հայաստանի վերանկախացման ժամանակաշրջանին շատ անելի զգալի էր ուսանողութեան քաղաքական աշխուժութիւնը: Այժմ նոյն կշռոյթը չերեւիր դժբախտաբար: Նոյնը կարելի է ըսել սփիւռքի պարագային, երբ կը խօսինք Հայոց Ցեղասպանութեան 50-ամեակին կամ Հայ Դատի ցուցական աշխատանքներուն մասին: Այժմ նոյն տարողութիւնը չերեւիր: Ժամանակները փոխուած են եւ իրենց հետ փոխած են նաեւ նոր հայերէն գրողներու փաղանգը... Երիտասարդութիւնն ու ուսանողու-

րոպ Մաշտոցը կը թաղենք, այլեւ կ'օժանդակենք Եունեսքոյի հարցախոյզին, որ հայերէն լեզուն յառաջիկայ տարիներուն առաջին 10 կորսուող լեզուներու շարքին պիտի անցնի...

«Ով որ քաջ է ինչ կը սպասէ»... խօսքէն գործի անցնինք: Սի միայն ավստասալէն ու վախ-վախ ըսելու փոխարէն՝ իրապէս մտահոգուինք եւ փորձենք առաջը առնել այս լուրջ տագնապին: Հետեւաբար ընտանիքը որպէս առաջին դպրոց, ուսուցիչը որպէս առաջին Այբեմարան Ս. Մեսրոպ Մաշտոցը մարմնաւորող, եկեղեցին որպէս պահապանը մշակոյթին, հայրենիքը որպէս կռուանը մեր ինքնութեան, բոլորս միասին ամէն տեսակի մեր ճիգերն ու ուժերը ի գործ դնենք յաղթահարելու համար դժուարութիւնները, մեր լեզուն մատչելի, դիւրին եւ միշտ սիրելի դարձնելու համար ամէն տեսակի հնարաւորութիւններ ստեղծելով:

# Ահնարկ մը Քսանթիի գաղութին վրայ



## **Քսանթիի Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ Ազգային վարժարանի հիմնադրութեան 85-ամեակին առիթով**

Գաղութի հնագոյն պատմական արխիւներու վկայութեանց համաձայն՝ 1880էն կը սկսի կազմուիլ Քսանթիի (Իսկէչէ) հայութիւնը: Աւելի քան 130 տարիէ ի վեր գոյութիւն ունեցող հայ գաղութը, ենթակայ եղաւ շրջանէն ներս բազմամշակութային իրավիճակին: Գաղթականներու առաջին այդ ալիքին մաս կազմող 100 հոգի, կայք կը հաստատեն շրջանէն ներս, իրենց գոյութիւնը կապակցելով շրջանի բնակչութեան հետ: Ծխախոտի բանուորներ, մանր առեւտրականներ, արհեստաւորներ եւ պաշտօնեաներ եկան հաստատուելու հարուստ պատմութիւն ունեցող այս վայրէն ներս: Տեղացի յոյն ժողովուրդը միշտ դրուատիքով արտայայտուած է հայ ժողովուրդին հանդէպ: Քսանթիի հայ գաղութը, ինչպէս անցեալին, նոյնպէս այսօր, իր գոյութեան երաշխիքը կը տեսնէ իր մշակոյթի, լեզուի եւ ազգային ինքնութեան պահպանման մէջ:

1922ին արդեն մտաւորապէս 30-35 ընտանիքի (130-154 անձ) կը հասնի անոնց թիւը, գլխաւորաբար Տիվրիկէն, Շապին-Գարահիսարէն, Քէմախէն, Էտիրնէն, Մալկարայէն եւայլն: Այս փոքրաթիւ գաղութը շատ մեծ ճիգերով կը յաջողի հազիւ նախակրթարանի 2-3 դասարան պահել, իբրեւ դպրոց գործածելով նախ՝ գաղութի անդամներէն մէկուն սենեակը, ապա՝ վարձուած տուն մը: Եկեղեցի կառուցելու փափաքը զօրաւոր եղած է եւ այդ նպատակով գնուած է յարմար վայր մը, ուր հետագային կառուցուած է այժմու եկեղեցին եւ դպրոցը: 1922ին Փոքր Ասիոյ աղէտէն ետք, զանազան շրջաններէ Քսանթի կուգան հայ գաղթականները. հայութեան թիւը անմիջապէս կը բարձրանայ 3000ի: Սակայն անոնց մեծ մասը շուտով կը մեկնի, դէպի այլ վայրեր: Մօտ 1000 հոգի կը տեղահանուի 1924ին հելլէն կառավարութեան կողմէ, Փափանասթասիի կառավարական դահլիճին օրով: 400 մարդ կը մեկնի Յայաստան: Գաղութը հետզհետէ կը նստրանայ:

**Հ.Ե.Ե. միութեան կազմութիւնը**

Խումբ մը տեղացի հայ երիտասարդներ, 1923ի Դեկտեմբեր 10ին, նախաձեռնութիւնը կ'ունենան հիմնելու Յայ երկսեռ Երիտասարդներու Միութիւնը, նպատակ ունենալով սատարել հայ երիտասարդութեան մտաւոր, ֆիզիքական եւ բարոյական կարողութեանց զարգացման ու բարձրացման, ինչպէս նաեւ օժանդակել տեղական ազգային կրթական հաստատութեանց: Գաղութի երիտասարդ տարրը համախմբելու, յարաբերութիւն եւ ոգեւորութիւն ստեղծելու առաջադրանքով, բաւարար գործունէութիւն կը ծաւալի, նորահաս սերունդը այլասերումի եւ ծուլումի վտանգէն զերծ պահելու համար: Գրա-



**ՀՅԲ Քսանթիի ենթակոմիտէ - 1922**

դարան կը կազմուի, հաւաքավայր կը պահուի, թատերական, մարզական նախաձեռնութիւններ կ'իրագործուին, նուագախումբ կը կազմուի եւ շարք մը ձեռնարկներ եւ ելոյթներ կը կազմակերպուին: Միութիւնը 1929ին պաշտօնական ճանաչում կը ստանայ հելլէն կառավարութեան կողմէ: Փայլուն տասնամեակի մը ընթացքին, իր շարքերուն կը միանան աւելի քան 200 անդամներ: Միութիւնը վարձու սենեակ մը կը պահէ որպէս հաւաքատեղի: Հետզհետէ յաջողած է հարուստ մատենադարան-գրադարան մը կազմել, կազմակերպել ձեռնարկներ, դասախօսութիւններ, ինչպէս նաեւ



**Հանդիսատար Ս. Պարարագ - 1931**

**Թեմակալ առաջնորդ Գերշ. Սահակ արք. Այվազեանի այցելութիւն Քսանթի**



## Քսենիա Զևե Գևորգյան



### Վարժարանի աշակերտությունը

թատերական ներկայացումներ: Հայկական երիտասարդական կեանքը այնուհետև



սկսած է աելի աշխուժանալ պարահանդեսներով եւ բազմամարդ հաւաքոյթներով: Չարկ տրուած է գրադարանի ճոխացման: Չանագաններէ իբրեւ նուէր ստացուած են գիրքեր. մասնատրապէս էտիրմէցի հայրենակիցներ, իրենց «Վերածնունդ» միութեան գրադարանի մաս մը գիրքեր փոխադրած են Քսանթի եւ նուիրած միութեան: Գրադարանը թանգարանային բնոյթ չէ ունեցած, այլ վերածուած է կենդանի քիչի, որ ամէնօրեայ հերթականութեամբ երիտասարդներ համախմբած է, որոնք գիրքեր վերցնելով, ըն-

### Նուագախումբի կազմը



թերցելով եւ յետոյ զրոյցներ կատարելով աշխուժներդրում ունեցած են գրական կեանքէն ներս: Հայկական թերթերու ճոխ հաւաքածոյ մըն ալ ստացուած էր Գահիրէէն, Փարիզէն, Պոսթընէն եւ Պոլիսէն:

### Երաժշտական բաժին

1926ին Արամ Արրահամեանի ղեկավարութեամբ եւ 50 երկսեռ անդամներու մասնակցութեամբ կազմուած է նուագախումբ մը: Տրամայէն օր. Թագուհի Միքայէլեան, իր մեներգներով, մասնակցութիւն բերած է կազմակերպուած երգահանդեսի մը:

1927ի կիսուն հիմնուած է գործիական երաժշտութեան ճիւղը՝ ղեկավարութեամբ Ստեփան Եաղուպեանի, որուն մեկնումէն վերջ պահ մը այս ճիւղի ղեկավարութիւնը ստանձնած են Ալեքսան Վարդանեան եւ Արամ Ելդէնեան:

1934էն ետք, մի քանի տարիներու ընթացքին, նուագախումբը պահած է ճագի յատուկ բաժին մը, որ պարահանդեսներուն փայլը աւելցուցած է իր կատարումներով: Գեղարուեստական այլ նախածեռնութիւններ եւս տեղի ունեցած են. պահուած են գծագրութեան եւ զեղագրութեան (ուսուցիչ Միհրան Գալիկեանի ղեկավարութեամբ), ինչպէս եւ ձեռագործի բաժիններ (տիկին Տիգրանուհի Գասպարեանի ղեկավարութեամբ):

### Պարահանդեսներ

Ի նպաստ ազգային վարժարանի՝ տարեկան պարահանդես կազմակերպուած է 1926էն սկսեալ եւ զումարը ամբողջութեամբ յատկացուած է դպրոցի կարիքներուն:

### Մարզական կեանք

Քսանթիի մէջ մարզական շարժումը սկսած է 1921ի վերջաւորութեան, նախաձեռնութեամբ Մէլէքեան եղբայրներու եւ Հրանդ Մէնէնայեանի, որոնք



**«Վերածնունդ» միութեան գրադարանը**

իրենց սեփական միջոցներով գնած են ոտնագնդակ մը, յարակից այլ սարքեր եւ կազմած են ոտնագնդակի խումբ մը, հսկողութեամբ մարզիչ Գրիգոր Մէլէքեանի:

1922ի գաղթականութեան ալիքին հետ Քսանթի ժամանած են Նիր Իսթ Ռիլիֆի հայ որբերը, ինչպէս եւ ՅՄԸՄի կարող մարզիկներ (Յայկ Պասնաճեան եւ Օննիկ Թահթաճեան) որոնք որոշած են մարմնակրթական միութիւն մը կազմել իր բոլոր ճիւղերով: Այսպէս կազմուած է «Կայծ» միութիւնը, որ շուտով սկսած է փայլուն յաջողութիւններով շրջան մը իրագործել եւ քաղաքի առաջնակարգ խումբ նկատուիլ: 1925ին, ներգաղթի առաջին կարաւանով Յայաստան կը մեկնին «Կայծ»ի ամենալաւ մարզիկներէն 9 հոգի: Անկէ ետք միութիւնը կ'որոշէ ուժ տալ կողովագնդակի եւ աթլետիկայի: Ապագան սակայն, այս խումբերուն համար լաւ չըլլար, քանի որ մարզիկները հետզհետէ դէպի Եւրոպա կը մեկնին: Միութիւնը զարկ կուտայ սկաուտական, առողջապահական եւ մարզական նիւթերով դասախօսութեանց: Նշենք, որ երիտասարդներու մեծ մասը ծխախոտի գործարաններու մէջ բանուորներ էին: Միութիւնը կը փափաքէր զարկ տալ մարմնակրթական շարժ-

ման, որ միակ միջոցն էր փրկելու համար առողջութիւնը ծխախոտի աշխատանոցներուն մէջ հիւժող պատանի բանուորներուն: Առաջին առիթով գումար կը տրամադրուի մարզարանի մը շինութեան համար, որուն հողը ազնուօրէն կը տրամադրէ Կիրակոս Բարթեմեան:

Աթլետիկայի ճիւղէն ներս «Կայծ» միութիւնը մեծ յաջողութիւններ կ'արձանագրէ. Ամէնէն կարելորը՝ 15 Յունիս 1928ին կազմակերպուած «Թրակիահայ ողիմպիականն» է, որուն մասնակցութիւն կը բերեն Գոմթիւնիի «Կայծակ» եւ Քսանթիի «Շանթ» եւ «Կայծ» միութիւնները: Առաջնութեան կը տիրանայ «Կայծ»ը:

1928ի Յունիս 2ին, Աթէնքի մէջ կը կազմակերպուի ՅՄԸՄի կողմէ «Յունահայ Ա. Ողիմպիական»ը, որուն մասնակցութիւն կը բերեն բոլոր խումբերը:

**Թագուրեաններու**

**Ժխախոտի գործարանը**

Ինչպէս նախապէս ալ նշեցինք, շրջանէն ներս հայերը բաւական աշխուժութիւն ցուցաբերած են առեւտուրի եւ գործառնութիւններու մէջ: Նշանակալի տեղ գրուած են նաեւ ծխախոտի մարզէն ներս, իբրեւ առաջատարներ ունենա-

լով Սարեան եւ Թագուրեան ընտանիքները, որոնք Յունաստանէն դուրս նաեւ գործարաններ եւ ներկայացուցչութիւններ ունէին:

Թագուրեաններու ծխախոտի գործարանը կը գտնուի Քսանթիի քաղաքի կեդրոնին մէջ եւ մօտ տասնամեակ մը առաջ, Քսանթիի քաղաքապետական խորհուրդի որոշումով, մշակութային կեդրոնի վերածուած է: Վայրի ընդարձակութիւնը, բաժանումներու յարմարութիւնը եւ քաղաքին կեդրոնը գտնուելու հանգամանքը ա-



**Քսանթիի վաարակաշար ընկերներէն 100-ամեայ ընկ. Կարօ Մորալեանը**

ռիթ տուած են քաղաքապետութեան օգտագործելու անցեալի փառաւոր ապարանք-բնակարանը՝ որպէս մշակութային յարմար վայր:

**Ամփոփ կենսագրականներ Թագուրեան ընտանիքին**

**Թագուր Թագուրեան**

Թագուր Թագուրեան ծնած է Էտիրնէ: Մեծցած եւ ուսումը ստացած է Փլովտիւ (Ֆիլիպուպոլիս), Պուլկարիա: Սկիզբը, Թագուր աշխատած է հօրը քով, կերպասեղէնի գործով եւ ճամբորդութիւններ կատարած մինչեւ 1910: Անկէ ետք, ծխախոտի անձնական գործով զբաղած է Պուլկարիա, յետոյ



**Ծխախոտի գործարանը Քսանթիի կեդրոնական քաղամասէն ներս**

Քըրշէֆ ծխախոտի ընկերութեան մասնակցած է: 1919-1920 Սթենտըրտ ծխախոտի ընկերութեան տնօրէնութիւնը վարած է: 1921ին Յունաստանի մէջ կազմակերպած է ֆրանսական «Գոմփանի Ժեներալ» ծխախոտի ընկերութիւնը, ընդարձակելով այն Պուլկարիոյ եւ Թուրքիոյ մէջ: 1928էն ետք ձեռնարկած է իր անձնական գործին:

Թագուր Թագուրեան, շնորհիւ իր անառարկելի ծարպիկութեան, յանդգնութեան, ձեռներէցութեան եւ մասնագիտութեան, ծանօթ դէմք մը դարձած է Եւրոպայի ծխախոտի հրապարակին վրայ, իբրեւ հայ: Թագուրեան, իբրեւ ազգասեր հայ, օժանդակութիւն բերած է բարեսիրական նպատակներու: Անոր շնորհիւ, Քսանթիի հայութիւնը հնարաւորութիւնը ունեցած է մէջտեղ բերելու իր առաջին աղօթատեղին. ան վարած է ազգային պաշտօններ նոյնպէս Փլովտիւի մէջ:



**Արամ Թագուրեան**

Արամ Թագուրեան ծնած է 1897ին, Պուլկարիոյ Իսլիմեա

քաղաքը: Ուսումը ստացած է Փլովտիւի ազգային եւ Ժամանակ մըն ալ Պարտիզակի (Թուրքիա) բարձրագոյն վարժարանի մէջ: Երիտասարդ տարիքէն մտած է առեւտրական ասպարեզ եւ զբաղած է ծխախոտի գործով, որու մասնագէտը դարձած է: 1920ին անցած է Քսանթի: 1922ին հաստատուած է Գավալա, որպէս տնօրէն «Գոմ-



փանի Ժեներալ»ին: Արամ Թագուրեան վարած է ֆրանքո-ամերիկեան ընկերութեան Գավալայի մասնաճիւղի տնօրէնութիւնը: Փոքր հասակէն ան հետեւած է ազգային գործերու եւ ամէն առիթով սատարած է դպրոցին, եկեղեցիին եւ ուրիշ բարեկատակ ծրագիրներու:

**Արաքսի Թագուրեան**

Արամ Թագուրեան 1924ին ամուսնացած է Վանեցի Վարդան Պէյի դստեր՝ Արաքսիի հետ, որ նոյնքան եւ աւելի ազգասեր հայուհի մըն էր, միշտ պատրաստ օգտակար ըլլալու իր ազգին եւ Քսանթի-Գավալայի հայութեան: Գավալայի հայ գաղութը տէր

եւ տիկին Թագուրեաններու շնորհիւ է, որ կ'ունենայ մեծ գումար մը, իր գործերը մատակարարելու համար:

**Քսանթիի հայ գաղութի ներկայ պատկեր**

Գաղութը, երկար տարիներու իր գոյութեան ընթացքին, տարբեր հանգրուաններէ անցած է, փայլուն օրեր ապրելով ան-



ցեալին, որպէս բազմամարդ եւ բարգաւաճ հայկական գաղութ: Ներկայիս, մեր հայրենակիցներու թիւը չափազանց նուազ է, այսուհանդերձ՝ աշխուժ հայկական կեանք կայ, յատկապէս միօրեայ դպրոցի եւ եկեղեցւոյ շուրջ: Գաղութը ապագայի իր երաշխիքը կը տեսնէ իր մշակոյթի, լեզուի եւ ազգային ինքնութեան պահպանման մէջ: Այսպէս, հոգ կը տարուի երիտասարդ տարրին հայադրոշմ դաստիարակութեան ապահովման գծով: Կը գործեն եկեղեցւոյ Թաղային Խորհուրդը, Հայ Գթութեան Խաչի «Արաքս» մասնաճիւղը, որ իր բարեսիրական գործունէութեան առընթեր կը հոգայ միօրեայ վարժարանին աշխատանքները:

**Քսանթիի Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջաքակին մէջ**





Շաբաթ 26 Մարտ 2011ին, Թրակիոյ մշակութային կեդրոնէն ներս կազմակերպուեցաւ եռօրեայ ցուցադրութիւն մը, որու ընթացքին ներկայացուեցաւ պատմական ճոխ հաւաքածոյ մը, բաղկացած պատմական իրերէ ու արխիւներէ, եկեղեցական գանձերէ, տարբեր հրատարակութիւններէ, տարազներէ, ընտանեկան ու միութենական լուսանկարներէ, եւայլն:

85 տարիներու վրայ երկարող Զսանթիի գաղութի պատմութիւնը ցուցադրուեցաւ արխիւներուն ընդմէջէն, մանրամասն տեղեկութիւններով հայութեան կառոյցներու, ընկերային եւ մշակութային կեանքի, ասպարէզի, կրթական մակարդակի, ինչպէս նաեւ տեղական մարմիններու հետ յարաբերութիւններուն վերաբերեալ:

Հաւաքածոյի հիմքը կազմեցին Կարօ Թերզեանի ջանքերով հաւաքուած առարկաները:

Ձեռնարկին ներկայ գտնուեցան Յունաստանի Զաղաքացիի իրաւունքի պաշտպանութեան փոխ-նախարար Սոքրաթիս Զսինիտիս, մետրոպոլիտ Փանտելիէմոն սրբազանը, փոխ-մարզ-



պետ Ֆոթիս Զարալիտիս, փոխ-քաղաքապետ Գոնսթանտինոս Պենիս:

Օրուայ դասախօսութիւնը կատարեց պատմաբան եւ գրագետ տոքթ. Փէթրոս Եորղանժիս, որ երեք անգամ պարգեւատրուած է Աթէնքի Ակադեմիոյ կողմէ եւ կը համարուի Զսանթիի եւ ընդհանրապէս Թրակիոյ շրջանի կարեւոր պատմագետներէն մին:

**Կիրակի 27 Մարտ 2011ին փոնուեցաւ Քսանթիի Ա. Աստուածածին եկեղեցւոյ եւ Ազգային վարժարանի 85ամեակը:**

**Տեղի ունեցաւ հանդիսաւոր սուրբ պատարագ եւ հոգեհանգստեան պաշարօն, եկեղեցւոյ եւ ազգային վարժարանի ծառայած ազգայիններու յիշատակին: Պատարագը մատուցեց յունահայոց առաջնորդ Գերշ. Տ. Նորէն եպս. Տողրամանեան, Քսանթիի հոգեւոր հովիւ Տ. Պօղոս քինյ. Պալթայեանի հեպ: Երզնցողութիւնները կատարուեցան դպրաց դասուն կողմէ:**



Կոնդակի ընթերցում  
Ընդառաջելով սրբազան հօր խնդրանքին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ հայրապետը յատուկ կոնդակով մը շնորհաւորեց եւ արժեւորեց Քսանթիի Ա. Աստուածածին եկեղեցւոյ 85-ամեակը՝ իր պատգամին մէջ քաջալերելով որ շրջանի հայութիւնը, ինչպէս անցեալին նոյնպէս այսօր եւ ապագային, համախմբուած մնայ եկեղեցւոյ հովանիին շուրջ:

Սրբազան հայրը իր քարոզին մէջ ներկաներուն կոչ ըրաւ ազգայինը գերադասելու եւ հայկական աւանդութիւնները պահպանելու, ապա խրախուսեց ու գնահատեց շրջանի հայութեան ջանքերով տարուած աշխատանքները:

Թաղային խորհուրդի ատենապետ պրն. Թազուր Գարաօղլանեան գոհունակութիւն յայտնեց, որ պատշաճ ձեւով կարելի եղաւ նշել եկե-

ղեցւոյ անուանակոչութեան ոտնը, նշելով որ այս թուականը յատուկ նշանակութիւն ստացաւ Աթէնքի Հ.Ս.Ը.Մ.ի կողմէ նախածնունած արշաւով եւ Աթէնքէն ու Թեսաղոնիկէէն ժամանած այցելուներու քաջալերական ներկայութեամբ, որ կը խթանէ հիւսիսային Յունաստանի փոքրաթիւ համայնքներու ազգային ոգին ու յարատելելու կամքը:

Եկեղեցական արարողութեան աւարտին, բոլորը միասնաբար հաւաքուեցան եկեղեցւոյ շրջաբակին մէջ զետեղուած խաչքարին առջեւ, ուր երգուեցան «Կիլիկիա» մաղթերը եւ «Մեր Հայրենիք» հիմներգը:

Քսանթիի միօրեայ վարժարանի երկու աշակերտներ հայրենասիրական ոգիով ասմունքներ կատարեցին, ներկաներու զնահատանքը ստանալով:

# «ԱՋԱՏ ՕՐ»Ի ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

## ԱՇՈՏ ԵՒ ԹԱԳՈՒՄՆԻ

### ՄԱՄԻԿՈՆԵԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Աշոտ Մամիկոնեան, իր ամբողջ կեանքի ընթացքին կողքին ունենալով իրեն հետ գաղափարներով ու ապրումներով քայլ պահող թոյրը՝ Թագուհին, ծառայած է ազգին ու գաղութին: Տարբեր չէր կրնար ըլլալ իրենց պարագան: Անոնք դաստիարակուած էին հայաշունչ մթնոլորտի մը մէջ, Աթէնքէն շատ հեռու՝ Ալեքսանտրուպոլիս քաղաքին մէջ:

Իրենց հօր՝ Մխիթարի ազգային ու հայրենամուտը շունչը դրոշմուած էր իրենց հոգիին մէջ ու, այդ ոգիով ներշնչուած, անոնք շարունակեցին իրենց հօր ազգանուէր ծառայութիւնը: Աշոտ Մամիկոնեան թրծուած էր Յ.Յ.Դ. կուսակցական ղեկավարներ՝ Ծատուրոֆի, Կառվարենցի, Պալեանի, Կարօ Գեորգեանի շունչին տակ: Այս առիթով յիշեցնենք, որ Ալեք-

սանտրուպոլիս քաղաքը կը յիշեցնէր Յ.Յ. Դաշնակցութեան նախապատերազմեան միջնաբերդը: Այդ մթնոլորտին մէջ Աշոտ Մամիկոնեան հասակ առաւ, գործեց, լռիկ-մնջիկ, հասնելով ամէն ինչին, առանց փող ու թմբուկի: Միայն վերջին տարիներուն ակամայ քաշուած էր գաղութի ազգային թէ ընկերային կեանքէն, քիչ մը հանգստանալու համար:

Աշոտ Մամիկոնեան տասնեակ տարիներ հանդիսացաւ կապը հիւսիսային Յունաստանի եւ Աթէնքի միջեւ: Եղաւ կենդանի կապը, Ազգային Վարչութեան թէ առաջնորդարանի ծամբով, հիւսիսային Յունաստանի մէջ հաստատուած հայութեան, յատկապէս Ալեքսանտրուպոլսոյ հայրենակիցներուն համար:

Երկար տարիներ եղաւ յունահայ կուսակցական մամուլին եւ պարբերաթերթերուն՝ «Նոր Օր»ին, «Ազատ Օր»ին շրջանէն ներս գործող պատասխանատուն: Յատուկ գուրգուրանք ունէր հայ թերթին հանդէպ եւ մօտէն կը փորձէր հետեւիլ տարբեր հրատարակութիւններուն: Այս բոլորի կողքին կը հասներ շրջանի կարիքներուն: Ով հարց ունենար՝ կը դիմէր Աշոտին այն հաստատ համոզումով, որ պիտի չմերժուէր: Իր բարեհամբոյր նկարագրով ու ընթացքով՝ Աշոտ Մամիկոնեան կ'օժանդակէր բոլորին սիրով, հաւատքով, համոզումով:

Աշոտ Մամիկոնեան կը տազնապէր Հայաստանի ու Արցախի հարցերով: Աթէնքէն շրջանը այցելած կուսակցական ընկերներու ներկայութենէն օգտուելով՝ երկար զրոյցներ կը կատարէր եւ հետաքրքրութեամբ կ'արծարծէր ազգային հարցերը: Ծովեզերեայ սրճարանին շուրջ նստած հետաքրքրաշարժ զրոյցներու մէջ մտած է միշտ, մտաբերելով անցեալը, տազնապէտով ապագայի մասին եւ խօսելով մեր Հայրենիքի իրավիճակի



«Տարօնեան» Երիտասարդական Միութեան անդամները



**Աշուր եւ Թագուհի Մամիկոնեաններու մեծ հայրը Կարօնցի Յ. Սարգսեան**



**«Տարօնեան» վարժարանի երկսեռ աշակերտութիւնը**

մասին, նախքան վերանկախացման շրջանը: Լաւ լուրերով կ'ուրախանար, գէշ լուրերով կը տխրէր, սակայն խօսակցութեան մէջ տիրապետողը միշտ Ազատ, Անկախ, Միացեալ Հայաստանի տեսիլքն էր: Նոյն այս հարցերը կը փոխանցէր իր քրոջ Թագուհիին, որ իր եղբօր հանդէպ սեր ու պաշտամունք կը տածէր:

1968ին որոշ ժամանակի համար Աշուրը Աթէնք ապրեցաւ: Սեփականութեան տէր դառնալով՝ Քալիփոյիս պողոտային վրայ գտնուող իր յարկաբաժինը կտակեց իր սիրած օրաթերթին, ապահովելու ու երաշխաւորելու համար անոր անխափան հրատարակութիւնը հետագայ տարիներու ընթացքին:

Երկու եղբայրներու մահէն ետք, Աթէնքի կեդրոնական շրջաններէն Քալիփոյիս պողոտային վրայ գտնուող յարկաբաժինը փոխանցուեցաւ «Ազատ Օր»ին:

**Ա**լեքսանտրուպոլսոյ հայ գաղութը իր հին անունով՝ Տէտէ-Աղած կը կոչուէր: 1920էն ետք կը պատկանէր հելլէններուն: Իսկ անկէ առաջ եղած էր պուլկարներու եւ թուրքերու տիրապետութեան տակ:

Քաղաքին աշխարհագրական կարեւորութեան բերումով, գերման երկաթուղային ընկերութիւնը 1872ին սկսած է շինութիւնը այն երկաթուղագծին, որ այսօր կ'երկարի մինչեւ Թեսալոնիկէ եւ Պոլիս: Այս շինութեան մէջ աշխատելու համար շրջան ժամանած Մշեցի Մուրատ Չաւուշի, Ստեփան աղայի եւ Հաճի Աղաճանի զլխաւորութեամբ, 130ի մօտ աշխատաւորներ առաջին հայերը կ'ըլլան,

որ բնակութիւն կը հաստատեն շրջանէն ներս:

Թագուհի Մամիկոնեան կը պատմէր թէ իրենց մեծ հայրը՝ Յովհաննէս Սարգսեան, Ալեքսանտրուպոլսոյ շրջանէն ներս հաստատուած առաջին հայերէն էր: Ան Տարօնի ծնունդ էր, հարուստ ընտանիքի զաւակ:

Ներու հիմնադրութեան մաս կը կազմէ: Ան եկեղեցւոյ շինութեան կը մասնակցի:

Ինչպէս ծանօթ է, հայկական եկեղեցին կառուցուած է 1877ին, ռուս զօրավարի մը կողմէ այդ նպատակին համար յատկացուած հողամասին վրայ, լուծանքովն ու քրտինքովը

**\* «Մեր իրականութեան մէջ ան, որ իր անձը կը խոնարհեցնէ՝ կը բարձրացնէ ընդհանուրին գոյութիւնը: Մեր սիրելի ազգը բարձրանալու համար շա՛ր պէտք ունի վեհանձն, այլեւ խոնարհ զաւակներու: Զինուորին յաղթանակը իր քաջութեան մէջ է եւ ոչ թէ գոռոզութեան: Անբովանդակ ու կեղծ հպարտութիւնը պարտութիւն է: Ականջի օճ ըրէք ասիկա:**

**\* Պէտք է սիրել, շա՛ր սիրելի զիրար: Մանաւանդ գաղափարի զինուորներուն համար առաջնակարգ պարտականութիւն մըն է այս: Իրարմով ամբողջացուելու ձգտումն ունենալ ու սնոյրի բաներու համար իրարու սիրտը չկտրել: Այդ կտրած սրտերը որքա՛ն անուշ կը դառնան, երբ այլեւս չկան: Ամէնէն անուշ բանը, որ կայ, սէրը չէ՛ միթէ, փառապանքի եւ իմաստութեան մէջ արմաքացած սէրը:**

**«Տարօնեան» Երիտասարդական Միութեան հիմնադիր Գէորգ Կառվարենցի պարգամներէն:**

Խարտեաշ մագերով եւ կապուտակ աչքերով երիտասարդ մըն էր: Յունաստանի մէջ ծանօթացած էր իր տիկնոջ՝ Իսկուհիին հետ, որ Էտիրնէն գաղթած եւ Տիտիմոթիլիս հաստատուած էր:

Կ'ամուսնանաւ եւ չորս զաւակներու տէր կը դառնան: Յովհաննէս Սարգսեան գաղութի կազմաւորման եւ կառոյց-

Մշեցի համեստ այն բանուորներուն, որոնք Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետի անունով կոչեցին եկեղեցին: Տաս տարի ետք, 1887ին, եկեղեցւոյ շրջափակին մէջ փոքր դպրոց մըն ալ կը շինեն, զոր կը կոչեն հայրենի աշխարհ՝ Տարօնի անունով:

Չորս զաւակներէն մին՝ Պարգեւուհին կ'ամուսնանայ իր եղբօր Գէորգի



**Ալեքսանդրուպոլսոյ հայ գաղութէն ներս գործող Հայ Կապոյտ Խաչի մասնաճիւղի անդամները**



**Թագուի Մամիկոնեանի յաճախած իտալա-ֆրանսական աղջկանց դպրոցի աշակերտուհիները**

բարեկամ Մխիթար Մամիկոնեանի հետ: Մխիթար Մամիկոնեանի մեծ եղբայրը՝ Զօրեկ պէյ Մամիկոնեան հայկական բանակի զօրավար էր: Իր ընտանիքը, կիսն ու զաւակները, ջարդերուն զոհ դարձած էին: Անոր կեանքի նպատակը թուրքերէն վրէժ լուծելն էր:

Մխիթար Մամիկոնեան Իզմիրի մէջ կ'աշխատէր որպէս կօշկակար: Ալեքսանտրուպոլիս գաղթելով՝ ան կը շարունակէ կաշիի վրայ իր գործը, վաճառախանութներու կը տիրանայ եւ փայլուն յաջողութիւն կ'արձանագրէ իր ասպարէզէն ներս:

Մամիկոնեան ընտանիքը երկու զաւակներ կ'ունենայ՝ Աշոտը եւ Թագուլան, որոնք կը յաճախեն տեղւոյն «Տարօնեան» վարժարանը: Ապա Թագուլա կ'աւարտէ տեղւոյն իտալա-ֆրանսական բարձրագոյն կրթութեան աղջկանց դպրոցը: Դոն կը հետեւի դաշնակի եւ օտար լեզուներու դասաւանդութեան, զծագրութեան եւ ձեռագործի դասեր կ'առնէ: Նոյն պահուն կը շարունակէ հայերէնը զարգացնել, իր եղբոր Աշոտի օգնութեամբ:

Հայերէնի իմացութեան բարձր մակարդակ ունէին թէ՛ Աշոտը, թէ Թագուլին:

Մեծնալով՝ անոնք կ'անդամակցին Տարօնեան երիտասարդական Միութեան, որ հիմնուած էր 1926ին, այդ շրջանի Ազգային վարժարանի տնօրէն Գեորգ Կառվարենցի նախաձեռ-

նութեամբ եւ օժանդակութեամբ համանուն վարժարանի ուսուցիչներէն պրն. Զրանդ Քեօսէյեանի: Միութեան հիմնադիր անդամները եղած են: Անդամ-անդամուհիներ եղած են նաեւ ատենին գոյութիւն ունեցող «Տարօնեան Սանուց» աշակերտական միութեան, Գեորգ Կառվարենցի ղեկավարած «Նոր Քնար» երգչախումբին եւ «Արարատ» մարմնակրթական միութեան:

Աշոտ բազմիցս վարչական պատասխանատուութիւն ստանձնած էր երիտասարդական միութենէն ներս: Հետագային ան ստանձնեց նաեւ ազգային-կուսակցական տարբեր պարտականութիւններ: Կը տիրապետէր ֆրանսերէն ու իտալերէն լեզուներուն եւ ջութակ կը նուագէր: Հետեւած էր իրաւաբանական եւ հաշուապահական դասընթացներու: Կ'աշխատէր իր հօր ընկերութեան մէջ՝ ղեկավարելով եւ մատակարարելով գործերը: Իր բուն փափաքն էր սակայն դեղագործ դառնալ: Նպատակ ունէր Ֆրանսա մեկնելու, երբ ծագեցաւ Բ Համաշխարհային պատերազմը եւ ան երբեք չկարողացաւ իրականացնել իր երազը :

*Խորին շնորհակալութիւն տրուի Նուսի Սարգիսեանին, որ կարելոր տեղեկութիւններ փոխանցեց «Ազատ Օր»ի խմբագրութեան, Մամիկոնեան ընտանիքի պատմութեան մասին:*

Քայլերգ «Տարօնեան»  
Երիտասարդական  
Միութեան  
Գեորգ Կառվարենց

Թէև ներուած Եղեռնի  
Փոթորկէն՝ հեռո՛ն,  
Օտար հողի վրայ, - թաղա՛ր՝  
Նայրաւանդ սերմին,-  
Լուսածարա՛ւ՝ հայրենի  
Զինջ արեւներուն,  
Ժիր մեր հոգին չի՛ դողար՝  
Անդունդի սեմին...:

Արմէնեան հողն ու ոգին՝  
Մեր սրտին մէջ անառիկ,  
Մի՛շտ խանդավառ,  
կաթոգին՝  
Բարձունքներու կը յառիք:

Ո՛վ լոյս արթուն,  
Իտլալի ռահվիրայ,  
Վարէ՛ մեզ դուն,  
Մեր հայրերուն հետքին  
վրայ:

Քեզմով ապրինք՝  
Նորիզոնէ հորիզոն,  
Մինչև նորէ՛ն մեզ հայրենիք  
Տանիս, հո՛ն, Տարօ՛ն...:

# ԴԱՍԱԿԱՆ ԵՐԳԱՐՈՒԵՍՏԻ ԽՈՆԱՐՆ ԹԱԳՈՒՏԻՆ՝ ՍՕՆԱ ԳԱՐԳԱԼՈՅԵԱՆ

Արմինե Մելիք - Իսրայելեան\*

Չայնի մաքրամաքուր ու վերասլաց հնչողութիւն, մինչեւ հոգու խորքը թափանցող ապրումների դասականօրէն յղկուած, բայց չափազանց անկեղծ մատուցում... Օպերային կատարողական արուեստում յայտնի հայ եւ այլազգի անունների կողքին վստահօրէն կարող ենք անելացնել դասական երգարուեստի ժամանակակից կատարողներից Սօնա Գարգալոյեանի անունը: Անուն, որ արժանի ժառանգորդն է մեծանուն երգչուհի Գոհար Գասպարեանի ստեղծած կատարողական դպրոցի, նրա սանուհին ու գասպարեանական չափանիշների կրողն ու հիանալի մեկնաբանը՝ օպերային կատարողական ասպարէզում: Սօնայի ծայնը լսելիս թւում է խաղաղութեան ու ներքին ներդաշնակութեան ունկնդիրն եւ, ծայնի կախարդանքին տիրապետող մի բնութեան հրաշքի ականատեսը, ում մեկնաբանութեամբ հնչող կատարումը՝ լինի դա արիա թէ որեւէ այլ դասական կատարում՝ մարմնանում է ու սկսում ապրել բեմում: Երգչուհին իր մենախօսութիւնն է սկսում իւրաքանչիւր ունկնդրի հետ, ասես, նոյնանում իր կերպարին, մեկնում տուեալ ստեղծագործութեան ամենաթաքնուած յոյզի նրբերանգները... Լսում ես Սօնայի ծայնն ու ունկը մագնիսանում է նրա տեմբրին, կոլորատուրային սոպրանոյի բիւրեղեայ ծայնախաղին, որ իր հարուստ հնչերանգների նրբութեամբ հարստացնում է կատարումը եւ ամենաբարդագոյն մեղեդին անգամ Գարգալոյեանի երգեցողութեամբ ունկնդրին է նուիրում անսահման թեթեւօրէն, առանց որեւէ ճիգի, ասես հոսում են հնչիւնները, որ մեղեդի են ու խօսք, ինքնատիպ մեկնաբանութեամբ առաւելապէս հարստացած: Սա իրապէս օժտուած ու տաղանդաւոր երգչուհու մասին է խօսում, որն այսօր ապրում եւ ստեղծագործում է Կիպրոսում, ում հետ առիթ ընձեռուեց զրուցել մեծանուն երգչուհի Գոհար Գասպարեանի ծննդեան օրուայ առիթով, ներկայացնելով դասական արուեստի մի հայ գոհարի եւս, ով իր գոյութեամբ, իր աշխատանքով ու վաստակով, թէկուզ օտար ափերում հիրաւի ներկայանում է իբրեւ դասական արուեստի մի խոնարհ թագուհի, ում նմանը կը ցանկանային ունենալ բարձր մշակոյթն ու քաղաքակրթական անփոխարինելի արժէքներին հաւատարիմ երկրների օպերային բեմերը... Մինչդեռ հայ օպերային բեմից հեռու են նրա նորագոյն էջերը հարստացնող այս բարձրակարգ կատարողները, որոնք ասես հայ երգի տարագիր կռուակներն են այլ ափերում, եւ որքան էլ հոգեզմայլ է նրանց կատարումն ու հպարտութիւն, յաջողութեան հասած եւս մի հայի անուան ճանաչումը, նոյնքան եւ ցաւոտ է այսօր նրանց ծայնի արձագանգը Հայաստանի օպերային թատրոնում չունենալու ափսոսանքը...



**Միրելի տիկին Սօնա մեր ընթերցողներին պատմէք մի փոքր ձեր եւ ձեր ընտանիքի մասին... Արմատներով որտեղի՞ց էք...**  
 Ծնունդ եւ մեծացել եմ Երեւանում, ինչպէս նաեւ ծնողներս: Մայրիկս ճարտարապետ է, հայրիկս՝ ինժեներ, սակայն երկուսն էլ դասական երաժշտութիւն շատ են սիրում եւ շատ գեղեցիկ ծայն ունեն: Սովորել եմ Կոմիտասի անուան պե-

տական երաժշտանոցում, Գոհար Գասպարեանի դասարանում: Ամուսնացել եմ նոյնպէս Հայաստանում՝ ամուսինս՝ Վարդանը սաքսօֆոնահար է: Իսկ զաւակներս՝ Հրաչեան ու Հայկը ծնուել են Յունաստանում: Նրանք նոյնպէս մեծ սէր ունեն երաժշտութեան նկատմամբ: Հրաչեան դաշնակահար է եւ սովորում է Պեռլինում, իսկ Հայկը նուագում է ջութակ,

դասական ու պաս գիթաուներ: Երկուսն էլ արտակարգ են երգում: Յունաստանից տեղափոխուել ենք Կիպրոս, արդեն մտաւորապէս 14 տարի է: Բացի ելոյթներէիցս, դասաւանդում են Կիպրոսի Եւրոպական Համալսարանում:

**Գուրբ բախտ էք ունեցել լինելու աշխարհահռչակ երգչուհի Գոհար Գասպարեանի սանուհին, ուսանել էք նրա դասարանում:**

նաքերիս տակից, չգիտէի իրեն յենարան լինեմ, թէ՞ ինքս ինձ...

**Տիկին Գոհարն իսկապէս ինքն էր ընտրում իրեն հոգեհարազատ մարդկանց, նրանց՝ ում մէջ տեսնում էր արուեստի արարման շարունակականութիւնը... Իրեն նուիրում կենսագրական մենագրութիւնը գրելու տարիներին բազմիցս համոզուել են դրանում, սարսափելի մեծ**

րով, մանրակրկիտ աշխատանքով:

**Ի՞նչ տուեց գասպարեանական դպրոցը ձեզ, որպէս արուեստագէտ եւ մարդ...**

Նախ եւ առաջ, ճանաչեցի օպերային երգեցողութեան հիանալի աշխարհը, յայտնաբերեցի եւ հմարաւորութիւն ունեցայ ճիշդ մշակելու ձայնիս կարողութիւնները եւ իհարկէ, ձեւաորունեց իմ բնատրութիւնը եւ աշխարհահայեացքը:

**Լինելով գասպարեանական դպրոցի կրողը, փոքեւորի աստիճան ստացած դասախօս, ի՞նչն է, որ այսօր կարեւորում էք ձեր սաների մէջ, ինչն է, որ կ'ուզե՞նալիք տեսնել նրանց մէջ: Այն ինչին որ դուք մերձեցաք արդե՞օ՞ք միայն տաղանդի ու օժտուածութեան շնորհիւ էր...**

Ես շատ մեծ կարեւորութիւն եմ տալիս արուեստագէտի բնական եւ ճշմարիտ լինելուն: Համոզուած եմ, որ ոչ մի արհեստական ձեւով սարքուած կամ արհեստականօրէն ներկայացրած ձայն երկար կեանք չի կարող ունենալ: Միայն տաղանդը եւ օժտուածութիւնը բաւական չեն որեւէ բարձր արդիւնքի հասնելու: Հարկաւոր է շատ տաժանակիր եւ մանրակրկիտ աշխատանք: Եւ ամենակարեւորը, ճիշդ օգտագործել ու խնամել այդ երաժշտական գործիքը, որ կոչուում է ձայն:

**Կա՞յ մի ոսկէ օրէնք, որ ստացել էք ձեր մեծ ուսուցչից, որպէս կեանքի դաս:**

ԼԻՆԵԼ ԽՈՆԱՐԷ :

**Գուրբ լինելով սանը հայրենադարձ հայուհու, այսօր ապրում եւ ելոյթ էք ունենում հայրենիքից**

*Ես շար մեծ կարեւորութիւն եմ տալիս արուեստագէտի բնական եւ ճշմարիտ լինելուն: Համոզուած եմ, որ ոչ մի արհեստական ձեւով սարքուած կամ արհեստականօրէն ներկայացրած ձայն երկար կեանք չի կարող ունենալ: Միայն տաղանդը եւ օժտուածութիւնը բաւական չեն որեւէ բարձր արդիւնքի հասնելու: Հարկաւոր է շար տաժանակիր եւ մանրակրկիտ աշխատանք:*



**նում, սա ձեզ համար տարիների հեռուից բախտաւորութիւն է, թէ՞ նախախնամութեան կամք...**

Ազնուութեամբ, չգիտեմ թէ ո՞րն է այս հարցի պատասխանը: Իհարկէ, ես մեծ բախտաւորութիւն եմ համարում նրա սանը լինելը, սակայն չգիտեմ ո՞ր վերջին ուժի «մատն էր խառը»: Մի գուցէ հէնց ինքը՝ Գոհարը առաջին րոպէներից ինձ իր թելի տակն առնելու ցանկութիւն ունէր... Երբեք չեմ մոռանայ, երբ ընդունելութեան քննութիւններից յետոյ մօտեցաւ ինձ եւ ներքեից վերեւ վրաս նայելով իր սուր, բայց անչափ բարի ձայնով ասաց. «Դիմումը իմ անունիս վրայ կը գրես»: Յատակը փախաւ

**պատասխանատուութեան զգացում ունենալով հէնց այդ ընտրութեանն արժանանալու համար...**

**Արդեօք հե՞շտ է լինել նման անուանի մէկի սանը, պարտաւորութիւններ, հպարտութիւն, անունն ու յոյսը արդարացնելու մղում, ի՞նչ է պահանջում...**

Հեշտ չէ, եթէ չես մտածում շահագործել նրա անունը քեզ համար ճանապարհ եւ դռներ բացելու համար, այլ մտահոգուած ես թէ ինչպէս բարձր պահես նրա պատիւը, նրա յիշատակը եւ այնպիսինը լինես, որ հէնց ինքը Գոհարը հպարտ լինի քեզ համար, ուրեմն ճանապարհը հեշտ չէ, լի է վերիվարներով, պրպտումներ

դուրս, պահպանելով նաև հայ երգի զուլալ երակը դրսում, ներկայացնում այն: Այնուամենայնիւ, ինչն՞ օտար երկրում: Եղե՞լ է մի պահ, որ ցանկանաք վերադառնալ ու հանդէս գալ Երեւանի օպերային թատրոնի բեմից, այնտեղ, ուր ժամանակին թեւածել է ձեր սիրելի ուսուցչի երկնահոս ձայնը, կերտել այդ բեմում կերպարներ, որոնք խորապէս իրենց մէջ կրում են գասպարեանական դպրոցի զգալու, ապրելու եւ առաւելագոյնս համոզիչ կերպարը հանդիսատեսին նուիրելու հանճարեղ կատարողականի ու խաղի միաձուլման դրոշմը...

Ես բացարձակապէս երբեւիցէ մտադրուած չեի Հայաստանից մեկնելու, սակայն ճակատագիրը այլ կերպ որոշեց իմ փոխարէն... Հայրենիքի կարօտը միշտ էլ վառ է ամէն մարդու հոգում: Իմ պարագայում ուղղակի մեծ պատիւ կը լինէր հնարաւորութիւն ունենալ երգել մեր Պետական Թատրոնում, առաւել եւս եթէ կարողանայի այդ համերգը կամ ներկայացումը նուիրել Գոհար Գասպարեանի յիշատակին, կատարելով դերերգեր իր երգացանկից:

**Ի՞նչ է ձեզ համար բեմը, երէկ, այսօր, ապագայում... Եւ ի՞նչ է ուսուցչութիւնը, քանի որ երկուսը յաճախ չէ, որ միմեանց հաւասար են քայլում, այս առումով կարելի է ասել, որ հեռու չէք ձեր ուսուցչից՝ Գոհար Գասպարեանից:**

Քանի որ բեմ եմ բարձրացել շատ մանուկ հասակից, երբ մենակատար էի «Առնուակ» մանկապատանե-

կան ձայնային - գործիքային համոյթում՝ բեմում գտնուելն ինձ համար անհրաժեշտութիւն եւ երջանկութիւն է: Բեմը այն վայրն է, ուր կարող եմ արտայայտուել երաժշտութեան միջոցով, օգտագործել իմ ամբողջ երեւակայութիւնն ու ձայնային հնարաւորութիւնները, ուր դառնում եմ միջանկեալ օղակ դարերից եկած ստեղծագործութիւնների եւ հանդիսատեսի միջեւ, ամէն անգամ իրովի եւ տարբեր ձերտով մեկնաբանելով դերերը... Ինչ վերաբերում է դասաւանդելուն, ապա պէտք է ասեմ, որ ինձ շատ մեծ ուրախութիւն է պատճառում գիտելիքներս երիտասարդներին փոխանցելը: Դա ինձ օգնում է կատարելագործուել նաեւ որպէս երգչուհի, քանի որ շատ յաճախ աշակերտների հարցումներին պատասխանելու համար փնտռում եմ ինքս ինձ մէջ, թէ ինչպէս է աշխատում երգեցողութեան սիստեմը: Այսօր ես կարող եմ հպարտանալ, որ իմ աշակերտներից շատերը շարունակում են իրենց ուսումը Յունաստանում, Պուլկարիայում, Չեխիայում, Հունգարիայում, Անգլիայում, Ֆրանսայում եւ Միացեալ Նահանգներում, հանդէս են գալիս Կիպրոսի պետական մուսիկսթի հետ եւ մենահամերգներով եւ ձայնագրում ու թողարկում են ձայներիզներ:

**Լինելով դասական երգեցողութեան հրաշալի գիտակ եւ կատարող այսօր ո՞ր տեղում էք տեսնում այն արտերկրում եւ արդեօք գոհացնում են ձեզ մեր կատարողների նոր սրունդը, եթէ ծանօթ էք:** Յաւոք դասական ե-

րաժշտութիւնն ամէնուր ճգնաժամ է ապրում, միայն այնպիսի երկրներում ինչպիսին են Գերմանիան եւ Ֆրանսան, ուր դասական երաժշտութիւնը դարերի պատմութիւն ունի, դեռ կարելի է գտնել հետաքրքրուածութիւն դասական երաժշտութեան նկատմամբ: Հերոստատեսութեամբ ցուցադրուող այսօր բոլոր «տաղանդ փնտռող» հաղորդումները ծնում են երիտասարդների մէջ մի

*Ինչ վերաբերում է դասաւանդելուն, ապա պէտք է ասեմ, որ ինչ շատ մեծ ուրախութիւն է պատճառում գիտելիքներս երիտասարդներին փոխանցելը:*  
*Դա ինչ օգնում է կատարելագործուել նաեւ որպէս երգչուհի, քանի որ շատ յաճախ աշակերտների հարցումներին պատասխանելու համար փնտռում եմ ինքս ինչ մէջ:*

մտածելակերպ, որ երգելը յայտնի եւ ճանաչելի դառնալու հեշտ միջոց է: Այնինչ՝ երգելը դա հոգու պահանջ է: Դժբախտաբար, երկար տարիներ բացակայելով հայրենիքից, ծանօթ չեմ երիտասարդ կատարողներին: Սակայն համոզուած եմ, որ մեր երկիրը հարուստ է գեղեցիկ ձայներով: Կարեւորն այն է, որ այդ բնութիւնից տրուած նուէրը ճիշդ նպատակի համար օգտագործուի:

**Նման մտահոգութիւն ունէր նաեւ աշխարհահռչակ կոլորատուրային սոպրանոն եւ մեծ մտաւորականը՝ Գոհար Գասպարեանը... Լինելով նրա վերջին տարիների ամէնօր-**

եայ ընկերն ու զրուցակի-  
ցը յաճախ ներկայ են եղել  
տիկին Գոհարի ուսանող-  
ների հետ ունեցած պա-  
րապմունքներին ու դասե-  
րին եւ միշտ ինձ զարմաց-  
րել է այն, որ այդ մեծու-  
թիւնը, իր բացառիկ տա-  
ղանդով ու օժտուածու-  
թեամբ երբեք իր կշռով չէր  
ճնշում իր ուսանողներին,  
այլ ընդհակառակը՝  
նրանց մղում էր առաջ եւ



առաւելագոյնի... Ասում  
էր. «Եթէ ես կարողացել եմ  
այս արիան կամ այս եր-  
գը այդպէս կատարել, ու-  
րեմն դուք պիտի կարողա-  
նաք...»: Ի՞նչ էր պահան-  
ջում դուք ձեր կատարո-  
ղից, ո՞րն է ձեր ուսուցչու-  
թեան զաղտնիքը:

Միշտ էլ բոլորին յայտնի է  
եղել, որ Գոհարը «բնու-  
թեանը ձեռք չի տալիս»: Դա  
շատ կարեւոր հանգամանք

է: Նոյն կանոնները տեղ են  
գտնում նաեւ իմ դասաւան-  
դելու մեթոդներում: Ինձ  
համար շատ կարեւոր է նա-  
եւ յարգանքը երաժիշտի,  
ստեղծագործութեան, դե-  
րի, դարաշրջանի, համա-  
գործակիցների եւ իհարկէ  
հանդիսատեսի նկատ-  
մամբ:

**Վերջերս ելոյթ ունեցաք  
համերգով, որտե՞ղ էր  
այն, ի՞նչ ծրագրով, ինչ-  
պիսի՞ն էին տպաւորու-  
թիւնները...**

Վերջին ժամանակաշր-  
ջանը բաւական ծանրա-  
բեռնուած էր համերգնե-  
րով: Կիպրոսի սիմֆոնիկ  
նուագախմբի եւ Օբսֆոր-  
դից յատուկ հրաւիրուած  
երգչախմբով ելոյթներ ու-  
նեցանք Կիպրոսի տար-  
բեր քաղաքներում՝ ներկա-  
յացնելով Հայդնի «Արա-  
բում» օրատորիան: Հե-  
տագայում հանդէս եկայ  
մենահամերգներով, կա-  
տարելով ռուս երաժիշտ-  
ների ստեղծագործութիւն-  
ները: Ծրագրի մէջ մաս էին  
կազմում Չայկովսկու,  
Ռիմսկի եւ Կորսակովի,  
Ռախմանինովի արիա-  
ներն ու ռոմանսները:  
Տպաւորութիւնների մասին  
նախընտրում եմ հանդի-  
սատեսը խօսի:

**Ինչպիսի՞ն պէտք է լինի  
իրապէս օժտուած կատա-  
րողը՝ ըստ Սօնա Գարգա-  
լյեան երգչուհու, որպէս-  
զի կարողանայ մնալ իր  
ժամանակի եւ եկող ժա-  
մանակների մէջ սիրելի եւ  
ընդօրինակելի, քանի որ,  
մնայուն լինել երգար-  
ւեստում՝ այդքան էլ հեշտ  
չէ, ինչպէս ասենք գրակա-  
նութեան մէջ գրողները,  
գեղարուեստի մէջ նկա-  
րիչները եւ այլն...**

ԱՐԱՐՈՂ, ԱԶՆԻԻ ԵՒ  
ԽՈՆԱՐՀ:

**Մի առիթով Գոհար Գաս-  
պարեանին լրագրողնե-  
րից մէկը այսպիսի հարց  
է տալիս. «Գոհար Միխա-  
շիլովնա, ի՞նչ կը վերցնե-  
իք դուք ձեզ հետ եթէ  
յայտնուէիք անմար-  
դաբնակ կղզում...»: Տի-  
կին Գոհարը, իրեն յա-  
տուկ լրջութեամբ պա-  
տասխանել էր. «Նոտա-  
ներս, թելերս՝ հիւսելու  
համար եւ եթէ գտնուէին  
ջենտլմեն տղամարդիք՝  
դաշնամուրս տեղափոխե-  
լու համար, ապա՝ ռո-  
յալս... Ի՞նչ կը վերցնէիք  
դուք:**

Նոտաներս, որոնց մէջ կան  
նաեւ Գոհարից նուէր ստա-  
ցած եւ մակագրուած նո-  
տաներ, ձայներիզներս,  
որոնց մէջ կան նաեւ իր  
անկրկնելի կատարումնե-  
րը: Իսկ եթէ իսկապէս  
ջենտլմեններ գտնուէին,  
ապա ես էլ դեմ չէի լինի ռո-  
յալս տեղափոխելու...

**Տիկին Գարգալյեան,  
շնորհակալութիւն հաճելի  
գրոյցի համար եւ ես մէկ  
անգամ լոյս անմահներին,  
որոնցից էր Հայոց Սոխա-  
կը, ով չափանիշ է հայ դաս-  
կան կատարողական ար-  
ուեստում եւ եզակի երե-  
ւոյթ համաշխարհային եր-  
գարուեստի կատարողա-  
կան ասպարէզում:**

**Շնորհակալութիւն նաեւ  
«Ազատ Օր»-ին այս հա-  
ճելի առիթի համար, ու  
նաեւ դասական արուես-  
տի ռահվիրաներին ու այդ  
ջահը վառ պահողներին  
անդրադառնալու համար:  
Բարին՝ բոլորիս...**

\*Արմինէ Մելիք Իսրայէլեան  
արուեստաբան, /ԽՍՀՄ  
ժողովրդական արտիստու-  
հի Գոհար Գասպարեանի  
կենսագիրն է  
(«Ազատ Օր»-ին համար  
Երեւան- Կիպրոս-Աթէնք)



# ՏԱՐԵԴԱՐՁՆԵՐ - ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ

1650ամենակ Մեսրոպ Մաշտոցի ծննդեան  
 500ամենակ Ղայկական Տպագրութեան  
 (500ամենակ հայերէն առաջին գիրքի՝  
 «Ուրբաթագիրք»ի հրատարակութեան)  
 420ամենակ Նահապետ Քուզակի ծննդեան  
 290ամենակ Սայաթ Նովայի ծննդեան  
 250ամենակ Եզնիկի «Եղծ Աղանդոց»ի  
 րպագրութեան  
 195ամենակ Այվազովսկիի ծննդեան  
 190ամենակ Ծերենցի ծննդեան  
 170ամենակ Սրբուհի Տիսարի ծննդեան  
 155ամենակ Գուսան Շերամի (Գրիգոր Տալեան)  
 ծննդեան  
 155ամենակ Վարազայ վանքի ժառանգաւորաց  
 վարժարանի բացման  
 155ամենակ Ներսէս Աշտարակեցի Կաթողիկոսի  
 վախճանման  
 150ամենակ հայասեր Լինչի ծննդեան  
 150ամենակ Զէյթունի Ա. ապստամբութեան  
 145ամենակ Նար Դոսի (Միքայէլ  
 Յովհաննիսեան) ծննդեան  
 140ամենակ Պետրոս Դուրեանի մահուան  
 135ամենակ Դերենիկ Դեմիրճեանի ծննդեան  
 125ամենակ Ս.Դ.Ն.Կուսակցութեան հիմնադրման  
 115ամենակ Խանասորի արշաւանքի  
 115ամենակ Եղիշէ Զարենցի ծննդեան (մահուան  
 75ամենակ)  
 110ամենակ հայագէտ Արսէն Այրբնեանի  
 մահուան  
 110ամենակ Կարա Մուրզայի մահուան  
 105ամենակ գեղանկարիչ Գառգուի ծննդեան  
 105ամենակ Գէորգ Չաուշի նահապարկութեան  
 105ամենակ Խրիմեան Ղայրիկի վախճանման  
 100ամենակ Ղազարոս Աղայեանի մահուան  
 100ամենակ Գաբրիէլ Մունդուկեանի մահուան  
 100ամենակ Եփրեմ Խանի մահուան  
 100ամենակ հայ սկաուրութեան սրբեղծման  
 90ամենակ Ինքրայի մահուան  
 90ամենակ Կիլիկիոյ հայերէ դարարկման  
 90ամենակ Իզմիրի հայութեան ջարդի  
 90ամենակ Ճեմալ Ազմիի եւ Պէհաէտրպին Շաքիրի

ահաբեկման  
 90ամենակ Զեմալ փաշայի ահաբեկման  
 85ամենակ Անդրանիկի մահուան  
 85ամենակ Յրօնքցի Մուրադի մահուան  
 80ամենակ Լէոյի մահուան  
 75ամենակ Ալսեյ Բակունցի մահուան  
 65ամենակ Նամօ Օհանջանեանի մահուան  
 65ամենակ Նիկոլ Աղբալեանի մահուան  
 65ամենակ բանասէր Սրբեփան Մալխասեանի  
 մահուան  
 60ամենակ պարմարան եւ բանասէր Յակոբ  
 Մանանդեանի մահուան  
 60ամենակ Գարեգին Ա. Յովսէփեանց  
 կաթողիկոսի վախճանման  
 60ամենակ Արամ Անտոնեանի մահուան  
 60ամենակ Գասպար Իփէկեանի մահուան  
 55ամենակ Շաւարշ Միսաքեանի մահուան  
 55ամենակ Աւերիք Իսահակեանի մահուան  
 50ամենակ հայագէտ Արշակ Ալպոյաճեանի  
 մահուան  
 50ամենակ Մալխասի մահուան  
 45ամենակ Բարսեղ Կանաչեանի մահուան  
 45ամենակ Ծիծեռնակաբերդի յուշարձանի  
 կառուցման  
 40ամենակ Մարտիրոս Սարեանի մահուան  
 40ամենակ Նիկողոս Սարաֆեանի մահուան  
 40ամենակ Յակոբ Տէր Մելքոնեանի մահուան  
 40ամենակ Արուր Գապագեանի մահուան  
 35ամենակ Կարօ Սասունիի մահուան  
 30ամենակ Աբօ Աշճեանի առեւանգման  
 30ամենակ Նամբիկ Սասունեանի  
 բանարկութեան  
 25ամենակ Երոպական Խորհրդարանի կողմէ  
 Ղայկական Յեղասպանութեան բանաձեռի  
 որդեգրման  
 20ամենակ Ղայաստանի ՄԱԿ-ի  
 անդամակցութեան  
 20ամենակ Շուշիի ազատագրման  
 15ամենակ Մինաս Թէօլէեանի մահուան  
 15ամենակ Լեւոն Վարդանի մահուան  
 10ամենակ Նանրի Վերնոյի մահուան

# Ննագի փրական նոր պեղումներ Նայասփանի մէջ

Վերջերս Նայասփան կը գրնուի հնագէտներու ուշադրութեան կեդրոնին: Այլ հնավայրերու կարգին, կը շարունակէ մեծ հետաքրքրութիւն ներկայացնել Վայոց Ձորի մարզի «Արենի -1» քարայրը, ուր յայտնաբերուած էին 6000 տարուան վաղեմութեան կօշիկը եւ կանացի ծիսական հագուստի մաս կազմող ծղօփէ գործուածք մը: Արտասահմանի փարրալուծարաններու մէջ կատարուած հետազոտութիւնները հաստատեցին հայ գիտնականներու այն վարկածը, որ այդ կարուածքը Ն. Ք. չորրորդ հազարամեակի սկզբի հնաժող մըն է:

Ներկայիս «Արենի 1» քարայրի մէջ պեղումները կը շարունակուին ու հնագէտներ կը պեղեն մասնաւորաբար քարայրի շրջակայքը, քանի որ ըստ երեւոյթին, քարայրը փեղոյն բնակչութեան բնակատեղիին չէ եղած: Ննագի փրական աշխատանքներ կը կատարուին նաեւ հայոց հնագոյն մայրաքաղաքներու, մասնաւորաբար Արտաշատի, Երուանդաշատի, Արմաւիրի ու Դուինի փարածքներուն մէջ:

Արտաշատի մէջ պեղուած է հսկայական հասարակական բաղնիք մը, որ ուշագրաւ է իր կրկնայարկ կառուցուածքով, բացուած են ջեռուցող յարակի խողովակաշարեր: Արմաւիրի մէջ արշաւախումբը բացաւ Վանի թագաւորութեան յաջորդող շրջանի փառարկ հիմեր՝ պատերու ծիծեռնակապոչ շարուածքով: Արիկա վերստին կը հաստատէ, որ Արմաւիր դարեր շարունակ սրբափեղի մը եղած է: Ներկայիս Երուանդաշատի մէջ պալա-



փական համալիր մը կը պեղուի, բացուած են նաեւ շարքաւ պահպանուած կարասային սրահներ: Միսիան, Աղիփու գիւղի մէջ ալ հայ հնագէտներ, գերմանական արշաւախումբի մը հետ միասին, գրած են հնագոյն կենցաղին առնչուող շերտեր: Ներկայիս հնագիտական աշխատանքներ կը կատարուին նաեւ Արարատեան դաշտի Ակնաշէն գիւղին մերձակայքը:

Եւրոպական արժէքները փակաւին 1500 տարի առաջ կը գործէին Արցախի մէջ Վերջին փարիներուն «նորածնութիւն» է եւրոպական արժէքները քարոզել Նայասփանի մէջ: Մինչդեռ, փորձառութիւնը ցոյց կուտայ, որ այդ արժէքներու քարոզիչները պարզապէս անփեղեակ են սեփական ժողովուրդի քաղաքական ու իրաւական ժառանգութենէն: Նախապէս ըսենք, որ «եւրոպական քաղաքակրթական

համակարգ» կոչուած գաղափարախօսութեան առանցքային սկզբունքներն են մարդու իրաւունքներու գերակայութիւնը, իշխանութիւններու փարանջատումը, քաղաքացիական հասարակութեան առկայութիւնը, եւլն.: Ուշադրութիւն դարձնենք հայ ժողովուրդի պեպտութեան ու իրաւունքի պատմութեան վրայ: Տակաւին 1500 տարի առաջ, 500-ականներու սկզբին, Արցախի եւ Ուրիքի թագաւոր Վաչագան Բարեպաշտի նախաձեռնութեամբ ընդունուեցաւ Սահմանադրութիւն մը, որու 1288-ին արտագրուած փարբերակը մինչեւ այսօր ի պահ կը մնայ Մարենադարանին մէջ: Սկզբնական շրջանին Սահմանադրութեան նախագիծը կը դրկուի զանազան բնակավայրեր, ուր հաւաքներ եւ քննարկում-



ներ կը կազմակերպուին, բնակչութիւնը իր համաձայնութիւնը կուտայ, որմէ վերջ թագաւորը համապետական մեծ համագումար մը կը գումարէ եւ արկէ երբ է, որ միայն հանրաքուէով կ'ընդունի Սահմանադրութիւնը: Իսկ

աւելին՝ համագումարը կը վարէր շարքային զինուոր մը: Այս մօտեցումները 800-1000 տարի վերջ միայն երեւան եկան Եւրոպայի մէջ: Նայկական առաջին Սահմանադրութեան առկայութիւնը եւ կարելիութիւնը դժբախտաբար, փակահին լիարժէք կերպով չ'ընկալուիր հասարակութեան կողմէ: Այդ բացը լրացնելու նպատակով անցեալ տարի հրատարակուեցաւ «1500-ամեայ իրաւակարգի ակունքները Արցախի մէջ» գիրքը, երեք լեզուներով: Այժմ գործարարներ Արմէն Դալթեանի ու Մովսէս Զարեանի նախաձեռնութեամբ Սրելիանակերպի մէջ պիտի կանգնեցուի Վաչագան Բարեպաշտի արձանը, որու գծագրութիւնը արդէն պատրաստ է, իսկ բացումը նախատեսուած է 2012-ին: Նայկական առաջին Սահմանադրութիւնը կը վկայէ այն մասին, որ եթէ հայ պետականութեան բնականոն զարգացումը 600-700 տարիով չընդհատուէր, թերեւս հայ ժողովուրդը կ'ըլլար շոգեշարժը այն արժէքներուն, որոնք այսօր արեւմտեան ժողովրդավարութեան հիմքերը կը կազմեն:

## Օտար աղբիւրները Հայաստանի մասին

Մեր թուարկութեան IX դարու մէջ, Անգլիոյ տիրակալ Ալֆրետ Մեծի հրամանով, կը կազմուէր «Անգլո-սաքսոնական ժամանանագրութիւն» աշխատութիւնը, որ իր մէջ կը ներառէր գոյութիւն ունեցող ծանօթ փաստեր: Այդ աշխատութեան մնացած են ինը ծեռագրեր, որոնք առաջին իսկ էջին վրայ պարզ գրուած է.-

«Բրիտանիա կղզին ունի 800 մղոն երկարութիւն եւ 200 մղոն լայնութիւն: Այդ կղզիին մէջ կ'ապրին հինգ ազգութիւններ՝ անգլիացիներ, վալիացիներ (կամ բրիտներ), սքոտներ, պիկտներ եւ լատինացիներ: Կղզիի առաջին բնակիչները եղած են բրիտները, որոնք եկած են Հայաստանէն եւ առաջին ժողովուրդը եղած են որ վերաբնակած են Բրիտանիոյ հարաւը»: XIX դարու առաջին կիսուն անգլիացի գիտնա-

կան ճեմս Ինգրեմը բացառի թարգմանած է վերոյիշեալ աշխատութիւնը ժամանակակից անգլերէնով եւ նոյնութեամբ մտքերած է նշուած կարելորագոյն տողերը: Սակայն թարգմանութիւնը լոյս տեսած է աւելի ուշ, որուն կցուած է մէկ այլ «գիտնականի» տողքոր ճայլիսի նոր մեկնաբանութիւնը: Վերջինս, չհաւատալով, որ «բրիտները եկած են Հայաստանէն» կարծիք յայտնած է, թէ «երեւի IX դարու հեղինակները թոյլ տուած են որ վրիպակ մը տպագրուի եւ «Արմորիկա» բառի փոխարէն, սխալմամբ, գրած են «Արմենիա», այսինքն՝ Հայաստան»...:

Մեկնաբանի այս կարծիքը բաւական էր, որ հետագային «Անգլո-սաքսոնական ժամանակագրութիւն» հրատարակութեան մէջ միտումնաւոր կերպով կեղծուին բնագիրները եւ իրենց հրատարակութիւններուն մէջ նշուի, թէ՛ «բրիտները եկած են Ար-



«Նոյի ծառը»  
Աստուածաշունչ,  
1599, Լոնտոն


մորիկայէն», նոյն պահուն խիստ լռութեան մատնելով այն վարկածը, թէ այս մեկնաբանութիւնը կատարուած է XIX դարուն

մէջ: Ի՞նչ կը նշանակէ սակայն այս կեղծիք է, խաբէութիւն... Բնագիրը, որ գրուած է IX դարուն, սուրբերու շարքը դասուած յայտնի պատմահայր Բեդի կողմէ, կը տեղեկացնէ.- «Կղզիի առաջին բնակիչները եղած են բրիտները, որոնք եկած են Հայաստանէն»:

Այս է կարելորը, եւ ոչ թէ յաջորդ դարու մեկնաբանի կարծիքը:

Եթէ այս փաստերը չեն բաւարարէր ժամանակակից անգլիացիներուն, ապա բերենք մէկ յիշարժան վկայութիւն եւս: 1599ին Անգլիայի մէջ, իրենց իսկ կողմէ հրատարակուած Սուրբ Գիրքը:

ԵՆՐԻ ՍԱՐԳՍԵԱՆ



Բրիտանիա կղզիի առաջին բնակիչները եղած են բրիտները, որոնք եկած են Հայաստանէն եւ առաջին ժողովուրդը եղած են, որ վերաբնակած են Բրիտանիոյ հարաւը



# Հայաստան՝ իմաստութեան խաղին լաւագոյն ներկայացուցիչը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՏՐԱԿԻ ԽՈՒՄԲԸ 2011ԻՆ ՆՈՒԱՃԵՑ**

**ԱՇԽԱՐՀԻ ԽՄԲԱՅԻՆ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՏՂՈՍԸ**

Ճափրակի 37րդ ողիմպիականին աշխարհի ախոյեան հռչակուելէ հինգ փարի ետք, 26 Յուլիս 2011ին, Հայաստան անգամ մը եւս նուաճեց իմաստութեան խաղին աշխարհի լաւագոյն ներկայացուցիչի փիպոլոսը, երբ 5 յաղթանակով եւ 4 հաւասարութեամբ իր անունը արձանագրեց ճափրակի ոսկեմաքեանին մէջ: Չինաստանի Նինկայօ քաղաքին մէջ փեղի ունեցած աշխարհի խմբային Տրդ ախոյեանութեան, Հայաստան ներկայացաւ հզօր կազմով մը, որուն մասնակցեցան Սերգէյ Մովսիսեան, Վլատիմիր Յակոբեան, Լեւոն Արոնեան, Գաբրիէլ Սարգսեան եւ Ռոպերթ Յովհաննիսեան:

**26** Յուլիս 2011ը շնչասպառ ըրաւ աշխարհասփիռ հայութիւնը, որ ակնդէտ հետեւեցաւ Հայաստան-Ուքրաինա ճակատումին: Չորս հաւասարութիւններ Լեւոն Արոնեանի, Սերգէյ Մովսիսեանի, Վլատիմիր Յակոբեանի եւ Գաբրիէլ Սարգսեանի կողմէ 2-2 արդիւնք մը պարտադրեցին Ուքրաինոյ (որ մրցումի վերջին հանգրուանի Հայաստանի մրցակիցն էր) եւ տիտղոսը առաջին անգամ ըլլալով շնորհեցին Հայաստանի: Այն երկրին, որ 1997ին, 2001ին եւ 2005ին տիրացած էր ախոյեանութեան պրոնզէ մետալին, իր հայեացքը սակայն սեւեռած պահելով ոսկիին, առաջնութեան: Հայրենի վարպետները ախոյեանութեան ընթացքին առանձնաբար ապահովեցին հետեւեալ կէտերը.- Սերգէյ Մովսիսեան 6 կէտ (3 յաղթանակ, 6 հաւասարութիւն), Վլատիմիր Յակոբեան 6 կէտ (3 յաղթանակ, 6 հաւասարութիւն), Լեւոն Արոնեան 5 կէտ (3 յաղթանակ, 2 հաւասարութիւն), Գաբրիէլ Սարգսեան 4.5 կէտ (2 յաղթանակ, 5 հաւասարութիւն), Ռոպերթ Յովհաննիսեան 1 կէտ (1 յաղթանակ):



վասանքներով: Բրիտանական հեղինակաւոր «Տը Կարտիըն» թերթը յօդուած մը հրապարակեց ճատրակի գեր-տէրութիւններէն մէկը համարուող՝ Հայաստանի մասին, ուր կը գրէր, թէ Թուրքիոյ եւ Իրանի մէկ անկիւնը գտնուող Հայաստանի համար ճատրակը ազգային մարզածեւ մըն է ու հայ վարպետները կը փայլին իրենց յաջողութիւններով: Յօդուածը թարգմանաբար կ'ըսէր հետեւեալը.- «Խորհրդային նախկին հանրապետութիւնը ուսումնական պարտադիր առարկայ դարձուցած է ճատրակը եւ այդ մարզածեւը որպէս դաս կ'աւանդուի 7-9 տարեկան երեխաներուն: Հայաստան Թուրքիոյ եւ Իրանի մէկ անկիւնը գտնուող պետութիւն է: Երեք միլիոննոց երկրի համար ճատրակը ազգային մարզածեւ է եւ այդ կիրքի առանցքի վրայ են աշխարհի նախկին ախոյեան Տիգրան Պետրոսեանի սխրանքները: Յուլիսին Հայաստանի ազգային խումբը վեց ճատրակի վարպետներով Չինաստանի մէջ նուաճեց աշխարհի խմբային ախոյեանութեան տիտղոսը: Այդ ճատրակի վարպետները հայրենիքի մէջ հերոսավայել կերպով ընդունուեցան ու իւրաքանչիւրը պարգե-

ւր մըն էր հետեւեալը.- «Խորհրդային նախկին հանրապետութիւնը ուսումնական պարտադիր առարկայ դարձուցած է ճատրակը եւ այդ մարզածեւը որպէս դաս կ'աւանդուի 7-9 տարեկան երեխաներուն: Հայաստան Թուրքիոյ եւ Իրանի մէկ անկիւնը գտնուող պետութիւն է: Երեք միլիոննոց երկրի համար ճատրակը ազգային մարզածեւ է եւ այդ կիրքի առանցքի վրայ են աշխարհի նախկին ախոյեան Տիգրան Պետրոսեանի սխրանքները: Յուլիսին Հայաստանի ազգային խումբը վեց ճատրակի վարպետներով Չինաստանի մէջ նուաճեց աշխարհի խմբային ախոյեանութեան տիտղոսը: Այդ ճատրակի վարպետները հայրենիքի մէջ հերոսավայել կերպով ընդունուեցան ու իւրաքանչիւրը պարգե-

լատրուեցաւ 20 հազար տոլարով: Խումբի առաջատարն է 28ամեայ Լեւոն Արոնեանը, որ միջազգային դասակարգման մէջ աշխարհի թիւ 3 ճատրակի վարպետն է»:

Նշենք, որ Հայաստանի պետութիւնը դպրոցներէն ներս կը դասաւանդէ ճատրակի խաղը՝ հաւատալով, թէ նոր սերունդի բնաւորութիւնը ձեւաւորելու ամենալաւ միջոցներէն է: Նպատակը ախոյեաններ պատրաստել չէ, այլ պատասխանատու եւ կազմակերպուած կեցուածք ձեւաւորել:

Հայաստանի փորձառութիւնը շատերու ներշնչած է եւ որպէս օրինակ կը բերուի այլ երկիրներու մօտ: Ճատրակի դասաւանդութեան համար երկրի ճատրակի ակադեմիային յատկացուած է կէս միլիոն տոլար, ուսումնական ծրագիրը մշակելու, դասագիրքեր պատրաստելու, ճատրակներ գնելու եւ ուսուցիչներ պատրաստելու համար: Կէս միլիոն տոլար ալ յատկացուած է ճատրակային դասարաններու ու գոյքերու համար: Հայաստանի մէջ ծնողները համամիտ են, թէ ճատրա-



կը լաւ միջոց է երեխաներու զարգացման համար: «Նոյնիսկ եթէ անոնք վարպետներ չդառնան, ճատրակը կը սորվեցնէ տրամաբանել եւ ստեղծագործել, իսկ ատոնք անհրաժեշտ որակներ են կեանքի մէջ», - կ'ըսեն անոնք: Ճատրակի ամերիկեան հիմնադրամի գործադիր տնօրէն Վենտի Ֆիշըրը յայտնեց, թէ արշաւի մը ձեռնարկած է ամերիկեան դպրոցներուն մէջ ճատրակը պարտադիր դասանիւթ դարձնելու համար: Իր խօսքերուն համաձայն, Հայաստան մեծ ներուժ ունի այս բնագաւառէն ներս:

## 2011-ի կարեւորագոյն մարզական իրադարձութիւնները

Ճատրակի աշխարհը չէր միայն, որ փայլուն յաջողութիւններ արձանագրեց 2011ի ընթացքին: Տեսնենք մնացեալ մարզածեւերն ալ, ուր հայրենի մարզիկները յաջող արդիւնքներ կարողացան ձեռք ձգել.-

- Ֆութպոլի 2012-ի Եւրոպայի բաժակի գտումի մրցաշարքէն ներս, Հայաստանի ազգային խումբը առաջին անգամ ըլլալով մինչեւ վերջ պահպանեց ենթախումբը յաղթահարելու կարելիութիւնը: Բ. ենթախումբի մէջ Հայաստանի խումբը Ռուսաստանի, Իրլանտայի, Սլովակիոյ, Սքոթիայի եւ Անտորրայի խումբերու հետ պայքարի մէջ 5 յաղթանակ ապահովեց, երկու հանդիպումներ հաւասարութեամբ վերջացան եւ երեք մրցումներ ալ պարտութեամբ: Հայաստանի ազգային խումբը 17 միջով երրորդ հանդիսացաւ: Տակլիմի մէջ կայացած վերջին խաղի ընթացքին, սպանացի մրցավար Իտուարլտէ Կոնզալէսի խայտառակ մրցավարութեան պայմաններու մէջ,



Հայաստանի խումբը 1-2 արդիւնքով պարտութիւն կրեց Իրլանտայի խումբին դէմ եւ զրկուեցաւ անցումային հանդիպումներուն մասնակցելու իրաւունքէն: Հայաստանի խումբը գտումի մրցաշարքի մէջ ամենարդիւնաւէտ խումբերէն մէկն էր եւ 22 կոլ արձանագրած էր հակառակորդ խումբերու բերդերուն մէջ:

- Առաջին անգամ ըլլալով Հայաստանի մէջ արհեստավարժ կռփամարտի ախոյեանութեան մրցում մը ունեցաւ Վիք Տարչինեան: Ան 12 ռաունտի մէջ յաղթանակ տարաւ հարաւ-ափրիկեցի Էվան Մպամպայի դէմ եւ պահպանեց միջազգային վարկով աշխարհի ախոյեանութեան գօտին թեթեւագոյն-

ներու դասաւորման մէջ:

- Ընթացմարտի աշխարհի ախոյեանութիւնը 2011-ին կայացաւ Պոլսոյ մէջ: Հայաստանի ազգային խումբը մէկ մետալ նուաճեց: Յունահռոմէական ոճի ըմբիշ Արսէն Ջուլֆալաքեան երրորդ հռչակուեցաւ, իրմէ գատ, ողիմպիական ուղեգիր նուաճեց նաեւ ազատ ոճի ըմբիշ Միհրան ճապուրեան, որ 5-րդ հանդիսացաւ:

- Պաքուի մէջ կայացաւ կռփամարտի աշխարհի ախոյեանութիւնը եւ Հայաստան ձեռնունայն վերադարձաւ հոնկէ: Միակ ողիմպիական ուղեգիր մը նուաճուեցաւ. 75 քկ. դասաւորման մարզիկ Անդրանիկ Յակոբեան հասաւ քառորդ

եզրափակիչ եւ ցարդ հայ միակ մարզիկն է, որ իրաւունք շահած է մասնակցելու 2012-ի Լոնտոնի ողիմպիականներուն:

Հայաստանցի մարզիկները Պաքուի մէջ հանդէս եկան հոգեբանական ճնշումի ներքեւ: Անոնց ամէն մէկ մրցումին հանդիսականները կ'ընկերակցեցին սուլոցներով ու վիրաւորական արտայայտութիւններով: Մրցումներէն մէկու ընթացքին «Դարաբաղի ազատագրման կոմիտէի»-ի անդամները քարեր նետեցին ռիմկի ուղղութեամբ: Հայաստանի ու Ռուսաստանի ազգային խումբերը Պաքուի մէջ տեղակայուած էին միւս խումբերէն անջատաբար եւ անոնց անվտանգութեան վրայ կը հսկէին ոստիկանները: Ռուսաստանի խումբն ալ վտանգի տակ էր, որովհետեւ հոն հանդէս կուգային երկու հայազգի մարզիկներ՝ Միշա Ալոյեան եւ Դաւիթ Կարապետեան: Ի դէպ Միշա Ալոյեան աշխարհի ախոյեան հռչակուեցաւ, միակ ոսկեայ մետալը բերելով Ռուսաստանի խումբին:

# Դրամատուներու դրամաբաշխ սարքի (ATM) գիտարարը՝ Լուտեր ճորճ Սիմճեանն է

Յոկտեմբեր 23-ին, 14 տարի առաջ, Միացեալ Նահանգներու մէջ, 94 տարեկանին մահացաւ հայ ժողովորդի անուանի գաւակներէն Լուտեր ճորճ Սիմճեան, որ իբրեւ գիտարար-հնարիչ կարելոր տեղ կը գրաւէ ամերիկացի հռչակաւոր դէմքերու ոսկեմատեանին մէջ: Գարտարագիտական մարզէն ներս աւելի քան 200 գիտերու հեղինակային իրաւունքը կը պատկանի Լուտեր Սիմճեանի: Բժշակական լուսանկարչական համակարգեր, լուսանկարչական ինքնաֆոկուսաւորուող խցիկ, ինքնաշխատ (automatic) երեւակման սարք, ռազմական թռիչքներու խթանիչ (stimulator), փոստային սակագիներու հաշուիչ եւ նմանօրինակ բազում գործիքներու հնարիչը եղաւ հայազգի այս հնարամիտ գիտարարը: Յատկապէս դրամաբաշխ սարքի՝ ATM-ի (Automated Teller Machine) գիտը կը պատկանի Սիմճեանի, որ իր հնարած հանրայայտ «Պանքմաթիք»-ով (Bankmatic) ռահվիրան եղաւ մեր ժամանակներու ամէնէն ընդհանրացած դրամատնային այդ գործիքի ստեղծման ու կատարելագործման:

Լուտեր ճորճ Սիմճեան (Luther George Simjian) ծնած էր 1905 թուի 30 նոյար 28-ին, Կիլիկիոյ հայաշատ Այնթապ քաղաքին մէջ: 1915-ին թրքական պետութեան գործադրած ցեղասպանութենէն վերապրած տարագիր հայերուն հետ Սիմճեանները եւս յայտնուեցան Պէյրութի մէջ, ուր կարճ շրջան մը ապրելէ ետք՝ Լուտեր անցաւ Մարսէլ, Ֆրան-

սա, ուրկէ 1920-ին տեղափոխուեցաւ Մ. Նահանգներ:

15 տարեկան հասակին հաստատուելով Մ. Նահանգներ՝ Քըննէքքիքըք նահանգի Նիւ Յեյվըն քաղաքին մէջ, պատանի Լուտեր կեանքի ասպարէզ նետուեցաւ իբրեւ լուսանկարիչ: Միաժամանակ բժշկութիւն ուսանեցաւ Եյլ համալսարանին մէջ (Yale School of Medicine), մասնագիտանալով իբրեւ լուսանկարչական տարրալուծարանի գիտաշխատող: Տարրալուծարանային լուսանկարիչի իր աշխատանքի տարիներուն, նուիրուեցաւ բժշկութեան ուսումնասիրութեան:

1928-ին նշանակուեցաւ միւլեւոյն համալսարանի լուսանկարչական բաժանմունքի տնօրէն եւ իրագործեց լուսանկարչական սարքերու կապուած քանի մը գիտեր, ինչպէս օրինակ նկարներու մանրադիտակի լուսարձակը (projector):

1934 թուականին տեղափոխուեցաւ Նիւ Եորք, որ երիտասարդ գիտարար-հնարիչին առջեւ նոր հորիզոններ բացաւ: Լուտերի առաջին կարելոր գիտը եղաւ սեփական դէմքի լուսանկարման մեծ սարքը, որ շատ արագ տարածում գտաւ մեծ հանրախանութներու մէջ, նաեւ՝ առիթը ընծայեց հայ գիտարարին, որպէսզի հիմնէ Photoreflex ընկերութիւնը, մեկնելով իր հնարած համանուն գործիքէն: Յաջողութիւնը այնքան մեծ էր, որ Լուտեր Սիմճեան իր գիտին հեղնակային իրաւունքը եւ համանուն ընկերութիւնը վաճառեց: Շուտով հիմնեց նոր ընկերու-



թիւն մը՝ Reflectone անունով, որպէսզի հրապարակ իջեցնէ միւլեւոյն անունը կրող նոր սարք մը՝ դարձող հայելիներով օժտուած բազկաթռմը, որուն վրայ բազմողը ի վիճակի պիտի ըլլար իր սեփական մարմինը դիտելու բոլոր անկիւններէ:

1939 թուականին Սիմճեանի մօտ առաջացաւ կանխիկ դրամ տրամադրող ինքնաշխատ սարքի (Automated Teller Machine- ATM) ստեղծման գաղափարը: Թէեւ դրամատուները թերահաւատութեամբ ընդունեցին դրամ տրամադրող մեքենայ ունենալու գաղափարը եւ հազիւ վեց ամիս փորձարկեցին Սիմճեանի գործիքը, այսուհանդերձ՝ ան շարունակեց աշխատիլ իր գործիքի կատարելագործման վրայ: Մինչեւ 1960 ապահովեց 20 արտօնագիր՝ կատարելագործելով Banmatic սարքը եւ հիմք ստեղծելով այսօրուան թղթադրամ տրամադրող գործիքներուն համար: 1965-ին ան հնարեց նաեւ միւլեւոյն գործիքի մետաղադրամ տրամադրող սար-

քը: Լուտեր Սիմճեան առեւտրական մեծ յաջողութիւն ունեցաւ Երկրորդ Աշխարհամարտի ընթացքին, երբ գիտը ըրաւ ռազմական թռիչքներու սիմուլէթրին՝ Optical Range Estimation Trainer-ին, որ կ'օգտագործուէր Մ. Նահանգներու ռազմական օդաչուներու մարզումներուն ժամանակ՝ գնահատելու համար օդանաւային կազմածներու արագութիւնն ու միջտարածութիւնը: Սիմճեանի հնարած գործիքը բաղկացած էր հայելիէ, լոյսի աղբիւրէ եւ փոքր սալառնակներէ: Սիմճեան իր հնարած գործիքէն աւելի քան երկու հազար օրինակ վաճառեց եւ նիւթական մեծ յաջողութիւն ունեցաւ:

Իր կեանքի վերջալոյսին հայազգի գիտարարը հաստատուեցաւ Ֆլորիտա՝ Ֆորթ Լօւըրտէյլ (Fort Lauderdale), ուր հիմնեց իր սեփական մեծ տարրալուծարանը եւ մինչեւ 92 տարեկանը աշխատեցաւ նոր գիտերու հնարման վրայ: Իր մահկանացուն կնքեց 23 Յոկտեմբեր 1997-ին:

Ն. Պ.